

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ



ՄԱՐԿԵՏԻՆԳ

ՍՈՒՐԻ ՅԱԿՈԲ ՀԱՅՅ. ԱՌԱՔ. ՄԱՅՐ
ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ
ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹ 1999 - 2000

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Եկուր, սիրելի ընթերցող,
Պահ մը մոռնանք աշխարհը:
Մոռնանք մեզ իրարմէ բաժնող բոլոր խոչընդոտները:
Փլենք Ես-ին բոլոր պատերը,
Լայցցնենք նեղմիտ սահմանումներու կաղապարները,
Անցնինք միւս կողմ...
Աստուծոյ Թագաւորութեան իրագործման անդամներն ըլլանք:

Պահ մը եկուր, նախ առանձնանանք,
Մոռնանք աշխարհը:
Թօթափենք առօրեայի ծանր փոշին,
Ծնորհքի լոգանքէն ետք
Անցնինք այդ առանձնութենէն անդին,
Միանանք Մէկին՝ Աստուծոյ կամքին
Ու հիւծուինք անոր մէջ:

Ընդունինք Զինք խոնարհութեամբ...
Ընդունինք մեր դրացին խոնարհութեամբ...
Ընդունինք մենք զմեզ խոնարհութեամբ:

Յիշենք որ բոլորս ալ միեւնոյն Եկեղեցոյ՝
Քրիստոսի մարմնի անդամներն ենք,
Մեր ձիրքերով, տկարութիւններով:
Եթէ թմրած անդամներ կան,
Կազդուրե՛նք զանոնք
Մեր օրինակով եւ սիրով:
Եթէ անհամբեր ու հպարտ անդամներ կան,
Աղօթենք որ յիշեն թէ Եկեղեցոյ գլուխը իրենք չեն,
Այլ՝ Քրիստոս Ինք:

Հաղորդուինք Ճշմարտութեան լոյսով... ու
Վերադառնանք աշխարհ:
Վերադառնանք հաւատքով զինուած,
Յոյսով թեթեւցած,
Սիրով լուսաւորուած:
Վերադառնանք աշխարհ
Ու բանանք մեր դռները:
Մեր մէջ վերակենդանացած լոյսը վառ պահելով
Յոյս ներշնչենք մեր շրջապատին ու՝ կեանք:

Շնորհակալութիւն յայտնենք բոլոր անոնց որոնք սկսան, կամ շարունակեցին լսելի-ընթեռնի դարձնել «Մաշտոցի Արձագանգ»ը իր ծննդեան օրէն ասդին:

Այդ անուններու ցանկին մաս կը կազմեն. Օրդ. Հուրի Զարգաւատճեան, Պրն. Ճօրճ Քէպապճեան, Պրն. Սեւակ Ապտալեան, Պրն. Անդրանիկ Քէպապճեան, Պրն. Թոնի Քէպապճեան, Օրդ. Մարօ Տէմիրճեան, Տիկ. Վիքի Զարգաւատճեան, Տիկ. Շողիկ Նաճարեան, Օրդ. Յասմիկ Նաճարեան, Պրն. Թորոս Պապիկեան, Պրն. Սիմոն Գոյումճեան եւ Պրն. Ժան Նազիկեան:

Իսկ Կիրակնօրեայ Դպրոցիս քսանամեակին առիթով լոյս տեսնող այս թիւին պատրաստութեան իրենց բերած օժանդակութեան համար մասնաւոր շնորհակալութիւն կը յայտնենք Օրդ. Մարիա Քէօսէեանի, Պրն. Անդրանիկ Քէպապճեանի, Պրն. Սիմոն Գոյումճեանի, Պրն. Ժան Նազիկեանի, Օրդ. Յասմիկ Նաճարեանի եւ Պրն. Թորոս Պապիկեանի:

Բարի ընթերցում:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական	1
Բովանդակություն	3
Նամակ Առաջնորդին	4
Քրիստոսով Ապրուած Կեանք	6
Ծնորհաւորական Նամակ	7
Փառք Տէրութեան Քո Տէր	8
Մեր Խօսքը	10
Քսանամեայ Վաստակով	11
Ծնորհաւորություն	12
Հակիրճ Տեղեկագիր	13
Յիսնամեայ Առաքելութեան Մասին	17
Քրիստոնէական Դաստիարակությունը Հայց. Եկեղեցւոյ Մէջ	19
Աղօթքի Լեզուն	28
20 Տարիներու Տեղեկագրեր	31
20 Տարիներու Ներկայութեան Պատկեր	41
20 Տարիներու Ուսուցչական Կազմ	42
Տնօրէններու Խօսքերը	43
Մաշտոցի Արձագանգ	47
Ողջոյնի Խօսք	
Կիրակնօրեայի Ակիզբ	
Ի՞նչ է Ծոմապահութիւնը եւ Ողջոյնի Զեւեր	
Իմաստուն եւ Գոհար Խօսքեր	
Աղօթքի Մասին	
Սուրբ Յակոբ Մօքնայ Հայրապետը	
Վալանթին Ապտալեան	
Յուշեր	57
Մարմնային Արտաշայտութեան Տուեալներ	58
Մաղթանքս	60
Հունձքն ու Մշակը	62
Հարցումներ եւ Մտորումներ	65
Հայ Կինը	68
Գովերգ Հայ Եկեղեցւոյ	70



ԱԶԳԱՅԻՆ ԱՊՈՍՏՈՐԴԱՐԱՆ
THE ARMENIAN PRELACY

Մայիս 26, 2000
Թիւ 277/00

Մեծայարգ
Տիար Թորոս Պապիկեան
Տնօրէն Ա. Յակոբ Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցի
Մոնրէալ.

Սիրելի Պրն. Պապիկեան,

Ուրախութեամբ իմացանք Ձեզմէ, որ այս տարի 20ամեակն է Ա. Յակոբ Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցին:

Կիրակնօրեայ Դպրոցը սփիւտահայ մեր կեանքին մէջ այն անհրաժեշտ հաստատութիւնն է, որ պաշտօնական կոնդակով մը երջանկայիշատակ Տ.Տ. Սահակ Բ. Խապայեան եւ Աթոռակից Տ.Տ. Բարգէն Կիլիսէրեան Կաթողիկոսները հիմնադրեցին: Երանաշնորհ Հայրապետները լաւագոյնս գիտէին, որ Ապրիլեան Եղեռնի ահաւոր աղետէն ետք երբ Սփիւտի մէջ լինել-չլինելու գոյապայքարը կը մղէինք, ֆիզիքական հացին չափ կարեւոր էր հոգեւոր սնունդը, որով պիտի դաստիարակուէին եւ անէին մեր նորահաս սերունդները: Ճշմարիտ եւ արժանի տեսիլք մը, որուն իրականացումը Սփիւտի մեր գաղութներուն մէջ մեր երեխա-ներուն հոգեւոր, Ա. Գրային եւ Հայ Եկեղեցւոյ ուսում մատակարարեց:

Քանատայի ցամաքամասին վրայ հաստատուած մեր գաղութները գնահատելի կերպով տեսան մեր երեխաներու հոգեւոր դաստիարակութեան նոյն կարիքը: Մոնրէալը դարձաւ առաջինը Կիրակնօրեայ Դպրոց բանալով, ուր ահաւասիկ հարիւրէ աւելի սիրասուն փոքրիկներ կու գան սորվելու Աստուածաշունչը, մեր եկեղեցւոյ պատմութիւնը, սուրբերու կեանքը, շարականներն ու աղօթքները, որպէսզի իրենց կեանքը ըլլայ Աստուծոյ հարազատ պատկերը, իրենց շրթունքի մըմունքը՝ Աստուծոյ խօսքը եւ իրենց փոխ-յարաբերութիւնները արտացոլացնեն քրիստոնէական առաքինութիւնները, Յիսուսի մշտական ներկայութիւնը զգալով:

Այս առիթով բարձրօրէն կը գնահատենք Ձեզ եւ Ձեզի հետ նուիրեալ ուսուցչական կազմը: Թող Աստուած իր շնորհքները առատապէս հեղու ուսուցչական կազմին եւ յատկապէս աշակերտութեան վրայ, որպէսզի շարունակեն տեսարար մնալ այն մամբուն մէջ, որ կը տանի մեզ մեր Աստուծոյ եւ մեր սրբազան հայրերուն:

Այս առիթով կ'օրհնենք նաեւ յիշատակը բոլոր անոնց որոնք ծառայեցին

Մոմրեալի Կիրակնօրեայ դպրոցին եւ այժմ՝ երանութեան մէջ կը ննջեն: Մեծապէս կը գնահատենք Ա. Յակոբ Մայր Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Տ. Արմէն Ա. Քհնյ. Իշխանեանի անձնուէր եւ եկեղեցանուէր ծառայութիւնը, ինչպէս նաեւ հոգարարութեանց ֆաջալերանքը, որոնց շնորհիւ եւ գուրգուրանքին ներքեւ կը յառաջդիմէ Կիրակնօրեայ Դպրոցը:

Վերջապէս, հայրական մեր օրհնութիւնները Ձեզի եւ Ձեզի գործակից ուսուցչական կազմին, աղօթելով Աստուծոյ որ Ձեր բոլորին շնորհէ առողջութիւն, երկար կեանք եւ յաջողութիւն, Ձեր աստուածատուր պարգեւները բազմապատիկ վերադարձնելով Աստուծոյ եւ մեր ժողովուրդին:

Մնամք սիրոյ ողջունիւ եւ օրհնութեամբ՝

Աղօթարար՝



ՕՇԱԿԱՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ

Առաջնորդ Միացեալ Նահանգներու
Արեւելեան Շրջանի եւ Քանադայի

ՔՐԻՍՏՈՍՈՎ ԱՊՐՈՒԱԾ ԿԵԱՆՔ

Սիրելի սան եւ սանուհիներ,

Այսօր Ս. Յակոբ Հայց. Առաքելական Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցը կը բոլորէ իր ծառայութեան քսանամեակը:

Քսան տարիներ շարունակ հայ մանուկներ եւ պարմաններ այս եկեղեցւոյ հովանիին ներքեւ, նուիրեալ ուսուցիչ-ուսուցչուհիներու անսակարկ սիրով ու զոհաբերութեամբը, հոգեւոր սնունդ եւ դաստիարակութիւն ստացան, դառնալու համար առողջ մտքով ու հոգիով հայեր եւ Հայաստանեայց Եկեղեցւոյ՝ հաւատաւոր զաւակներ:

Իբրեւ հայ ժողովուրդի զաւակներ եւ քրիստոնեաներ, դժբախտաբար, յաճախ շատ բան չենք գիտեր մեր ազգային հարուստ մշակոյթին, մեր եկեղեցւոյ սքանչելի պատմութեան եւ քրիստոնէական մեր հաւատքին ու բարձր սկզբութիւններուն մասին: Ս. Յակոբ Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցը կը ջանայ այդ բացը գոցել:

Ծիշդ է, յաճախ դժուար է Կիրակի առաւօտ արթննալ եւ փոխանակ հանգիստի ու խաղերու Կիրակնօրեայ Դպրոց գալ: Բայց պէտք է սորվինք եւ երբեք մտահան չընենք որ կեանքի մէջ բոլոր գնահատելի եւ օգտակար գործերը դիրին եւ աժան կերպով չեն իրականանար, այլ միշտ կը պահանջեն նուիրում, յարատեւութիւն, ճիգ եւ զոհողութիւններ:

Այո, այսօր երբեմն դժգոհութիւն կը յայտնէք, բայց վստահ կրնաք ըլլալ որ Կիրակնօրեայ Դպրոց յաճախելով դուք պիտի ըլլաք տարբեր մարդիկ, տարբեր՝ այն բոլոր անձերէն որոնք իրենց կեանքը անիմաստ եւ աննպատակ ձեւով կ'ապրին ու կը վատնեն:

Կիրակնօրեայ Դպրոցի միջոցով դուք կը ծանօթանաք Աստուծոյ, Անոր հայրական նախախնամութեանը եւ սիրոյն, եւ աւելին՝ կը մտերմանաք Քրիստոսի, կ'իմանաք անոր կեանքն ու իրագործումները, կը սորվիք պատգամներն ու աղօթքները, կը ծանօթանաք իրենց կեանքը Քրիստոսի նուիրումը սուրբ մարդոց մտածումներուն եւ գեղեցիկ երգերուն, այլ խօսքով՝ Քրիստոսը կը դարձնէք ձեր կեանքին առանցքը:

Քրիստոսով ապրուած կեանքին մէջ է, որ մարդիկ կ'ազատագրուին իրենց թերութիւններէն, մոլութիւններէն, նախանձներէն, ատելութիւններէն եւ կը գտնեն սիրոյ եւ խաղաղութեան կեանքը, այսինքն՝ կը դառնան Աստուծոյ սիրելի զաւակները:

Աղօթարար՝

Խաժակ Եպս. Յակոբեան՝
Առաջնորդական փոխանորդ
Գանատայի հայոց

ԾՆՈՐՀԱԽՈՐԱԿԱՆ ՆԱՄԱԿ

Պատուարժան Տնօրէնութիւն եւ Ուսուցչական Կազմ
Ս. Յակոբ Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցի
Մոնթրէալ-Գանատա,

Անհուն ուրախութեամբ եւ սիրոյ ջերմ զգացումներով իմացանք, որ այս տարի Մոնթրէալի Ս. Յակոբ Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցի քսանամեակն է: Քրիստոնէական հասկացողութեամբ եւ ըմբռնումով պիտի ըսէինք, որ Ձեր՝ որպէս Տեսուչ եւ Ուսուցչական կազմ քսանամեակն է, որովհետեւ կարելի չէ երեւակայել դպրոց մը առանց Ձեզի, մանաւանդ Կիրակնօրեայ դպրոց մը: Այնպէս ինչպէս կարելի չէ երեւակայել Եկեղեցի առանց հաւատացեալներու, տակաւին կարելի չէ երեւակայել բերրի դաշտ առանց մշակի:

Ահաւասիկ անցնող քսան տարիներու ընթացքին, որպէս մշակներ՝ Ս. Յակոբ Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցի անդաստանին մէջ, դուք ցանցեցիք սերմնահատիկներ այն յոյսով, հաւատքով եւ սիրով, փոխարէնը ստանալու մէկի տեղ երեսուն, վաթսուն եւ հարիւր: Դուք եղաք այնպիսիներ, որ տուիք՝ առանց փոխարժէքը հաշուելու, պայքարեցաք՝ առանց վիրաւորուելու, աշխատեցաք՝ առանց հանգիստ փնտռելու, ծառայեցիք՝ առանց վարձատրութիւն ակնկալելու. այն գիտակցութեամբ՝ թէ Աստուծոյ կամքն է որ կը կատարէք, ինչպէս պիտի ըսէր Բարսեղ Կեսարացի Հայրապետ:

Քսան տարիներու ընթացքին այս բոլորը ըրիք, որովհետեւ հաւատացիք Քրիստոսի այն խօսքին որ կ'ըսէր. «Ով որ այս փոքրիկներէն մէկուն գաւաթ մը ջուր կու տայ խմելու՝ իմ աշակերտներս ըլլալուն համար, վստահ եղէք որ իր վարձատրութիւնը պիտի չկորսնցնէ» Մտթ. 10.2:

Ահա այս մտածումներով կը շնորհատրենք Ձեզ եւ Ձեր քսանամեակը, եւ կ'ըսենք վարձքերնիդ կատար, որովհետեւ բարի, ազնիւ եւ հաւատարիմ մշակը իր վարձքին արժանի է:

Թող մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի շնորհքը Ձեր բոլորին հետ ըլլայ: Ամէն:
Մնամ միշտ աղօթարար՝

Մաշտոց Վրդ. Զօպանեան՝
Վարիչ Տնօրէն Կիրակնօրեայ Դպրոցներու
Անթիլիաս
12 Մայիս 2000

ՓԱՌՔ ՏԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՏԷՐ

Այս տարի, 20 տարիներու վերիվայրումներէ եւ նուաճումներէ ետք, Ս. Յակոբ Մայր Եկեղեցւոյս Կիրակնօրեայ Դպրոցը կը բոլորէ իր հաստատման քսանամեակը:

Այդ օրերուն երբ կը սկսէինք Կիրակնօրեայ Դպրոցը հիմնելու աշխատանքին, զարմանալի կերպով, աջէն ու ձախէն բացասական դիրքորոշումներու հանդիպեցանք՝ զանազան լուրջ եւ անլուրջ պատճառաբանութիւններով թէ, արդէն Ամենօրեան եւ Ծաբաթօրեան բաւարար կրօնական դաստիարակութիւն կը ջամբեն, հետեւաբար կարիքը չկայ, աւելորդ է նոր գլխացաւանք ստեղծել փոքրիկներուն, ծնողներուն եւ յատկապէս... պատասխանատուներուն համար:

Սակայն նետը արձակուած էր, գաղափարը՝ հասունցած, գործը՝ սկսած Աստուծոյ օրհնութեամբ եւ նուիրեալ ուսուցչական կազմի Գողգոթայով: Սակայն չկանխենք դէպքերու կարգը եւ հակիրճ կերպով տանք պատմականը՝ նախապէս յայտնելով թէ հոս մեր նպատակը չէ անհաճոյ մանրամասնութիւններով խճողել այս պատգամ գրութիւնը. պարզապէս օգտակար կը նկատենք մեր նոր նուիրեալ ուսուցիչներուն մօտաւոր գաղափար մը տալու համար թէ ի՞նչ կացութիւն կը տիրէր անցեալին, որպէսզի ըստ այնմ գնահատեն ներկայի դժուարութիւնները:

Կիրակնօրեայ դպրոց մը ունենալու գաղափարը հին էր, սակայն պայմանները թոյլատու չէին. Հայ Կեդրոնին մէջ փաստօրէն տեղ չէր մնացած Կիրակնօրեային համար: Իսկ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ պատմութիւն, հոգեպարար շարականներ, քրիստոնէական ընտիր դաստիարակութիւն ջամբելու ատակ ուժեր շատ սակաւ էին: Սակայն պէտք էր փորձել:

1980ի ամառը եղաւ նախապատրաստութեան շրջան: Մեր կոչին սիրով ընդառաջեցին Այտա Պաղչէճեան, Յարութիւն Փալանճեան, յաւէտ ողբացեալ՝ Տիկ. Վալանթին Ապտալեան, յետագային նաեւ ամուսինը՝ Զաւէն, որոնք բժախընդիր մօտեցումով պատրաստեցին քանի մը տարիներու վրայ տարածուող կրթական բարձրորակ ծրագիր:

Նոյն տարին Խաչվերացի տօնին օրը Կիրակնօրեան իր դռները բացաւ՝ 40-50 աշակերտներով՝ տնօրէնութեամբ Պրն. Յարութիւն Փալանճեանի, իրեն գործակից ունենալով երկարամեայ փորձառու մանկավարժ Տիկին Պայծառ Մանուկեան, Տիկին Վալանթին Ապտալեան, Օրդ. Պէթի Քիւփէեան եւ Պրն. Զաւէն Ապտալեան, որոնց շուտով միացաւ նաեւ Տիկին Յասմիկ Ինճէճիկեան՝ իբրեւ երաժշտութեան եւ շարականի մասնագիտուհի:

Մինչեւ հոս, ամէն ինչ կ'ընթանար նախատեսուած ծրագրով. սակայն դեռ անլոյծ կը մնար դասարաններու հարցը, որ այնպէս ալ շարունակեց մնալ 15

տարիներ, մինչեւ որ ստիպուած, Կիրակնօրեան փոխադրեցինք Ամենօրեայ Վարժարանին շէնքը: Այո, հոն ունեցանք դասասենեակներ, սակայն աշակերտները պարբերաբար Ս. Պատարագին մասնակից դարձնելը գրեթէ անկարելի եղաւ:

Արդարեւ, կարելի չէ լուրջեամբ անցնիլ այդ 15 տարիներու իրար յաջորդող տնօրէններու եւ ուսուցիչներու նահատակութեան վրայէն՝ տեղի չգոյութեան հետեւանքով, երբ Հայ Կեդրոնի մէկ ծայրէն միւսը կը քաշկուտուէին, իրենց հետ փոխադրելով աթոռներ, գրեմական պիտոյքներ եւ այլ առարկաներ, դեռ հաշուի չառնելով աչքը բաց աշակերտները, որոնք այդ իրարանցումէն օգտուելով փախուստ կու տային՝ հոգ չէ թէ կարճ ժամանակի մը համար: Յաճախ պատահած է որ երթուղարձի ծառայող նրբանցքները օգտագործուէին՝ ի դժգոհութիւն անցորդներուն...:

Պատի՛ւ ու անհուն գնահատանք մեր ուսուցչական կազմերուն, որոնք այս բոլոր դժուարութիւնները կը կրէին սիրով ու անվճար՝ իբրեւ ծառայութիւն մեր Ս. Եկեղեցւոյն, Հօր Աստուծոյն եւ համայնքին: Այսօր եւս մեր Տնօրէնն ու ուսուցչական կազմը իրենց նուիրեալ աշխատանքը կը տանին նոյն հասկացողութեամբ ու նուիրումով: Բոլորին ալ վարձքը կատար:

Քսանամեակի այս պատուաբեր հանգրուանին կարելի չէ մոռնալ մեր հաւատացեալ ծնողները, որոնք ամենայն հաւատարմութեամբ Կիրակի օրերու իրենց անոյշ քունը զոհելով իրենց զաւակները վստահեցան Կիրակնօրեային: Եւ թող վստահ ըլլան թէ սխալ չգործեցին. որովհետեւ իրենց զոհողութիւնները արդիւնատուրուեցան ու այսօր կրնան հպարտ զգալ մեր շրջանաւարտներու ցուցաբերած ընտիր նկարագրով ու օրինակելի կենցաղով՝ հեռու այլասերիչ շրջանակներէ եւ սատանայական փորձութիւններէ:

Եւ վերջապէս շնորհակալութեան խօսք ունինք անցեալի ու ներկայի Պատուարժան Հոգաբարձութեանց, որոնք իրենց կարելիութեան սահմաններուն մէջ հովանաւորեցին եւ խրախուսեցին մեզ, մեր դժուարին սակայն նուիրական աշխատանքներուն մէջ:

Շնորհակալութիւն բոլորին. շնորհաւոր՝ քսանամեակ, վարձքերնիդ՝ կատար: Աստուած օրհնէ իր փառքին ծառայող այս գործը եւ բոլոր աշխատողները: Ամէն:

Աղօթարար՝

Տ. Արմէն Աւ. Քհնյ. Իշխանեան

ՄԵՐ ԽՕՍՔԸ

Այսօր կ'աւարտի մեր Կիրակնօրեայ Դպրոցի 20րդ տարեշրջանը: Փառք կու տանք Աստուծոյ, որ 20 տարիներ շարունակ մենք կրցանք Կիրակնօրեայ Դպրոց ունենալ հակառակ զանազան դժուարութիւններու: Բաղդատելով սկզբնական շրջանին, ներկայիս ունինք 104 արձանագրուած աշակերտ, 10 դասարան եւ սրահ, արձանագրութիւն, գրասենեակ, եւ դասագրքեր, սակայն մեր մեծագոյն պէտքը կը մնայ Դաստիարակ-Ուսուցիչը, Քրիստոսի եւ Եկեղեցւոյ ճշմարտութեամբ զինուած՝ պատերազմելու պատրաստ Դաստիարակ-Ուսուցիչը որ Քրիստոսի անժամանցելի ճշմարտութիւնը փոխանցէ աշխարհի փոփոխական իրականութիւններով պղտորուած մեր աշակերտներու մատղաշ մտքերուն ու հոգիներուն:

Դաստիարակ-Ուսուցիչի Պատրաստութիւն

Կիրակնօրեայ Դպրոցի դաստիարակներու պատրաստութեան գործը Եկեղեցւոյ պատասխանատուութիւնն է: Ամբողջ արձակուրդը լաւագոյն առիթը կը հանդիսանայ այս պատրաստութեան եւ մենք՝ որպէս ուսուցչական կազմ պատրաստ ենք սոյն դասընթացքներուն ու սեմինարներուն մեծ խանդավառութեամբ մասնակցելու, սակայն տակաւին կը սպասենք Եկեղեցւոյ պատասխանատուներուն գործնական պատասխանին:

Կիրակնօրեայի Աւարտական. Եկեղեցւոյ Գործնական Անդամ

Կիրակնօրեան ինքնանպատակ չէ: Կիրակնօրեայի աւարտականները Եկեղեցւոյ ապագայ գործունեայ անդամներն են, որոնց Քրիստոսի հանդէպ ունեցած սէրը պիտի մղէ զիրենք սիրոյ ծառայութեան Եկեղեցւոյ դաշտին մէջ: Սակայն որովհետեւ Կիրակնօրեայի ճրդ աւարտական դասարանի աշակերտները Եկեղեցւոյ անդամակցութեան տարիքի պայմանը չեն լրացներ, Եկեղեցին պարտականութիւնն ունի որպէս Մայր Եկեղեցի իր հովանիին տակ առնել զանոնք մինչեւ իրենց անդամակցութեան յարմար տարիքը: Մենք ալ մեր կարգին, հաւատարիմ մնալով Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու Կանոնագրին, պիտի փորձենք յառաջիկայ տարիներուն աւարտական դասարանը բարձրացնել 11րդի:

ՀԵԿԴՕՄ

Մենք կը հաւատանք որ ժամանակը հասած է ունենալու մեր Կիրակնօրեայ դպրոցին կողքին օժանդակ միութիւն մը՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու Օժանդակ Միութիւնը. ՀԵԿԴՕՄ, որ Եկեղեցւոյ հովանիին տակ ի մի կը խմբէ նախկին տնօրէններ, ուսուցիչներ, աշակերտներ եւ աւարտականներ, այժմու ծնողներ եւ բարեկամներ միասնաբար գործակցելու եւ օժանդակելու մեզի:

Ահաւասիկ այսօրուան հրամայականը:

Տնօրէնութիւն եւ Ուսուցչական Կազմ

ՔԱՆԱՄԵԱՅ ՎԱՍՏԱԿՈՎ

Ահա քսաներորդ տարին է որ կ'ամբողջացնէ Սուրբ Յակոբ Հայց. Առաքելական Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցը: Քսան տարիներ անընդհատ ան տունը եղած է հարիւրաւոր հայ մանուկներու եւ պատանիներու որոնք Կիրակնօրեայ դպրոցի ճամբով ծանօթացած են Հայց. Առաքելական Եկեղեցիին՝ իր Յիսուսով եւ ազգային դիմագիծով՝ Հայ մշակոյթով: Քսան տարիներ շարունակ, իրերայաջորդ չորս տնօրէններ եւ մի քանի տասնեակ ուսուցիչներ, միշտ սիրայօժար եւ ամբողջական նուիրումով ծառայեցին Հայց. Եկեղեցիին այն հաստատ համոզումով որ Կիրակնօրեայ Դպրոցի ճամբով հայ նորահաս սերունդին կը սորվեցնէին ճանչնալ եւ սիրել Հայց. Եկեղեցին, եւ դառնալ անոր ապագայ գործօն առաջնորդներն ու հետեւորդները:

Արդ, պարտք կը զգանք, քսանամեակի այս պատեհ առիթով, հրապարակաւ մեր սրտագին շնորհակալութեան խօսքը ուղղելու անցնող քսան տարիներու ընթացքին Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցին սիրայօժար ծառայած եւ ծառայող բոլոր սպասաւորներուն՝ տնօրէն, ուսուցիչ թէ վարչական, որոնք իրենց նուիրածութեամբ ապահովեցին շարունակականութիւնը Կիրակնօրեայ Դպրոցին, ինչպէս նաեւ իրենց օրինակով ներշնչման աղբիւր հանդիսացան ուրիշներու՝ որոնք պիտի գան իրենց սկսած եւ շարունակուող Աշխատանքը յաւերժացնելու:

Վարձքերնիդ՝ կատար, գործերնիդ՝ անսպառ:

Ծարունակեցէք միշտ նոյն ոգիով:

Հոգաբարձութիւն

Ս. Յակոբ Հայց. Մայր Եկեղեցւոյ

ԾՆՈՐՀԱԽՈՐՈՒԹԻՒՆ

Մենք ուրախութեամբ իմացանք որ այս տարի Մոնթրէալի Ա. Յակոբ Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցի հիմնադրութեան քսանամեակի տօնախմբութիւնը կը կատարուի: Այս առթիւ, սրտաբուխ շնորհակալութիւններս կ'ուղղեմ Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Տէր Արմէն Ա. Քհնյ. Իշխանեանին, ինչպէս նաեւ հոգաբարձութեան բոլոր անդամներուն եւ մասնաւորապէս Կիրակնօրեայ Դպրոցին անցեալի եւ ներկայի ուսուցչական կազմին եւ տեսուչներուն:

Քսան տարիներու ընթացքին, հարիւրաւոր աշակերտներ իրենց կրօնական դաստիարակութիւնը ստացան, Կիրակնօրեայի տեսուչներու հսկողութեան տակ, Հայ Քրիստոնէական հաւատքին նուիրուած կամաւոր ուսուցիչներու կողմէ: Հոս կարելոր է շեշտել նաեւ ծնողներուն ունեցած մեծ դերը իրենց զաւակներուն քրիստոնէական կազմաւորման մէջ:

Ով որ ժամանակ կը տրամադրէ եւ ջանք չի խնայեր Կիրակնօրեայ Դպրոցի առաքելութեան զարգացման՝ արժանի է գնահատանքի, որովհետեւ այդ՝ մեր եկեղեցւոյ միակ կազմաւորուած կրօնական ծրագիրն է որուն հիմնական նպատակն է մեր երիտասարդները մասնակից դարձնել եկեղեցւոյ խորհուրդին, ինչպէս նաեւ զանոնք գիտակից եւ գործօն անդամներ դարձնել մեր գաղութի եկեղեցա-կրօնական կեանքին:

Անդրադառնալով որ կ'ապրինք աշխարհի մը մէջ ուր Հայ քրիստոնէական ethos-ը բնականօրէն իրականութիւն մը չէ, իբր եկեղեցի եւ քրիստոնէական համայնք՝ անհրաժեշտ է որ տքնաջան աշխատանք տանինք որպէսզի Կիրակնօրեայ Դպրոցը ըլլայ ազդեցիկ եւ արդիւնաբեր:

Անգամ մը եւս ընդունեցէք շնորհաւորութիւններս: Կ'աղօթեմ որ ձեր եկեղեցւոյ քրիստոնէական ուսուցման առաքելութիւնը բարգաւաճի Տիրոջ փառքին եւ Եկեղեցւոյ պայծառացման համար:

Անկեղծօրէն՝

Շանթ Սարկաւագ Գազանճեան

Վարիշ տնօրէն՝ Ազգային Կրօնական Դաստիարակութեան Խորհուրդի

ՀԱԿԻՐՃ ՏԵՂԵԿԱԳԻՐ
1999-2000 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

Սուրբ Յակոբ Մայր Եկեղեցույ հոգաբարձութիւնը այս տարեշրջանին եւս հովանավորեց Կիրակնօրեայ Դպրոցի գործունէութիւնը, դպրոցիս նախագահ ունենալով Տէր Արմէն Ա. քահանայ Իշխանեանը:

Նկատի առնելով որ այս տարի Կիրակնօրեայ դպրոցիս քսանամեակն է, կազմուեցաւ նաեւ յանձնախումբ մը հետեւեալ անդամներէ.


Տէր Արմէն Ա. քահանայ Իշխանեան	Հոգեւոր հովիւ
Պրն. Զաւէն Ինճէճիկեան	Հոգաբարձութեան ներկայացուցիչ
Պրն. Զաւէն Ապտալեան	
Պրն. Յարութիւն Փալանճեան	
Պրն. Թորոս Պապիկեան	
Օրդ. Մարօ Տէմիրճեան	
Տիկ. Վիգի Զարգաւատճեան	
Տիկ. Վանտա Քէօսէեան	
Տիկ. Ժանէթ Քեպապճեան	
Օրդ. Յասմիկ Նաճարեան	

Յանձնախումբը կազմակերպեց թէյասեղան մը 9 Ապրիլ, 2000-ի երեկոյեան որուն հրաւիրուած էին Կիրակնօրեայ Դպրոցի նախկին ուսուցիչներն ու աշակերտները: Տեղի ունեցաւ սահիկներու ցուցադրութիւն եւ Կիրակնօրեայ Դպրոցիս 20 տարիներու երեք տնօրէններն ու միակ տնօրէնուհին խօսք առին (տեսնել էջ 43), ինչպէս նաեւ հոգաբարձութեան ատենապետ՝ Պրն. Լեւոն Պէնկեանը:


ՏԵՍՉՈՒԹԻՒՆ ԵՒ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄ

99-00 տարեշրջանին տեսչութիւնը ստանձնեց Պրն. Թորոս Պապիկեան, քարտուղարութիւն՝ Օրդ. Յասմիկ Նաճարեան, հաշուապահութիւն՝ Օրդ. Երան Լոշխանեան, գանձապահութիւն՝ Տիկ. Շողիկ Նաճարեան:

Դասարանային բաժանումը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.



1999 – 2000 Տարեշրջանի դասարանային ներկայություն:



1999 – 2000 Տարեշրջանի ներկայություն:



ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ Ա. ԿԱՐԳ



ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ Բ. ԿԱՐԳ



ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ Գ. ԿԱՐԳ



ՆԱԽԱԿԹԱՐԱՆԻ Ա. ԿԱՐԳ



ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ Բ. ԿԱՐԳ



ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ Գ. ԿԱՐԳ



ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ Դ. ԿԱՐԳ



ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ Ե. ԿԱՐԳ



ՆԱԽԱԿԹԱՐԱՆԻ Զ. ԿԱՐԳ



ՆԱԽԱԿԹԱՐԱՆԻ Է. Ը. ԿԱՐԳԵՐ



ԺԱՋԱՆԱԽԱՐՏ ԴԱՄԱՐԱՆ



ՀԱՆՐԱԷՍԻ ՓՈՐՁԻ ԺԱՄՈՒՆ

Մանկապարտեզ.

Ա. կարգ՝ Օրդ. Նանոր Նիլեան

Բ. կարգ՝ Օրդ. Մակի Գըբթանճեան

Գ. կարգ՝ Օրդ. Անի Գըլընճեան

Նախակրթարան.

Ա. կարգ՝ Օրդ. Յասմիկ Նաճարեան

Օրդ. Գարօլ Գըբթանճեան

Բ. կարգ՝ Օրդ. Զարմինէ Թաշճեան

Գ. կարգ՝ Օրդ. Դալար Յակոբեան

Դ. կարգ՝ Օրդ. Երան Լոշխանեան

Ե. կարգ՝ Պրն. Վարուժան Իշխանեան

Զ. կարգ՝ Տիկ. Ծողիկ Նաճարեան

Է.Ը. կարգ՝ Պրն. Ներսէս Հատիտեան

Կազմը գումարեց ամսական հերթական ժողովներ, որոնց ընթացքին արժարծուեցան ծրագրային, կարգապահական, արտադասարանային աշխատանքներ:

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՎԻՃԱԿ

99-00 տարեշրջանին արձանագրուած աշակերտութեան թիւը հասած է 104ի, շաբաթական ներկայութեան միջինն է 66 աշակերտ բաժնուած տասը դասարաններու:

ԴՊՐՈՑԻՆ ԱՌՕՐԵԱՆ

99-00 տարեշրջանին Կիրակնօրեայ Դպրոցի առօրեայ յայտագիրը կ'ընթանայ Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու դասաւանդման հիմնական կառուցուածքին համաձայն՝ լսարանային եւ դասարանային բաժանումներով, Ս. գրային, ծիսական, բարոյագիտական, գործնական ծանօթութիւններ, գիտելիքներ եւ աղօթքներ սորվեցնելով աշակերտներուն:

Դասարանային բաժնին ընթացքին կը դասաւանդուին Բերիոյ Թեմի Ուսումնական Խորհուրդի հրատարակութիւն «Կրօնի Դասեր» դասագրքերը:

ՋԵՌՆԱՐԿՆԵՐ ԵՒ ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

29 Օգոստոս, 1999.- Արձանագրություն 99-00 տարեշրջանի

12 Սեպտեմբեր, 1999.- Տարեսկիզը եւ վերամուտ

19 Սեպտեմբեր, 1999.- Դպրոցի աշակերտությունը մասնակցեցաւ

Սուրբ Պատարագի խորհուրդին եւ հաղորդուեցաւ:

10 Հոկտեմբեր, 1999.- Թարգմանչաց տօնի առթիւ աշակերտ-
ները օրուան պատշաճ ձեռային աշխատանքներ պատրաստեցին եւ հիւրասի-
րություն տեղի ունեցաւ:

31 Հոկտեմբեր, 1999.- Դպրոցիս աշակերտությունը մասնակցեցաւ

Սուրբ Պատարագի խորհուրդին:

21 Նոյեմբեր, 1999.- Դպրոցիս աշակերտությունը մասնակցեցաւ

Սուրբ Պատարագի խորհուրդին:

26 Դեկտեմբեր, 1999.- Ամանորի եւ Ս. Ծննդեան զոյգ տօներու
առթիւ տեղի ունեցաւ հանդիսություն մը, որուն ընթացքին աշակերտները
գեղարուեստական յայտագիր մը ներկայացուցին: Հանդիսությունը վերջ
գտաւ Կաղանդ պապայի այցելութեամբ եւ հիւրասիրութեամբ:

2 Յունուար, 2000.- Դպրոցի աշակերտությունը մասնակցեցաւ

Սուրբ Պատարագի խորհուրդին եւ հաղորդուեցաւ:

6 Փետրուար, 2000.- Տիկ. Անի Սերոբեան նախակրթարանի
բարձր դասարանի աշակերտներուն ցուցադրեց հայկական դրոշմաթուղթերու
սահիկներ:

5 Մարտ, 2000.- Նախակրթարանի բարձր դասարանի աշակերտ-
ներու լսարանային բաժին այցելեց Լաւալի Կիրակնօրեայ Դպրոցի տնօրե-
նուհի Տիկ. Պայծառ Աւետիքեան:

16 Ապրիլ, 2000.- Դպրոցը փակ մնաց Ծաղկազարդի առթիւ:

23 Ապրիլ, 2000.- Ս. Յարութեան տօնի յատուկ տօնակատա-
րություն, որուն ընթացքին տեղի ունեցան հակթախաղ եւ հիւրասիրություն:

11 Յունիս, 2000.- Ամառվերջի հանդէս:

ՅԻՄՆԱՄԵԱՅ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Սույն երկու հատուածները արտատպուած են «Յուշարձան Յիսնամեակի» գիրքէն որ հրատարակուած է 1980ին, Անթիլիաս, Հայց. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու հիմնադրութեան յիսնամեակին առթիւ:

«...Մենք չենք կրնար անտեսել Հայց Եկեղեցւոյ շուրջ լարուած ընտանի եւ օտար թակարդները. չենք կրնար թոյլ տալ որ հայ մատղաշ սերունդը հակա-կրօն գաղափարներով դաստիարակուի...: Մենք յայտնի կերպով կը տեսնենք թէ ինչպիսի ողբալի վիճակի մէջ ինկած է Աւետարանի լոյսէն, կրօնի սրբարար շնորհքէն զրկուած հայ երիտասարդութիւնը: Մենք կ'ուզենք որ մեր Մայրենի եկեղեցւոյ զաւակները հարազատ զաւակները ըլլան իրենց ազգին եւ իրենց եկեղեցիին: Վերջապէս չենք ուզեր որ անկրօն եւ տգէտ մեծնայ հայ ժողովուրդին երիտասարդ սերունդը»:

Սահակ Կաթող. Խապայեան

Առաջին հերթին, պիտի ուզէինք ձեր մտքերէն յաւէտ վանել այս սուրբ յարկին տրուած անունին բառական կազմութենէն իսկ թելադրուող անոր նեղ նշանակութիւնը եւ, հետեւաբար, սահմանափակ գործունէութիւնը: Կիրակնօրեայ դպրոցը ամէն բանէ առաջ, յստակ ուղղութիւն, դիմագիծ ու կառույց ունեցող դպրոց մըն է՝ վերջին բառին ամենախոր հասկացողութեամբ: Կիրակնօրեայ դպրոցը «հրաշագործ տաճար»ն է գերագոյնին ու ազնուագոյնին իղձովը տոչորուող մատղաշ հոգիներուն, ուր կու գան անոնք իրենք զիրենք բանալ Աստուածային լոյսէն ճառագայթող յաւիտենական ճշմարտութեանց ու երկնային հրաշալիքները մարդոց տեսանելի ու զգալի դարձնող մարգարէներուն ու հայրապետներուն: Կիրակնօրեայ Դպրոցը ջինջ ու յորդ կենսաղբիւրն է հայկական ապրումներուն ու հայութեան սրբազան իտէալներուն: Այս այն տեղն է նուիրական, ուր պարման հոգիներ իրենց հայրերուն ճամբով դէպի Աստուած կը բարձրանան, ուր Հայ անցեալը կեանք կը զգենու անոնց մէջ, ուր մեր ստեղծագործ մտքին արգասիքը եղող բայց ժամանակի փոշիով ու մոռացութեան մշուշով պատուած հայ արժէքները կը վերաշաշտնուին: Ու վերջապէս այս բոլորին, աստուածայինին, մարդկայինին ու հայկականին «վսեմ ձուլարանն» է Կիրակնօրեայ դպրոցը, ուր համամարդկայինը եւ ազգայինը, անցեալը եւ ներկան զիրար կ'ընդգրկեն, զիրար կ'իմաստաւորեն ու կ'ամբողջացնեն՝ հոգեկան ու հայկական ներդաշնակ մթնոլորտին մէջէն կազմա-ւորելու համար հոգի ու միտք մարդը, իրաւ քրիստոնեայ ու իրաւ հայ երիտասար-

դը: Ահա թէ ինչու համար կ'ուզենք Կիրակնօրեայ Դպրոցը իր նեղ ըմբռնումէն ու առաքելութենէն դուրս բերել ու տեսնել անոր մէջ շուրջ իր կէս դարու պատմութեան առողջ վկայութեան լոյսին տակ հրաշագործ տաճարը, վսեմ ձուլարանը, ուր իրաւամբ «կապարն յոսկի եւ նիւթն յոգի դառնան»:

Իր կրօնա-ազգային ու հոգեմտաւոր այս զոյգ առաքելութեամբ եւ զայն իրագործելու իւրաքանչեւ եղանակով Կիրակնօրեայ Դպրոցը իր ինքնուրոյն տեղը ու դերն ունի Սփիւռքի մեր համահայկական կեանքի մայր էջին վրայ: Մենք զայն կը նկատենք Հայց. Եկեղեցւոյ հովանիին տակ ծլարձակուած ու տակաւ աճող ու ճիւղաւորուող ծառ որ հոգեւոր բոյր կը սրսկէ մեր պատանիներու կեանքին վրայ, ուր հետզհետէ պայմաններու դժբախտ բերումով կը խամրին հոգեւոր արժէքները:

Հետեւաբար, որքա՜ն սուրբ է ու նուիրական Կիրակնօրեայ Դպրոցին կոչումը: Անոր նպատակն է ու պէ՛տք է ըլլայ կերտել սերունդ մը, որ ունենալով աստուածաշնչական լայն ծանօթութիւն, ունենայ նաեւ արդարամիտ կեցուածք եւ անշահախնդիր ոգի, անհատական, ընկերային եւ ազգային կեանքի մէջ: Պատրաստել սերունդ մը, որ թրծուելով հայ պատմութեամբ ու հայ աւանդութեամբ, մէկ խօսքով բիրեղ հայկականութեամբ, կարենայ ճակտին վրայ անաղարտ պահել Հայց. Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ միտոնը. թանկագին գանձի նման անխաթար պահել մեր ազգային սրբութիւններն ու աւանդութիւնները եւ աներկմիտ ընթանալ մեր պապերու հաւատքին լուսեղէն ճանապարհէն, Աւետարանի ճամբով, հայ պատմութեան հետքերով:

Ըսինք ու կը կրկնենք. Կիրակնօրեայ Դպրոցը հայ պատանի մտքին դարբնոցն է ու բողբոջ հոգիին հնոցը: Պէտք է կռանել այդ դարբնոցը որպէսզի ան կարենայ շարունակ մտրակել հայ միտքը դէպի նոր հորիզոնները Ս. Գրոց ու Հայոց պատմութեան: Պէտք է միշտ բորբ ու վառ պահել այդ հնոցը որպէսզի հոն թրծուի հայ մատղաշ հոգին քրիստոնէական եւ հայկական սրբազան արժէքներով ու վեճի իտէալներով, մանաւանդ սա օրերուն երբ քիչ մը ամէն տեղ մեր ժողովուրդի երիտասարդ զաւակներուն մօտ սկսած է նուաղիլ քրիստոնէութեան լոյսը ու մոռացութեան փոշիին մէջ թաղուիլ հայկական հոգեւոր արժէքներն ու աւանդութիւնները:

ԱՐԱՄ ԵՊՍ. ՔԷՇԻՇԵԱՆ

Այժմ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Քրիստոնեական Դաստիարակությունը

Հայց. Եկեղեցւոյ Մէջ

Սոյն յօդուածը արտատպուած է «Յուշարձան Յիսնամեակի» գիրքէն որ հրատարակուած է 1980ին, Անթիլիաս, Հայց. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու հիմնադրութեան յիսնամեակին առթիւ:

Վերջին տասնամեակներուն, յատկապէս քրիստոնեական աշխարհին մէջ, հրատարակութիւններու, ժողովական հանդիպումներու եւ դասախօսական շարքերու ճամբով զգալիօրէն շեշտուող նիւթ մըն է կրօնական դաստիարակութիւնը: Արեւմտեան աշխարհին համար նոյնիսկ առանձին նոր եւ ընդարձակ ուսումնական ծրագիր է ան: Այդ ծրագրին մէջ կ'իյնան ոչ միայն պարզ կրօնական եւ աստ-ւածաշնչական գիտելիքները, այլ յատուկ ուշադրութեան առարկայ կը դառնան կազմակերպումի աշխատանքները եւ հաղորդակցութեան ու յարաբերութեան ազդեցիկ ձեւերը: Այս նպատակին հասնելու համար կ'օգտագործուին գիտութեան նոր յղացքները, թեքնիք բարիքները, ինչպէս նաեւ զուտ հոգեբանական եւ մանկավարժական դասընթացքներու բերած առաւելութիւններն ու անոնց կիրարկումը:

Սակայն նախ քան կեդրոնաձաւը կրօնական դաստիարակութեան (մեր պարագային քրիստոնեական դաստիարակութեան) ի՞նչ ըլլալու բնոյթին վրայ, պիտի ուզէի շատ հակիրճ եւ ամփոփ ձեւով բացատրել թէ ինչ է կրօնական դաստիարակութիւնը:

Մինչեւ այժմ, շատ ու շատ անձերու մօտ, ըլլան անոնք պարզ հաւատացեալ, Կիրակնօրեայ կամ ամենօրեայ վարժարաններու ուսուցիչներ եւ կամ հոգեւորականներ, այն մտածողութիւնը կը տիրէ, թէ կրօնական դաստիարակութիւնը կրօնի դաս տալ է մեր փոքրիկներուն ամենօրեայ վարժարաններէն ներս ընդհանրապէս եւ Կիրակնօրեայ դպրոցներէն ներս մասնաւորապէս: Հոսկէ կը սկսի սխալ հասկացողութիւնը կրօնական դաստիարակութեան: Ծիշդ է, որ կրօնական գիտելիքներ դասաւանդելը հիմնական մէկ առաջադրութիւնը կը կազմէ կրօնական դաստիարակութեան, սակայն անկիւս բաւարար չէ իր ամբողջութեան մէջ հասկընալու եւ պարզաբանելու այն հսկայ աշխատանքը, զանազան մարզերէ ներս, որուն մենք կրօնական դաստիարակութիւն անունը կու տանք:

Կրօնական դաստիարակութիւնը մեր ժողովուրդի մասնակցութիւնն է այն հոգեւոր կեանքին, որ կ'արտայայտուի եկեղեցւոյ մէջ, դպրոցներէ ներս եւ մանաւանդ ընտանիքներէ կամ տուններէ ներս մեր մտածումի, խօսքի եւ գործի ճամբով: Այս մասնակցութիւնը զուտ կրաւորական ներկայութիւն մը չէ: Իւրաքանչիւր ոք մղում մը պէտք է ունենայ իր ներսիդին, որով հրահրէ թէ՛ ինքզինք եւ թէ՛ մանաւանդ այլ մասնակցողներ, անոնք ըլլան ֆիզիքապէս ներկայ կամ բացակայ, նոյնիսկ անտարբերներ: Սակայն մասնակցութիւնը ազդեցիկ պիտի չըլլայ, եթէ անոր չընկերանայ կազմակերպումի աշխատանքը, որ անհրաժեշտութիւն է կրօնական դաստիարակութեան մէջ. կազմակերպում ծրագրի, աշխատանքի, ինչպէս նաեւ յարակից եւ ենթակայ մարմիններու, որոնք երբ գործօն դեր ունենան, անպայմանօրէն առաւել ճիգ ու աշխատանք կը թափեն իրենց գործին յաջողութեան համար:

Իսկ կրօնական դաստիարակութեան նպատակը: Ամէն բանէ առաջ Աստուծոյ ներկայութիւնը տեսական դարձնելն է մեր օրերուն եւ կեանքին մէջ, գիտակցօրէն եւ ապրուող ձեով: Կրօնական դաստիարակութեամբ մենք պէտք է կարենանք իմաստ տալ կեանքին, ինչպէս նաեւ իմաստաւորել մեզ դիմագրաւող հարցերը, մեզի կարելիութիւն տալով որոշելու թէ ի՞նչ ենք եւ ի՞նչ կ'ընենք: Ան գիտութիւն մը չէ այլ՝ գիտութիւններու կարգին, որոնց տեղեակ կը դառնանք ուսման ընթացքին, Քրիստոսի առաքելութիւնը բացատրող եւ զայն գործնական կեանքին մէջ բաբախուն եւ վարակիչ ապրումի վերածելու պարզ բայց արուեստի բարձրութեանը հոգիի եւ մտքի կազմաւորում է: Մեր պարագային, մեր ժողովուրդը եւ եկեղեցին Քրիստոսի նման ապրող իրականութեան վերածում եւ պահպանում սրբազան ժառանգութեան:

†††

Կրօնքը ունի ժողովուրդի հոգիի ապրումներուն ծնունդն է: Նախապատմական կեանքէն սկսեալ մարդը ունեցած է զգացումը աւելի հզօրին, եւ համաձայն զանազան քաղաքակրթական ժամանակներու զարգացուցած է իր մէջ երկիւղ մը հանդէպ բնութեան երեւոյթներու, չաստուածներու եւ հետզհետէ հասած միաստուածութեան գաղափարին: Կրօնական զգացումը ծնունդը չէ փիլիսոփայական մտքի եւ տեսութիւններու: Կրօնական փիլիսոփայութիւնը կազմաւորուած է կրօնական կեանքէն բխելով եւ ոչ թէ ուղղութիւն տալով այդ կեանքին: Կրօնքը նախ ապրում է, ապա անոր ի՞նչ ըլլալու, ինչպէ՞ս զարգանալու մասին խօսուած է եւ տեսաբանուած: Հետեւաբար կրօնքը բնական մէկ զգացում է, որուն զգայարանքը Աստուծոյ պատկերն է մեր մէջ:

Մեր կրօնքը քրիստոնէութիւնն է, հիմնուած Աստուծոյ իսկ կողմէ, իր Որդւոյն Յիսուսի Քրիստոսի միջոցաւ: Աստուծոյ կրօնքն է ան: Բոլորս ալ գիտենք անոր առաջին դարու պատմութիւնը, հալածանքի մարտիրոսութեան կամ նահատակութեան վկայութեան հոգեշարժ դրուագները, որոնք սակայն սնունդ տուին նոր հաւատացեալներուն մինչեւ այն օրը, երբ քրիստոնէութիւնը դարձաւ կարգ մը երկիրներու պետական եւ յաղթական կրօնքը: Ան որպէս պաշտօնական կրօնք առաջին անգամ մուտք գործեց մեր նախահայրերու աշխարհին՝ Հայաստանի մէջ: Մեր երկիրը ու ժողովուրդը իր կեանքը սկսաւ դարբնել նոր ոգիով: Քրիստոսի Աւետարանով յատկապէս Մեծն Ներսէսի ջանքերով քրիստոնէութիւնը սկսաւ դառնալ կեանք, ապրելու, մտածելու եւ զգալու կոչ մեր ժողովուրդին մէջ: Այս առաւել փայլք ստացաւ, երբ Ս. Սահակ Մեսրոպեան ամբողջ հոյլը՝ Թարգմանիչ վարդապետները գրի ճամբով ալ դաստիարակեցին գալիք սերունդները, որոնք հայր ճանչցան Ս. Աւետարանը եւ մայր՝ Հայոց Առաքելական Եկեղեցին:

Դժբախտաբար յաջորդ դարերը բնական ընթացք եւ զարգացում չտուին մեր կեանքին: Ծիշդ է, որ յաճախ փորձուեցանք մեր հաւատքին մէջ, կրօնափոխութեան սպառնալիքով արաբական եւ աւելի ուշ սելճուք-օսմանեան արշաւանքներու եւ տիրապետութեան ընթացքին եւ դաւանափոխութեան պահանջներով յունա-

կան եւ երոպական (կաթոլիկ) ճնշումներու ճամբով: Տոկացինք: Գոյատեւեցինք մեր հաւատքին ու տակաւին նախանձախնդիր ենք մեր քրիստոնէութեան պահպանման: Միւս կողմէ, ունինք մեծ թիւ մը մեր ժողովուրդին մէջ, որ չի գիտակցիր իր քրիստոնէութեան: Ծնունդով կարծեք զգեցած է զայն: Ժառանգութիւն մըն է կարծեք, որ ինքնութեան նշան որպէս արձանագրուած է անձնաթուղթերու կամ անձագիրներու մէջ:

Բարեբախտութիւն եղած է մեր յետ-եղեռնեան Սփիւքի կեանքին մէջ 1929էն սկսեալ պաշտօնապէս յայտարարուած տեսնել հոգեւոր դաստիարակութիւնը որպէս միջոց սերունդի մը դաստիարակութեան: Կիրակնօրեայ դպրոցներու ծագումով մեր եկեղեցին հաւատացած է, թէ առանց հոգեւոր սնունդի մեր սփիւքահայ սերունդը պիտի մնայ վտիտ, հոգիով սնանկ եւ դիւրաբեկ օտար հովերու եւ աշխարհիկ քարոզութիւններու դիմաց:

Սակայն արդեօ՞ք միայն Կիրակնօրեայ դպրոցներն են աղբիւրը մեր սնունդին: Կամ աւելի ճիշդ, միայն Կիրակնօրեայ դպրոցներո՞ւն պէտք է վստահիլ մեր փոքրիկներուն եւ գալիք սերունդի դաստիարակութիւնը: Չեմ կարծեր, թէ ոեւէ մէկը մեր մէջ յաւակնութիւնը ունենայ «այո» ըսելու, որովհետեւ ինչպէս նախապէս կ'ըսէի, քրիստոնէական դաստիարակութիւնը ամբողջական մասնակցութիւն է, բոլորին ներկայութիւնն է յատկապէս կամաւ եւ գիտակցօրէն:

Ուրեմն ո՞ր փնտռել դաշտը մեր առաքելութեան: Երեք տեղեր գլխաւորաբար. -

Ա. - եկեղեցույ մէջ,

Բ. - տան մէջ,

Գ. - դպրոցին մէջ:

ԿՐՕՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Եկեղեցին աղբիւրն է կրօնական դաստիարակութեան: Եկեղեցին գերագոյն արտայայտութիւնն է դաստիարակուած հոգիներու, երբ նկատի կ'ունենանք զայն ոչ թէ որպէս հաստատութիւն, այլ ամբողջութիւնը հաւատակից անձերու՝ Քրիստոսի անունով եւ Ս. Հոգիի շնորհքներով իրարու միացած: Այս ըմբռնումով, Եկեղեցին ուսուցանողի դերին մէջ չէ, այլ դաշտ մըն է, աստուածային դաշտ, ուր մէկտեղուած հաւատացեալներ այլեւս կ'ապրին իրենց հաւատքը, կ'արտայայտեն իրենց յղկուած հոգիներու սէրը իրարու նկատմամբ եւ կը ջանան դառնալ եղբայրութիւն մը, Աստուծոյ ընտանիքին, հոգեկան եւ երանական խաղաղութեան մէջ:

Բոլորիս ծանօթ Քրիստոսի խորհրդական մարմինն է ան: Քրիստոսի հետ մենք կը դառնանք զինուորեալ եկեղեցի, յաղթական մուտք գործելու համար իր թագաւորութենէն ներս, պաշարելէ, դիմադրելէ եւ անսպառք ապրելէ ետք մեր օրերը:

Սակայն կայ միս երեսը եկեղեցիին, որ նիւթական բաժինը կը կազմէ անոր արտայայտութեան եւ կազմաւորումին: Եկեղեցին այս պարագային աղօթք է, շարական, ծէս, աւանդութիւն եւ վարչական մեքենայ: Այս երեսի նշանները ինքնըստինքեան ամբողջութիւններ չեն եւ պէտք չէ ըլլան: Ժամերգութիւն, խորհուրդ եւ նոյնիսկ վարչամեքենայ անիմաստ կը դառնան եթէ այս բոլորը կ'ըմբռնուի որպէս ինքնավախճան ամբողջութիւն: Անոնք միջոցներ են, դարերու ընթացքին կազմուած, կաղապարուած եւ շատ յաճախ ժամանակներու պահանջքին եւ պայմաններուն պատշաճեցուած, որոնք ծնած են իրենց վախճանը գտնելու համար մեր հոգեղէն եկեղեցոյ մէջ: Կը ծառայեն որպէս գործիք տեսանելիով անտեսանելին ըմբռնելու եւ անիմանալին հաւատքի պայծառութեամբ հասկնալու:

Խորհուրդները անտեսանելի են, սակայն անոնք պէտք չէ մնան անտես՝ մթութեան մէջ, տգիտութեան մէջ: Ընդհակառակը, հաւատքի պայծառութիւնը այնքան զօրաւոր լուսարձակում պէտք է ունենայ, որ լոյսի (հաւատքի) ուժգնութիւնը շլացնէ հոգիի աչքերը եւ խորհուրդը մնայ կրկին անտես, թէեւ այս պարագային լաւապէս ըմբռնուած: Հետեւաբար, ըլլա՛յ հաւատացեալներուն բազմութեան, ըլլա՛յ հոգեւորականներու, գործը հարկաւոր է տեսնել որպէս ծառայութիւն եւ ընթացք Աստուծոյ լոյսը կարելի չափով թափանցել տալու մեր հոգիներէն ներս, ի վերջոյ շլանալու կամ կլանուելու երկնային եւ աստուածային լոյսի զօրութենէն:

Քրիստոնեայի մեր կեանքին մէջ ճիշդ է, որ միջոց ու նպատակ ամբողջութիւն մը կը կազմեն, սակայն ժամանակի եւ յարաբերական կեանքի մէջ անջատ ինքնութիւններ են: Քրիստոնէական դաստիարակութեան միջոցը Քրիստոս, իր Աւետարանը ու իր եկեղեցին է: Անոր նպատակը երթն է դէպի Քրիստոս, իր Աւետարանը ու իր եկեղեցին: Մեր ամբողջ աշխատանքը պիտի ըլլայ այդ երթը կազմակերպել: Հետեւաբար, մեր երթը կանոնաւոր, Աստուածաշունչի ոգիով եւ աստուածահաճոյ դարձնելու համար պէտք ունինք ուսուցանողներու:

Որո՞նք են անոնք:

Բոլորէն առաջ եւ վեր Ինք՝ Քրիստոս: Քրիստոս Ինք իր կեանքով ու գործով մարդկութիւնը բերաւ Աստուծոյ: Ինք եղաւ Մեծ Վարդապետը եւ Մեծ դաստիարակը, ու թելադրեց իրեն հաւատացողներուն հետեւիլ իրեն, սիրել զինք, անտարանել իր թագաւորութիւնը եւ հրաւիրել մարդկութիւնը մասնակցելու այդ թագաւորութեան:

Այս հրաւերը խորքին մէջ հիմնական նպատակն է քրիստոնէական դաստիարակութեան: Եկեղեցին զայն իր առաքելութեան որպէս հիմնական ուղեգիծ ունի, եւ հոգեւորականներ, եկեղեցոյ կողմէ ընտրուած պաշտօնական անձեր եւ դաստիարակներ, յօժարութեամբ ու նուիրումով ուխտած են ամբողջական զոհաբերութեամբ տարածել Քրիստոսի անտիսը եւ փրկութեան առաջնորդել Քրիստոսի հաւատացողները: Ծիշդ է, որ այս պարագային որակը անելի կարեւոր է քանակէն, սակայն մեր իրականութեան մէջ, դէպքերու բերումով, քանակն ալ դարձած է մտահոգութեան առարկայ: Պարզ օրինակ մը կը կարծես թէ կը լուսաբանէ հաստատումը: Լիբանանի մէջ ունինք 16 քահանայ հայրեր եւ փորձառական կարողութիւններ: 16 հոգիներ պիտի գոհացնեն հոգեւոր պէտքերը շուրջ 150-160 000

ժողովուրդի: Միջին հաշուով 10 000 հոգիի հոգեւոր կեանքը վստահուած է մէկ հոգեւորականի: Թիւերը իրենք կրնան ցնցել մեզ, եթէ մեր կրօնական դաստիարակութիւնը թողունք միմիայն հոգեւորականներուն:

Բարեբախտութիւն է սակայն, որ մենք չենք ապաւինած միայն եկեղեցւոյ պաշտօնական սպասարկողներուն: Իւրաքանչիւրիդ պարտականութիւնն է ծառայել Քրիստոսի՝ զինք եւ առաքելութիւնը իմաստաւորելու եւ արդիւնաւորելու համար:

Ահաւասիկ կը տեսնենք, որ եկեղեցւոյ մէջ կրօնական դաստիարակութիւնը հոգեւորականներով չի վերջանար: Եկեղեցին ժողովուրդը ինքն է: Դաստիարակութիւնը այս պարագային հորիզոնական ընթացք ունի, որով մենք իրարու կրնանք թուել մեր հոգեւոր պարտականութիւնները, իրարու բացատրել Աւետարանը, ծէսը եւայլն: Ծիշդ է, որ բոլորս անհրաժեշտ ծանօթութիւնները չունինք իսկաւ ձեռով տարածելու համար Քրիստոսի կրօնքը, սակայն առնուազն ունինք մէկ կարողութիւն, որ որքան որ ծնունդ է դաստիարակութեան, նոյնքան ալ արտայայտութիւն է հաւատքի կենդանութեան: Անիկա մեր մասնակցութիւնն է եկեղեցական արարողութիւններուն: Քրիստոնէական դաստիարակութիւնը մասնակցութիւնն է այն կանչին, որ Քրիստոս կ'ուղղէ բոլոր ժողովուրդին, միանալու Աստուծոյ առաքելութեան, որպէսզի կարենանք վերահաստատել մարդը իր իրաւ մարդու պատկերին եւ արժանապատուութեան մէջ: Մեր երկրին մէջ կեանքի դժուարութիւնները չեն հասած այնպիսի տարողութեան մը, որ մեծամասնութիւնը չկարենայ եկեղեցի յաճախել: Պատրուակները շատ են ինքնազարգացումի, որոնք արդինք են անբաւարար կրօնական դաստիարակութեան: Հետեւաբար բոլորիս պարտականութիւնն է զիրար հրաւիրել եկեղեցի: Ասիկա մեծ ճիգ չի պահանջեր, պայմանաւ որ եկեղեցին ալ (վարչական կեդրոն) անդրադառնայ, որ պէտք է գոհացնէ կենսական կարիքները: Հոս առարկութիւններ կրնան տեղալ՝ պատճառաբանելով ժամերգութիւններու երկարութիւնը, աղօթքներուն ու շարականներուն անհասկնալիութիւնը եւ նոյնիսկ բաւարար եկեղեցիներու եւ հոգեւորականներու չգոյութիւնը: Համաձայն եմ որ մեր եկեղեցին թերացած է իր այս գործին մէջ: Ծատ յաճախ պահպանողական դիրքեր որդեգրած է եւ երբեմն ալ ինքնարդարացումի քովընտի ուղիներ փնտռած: Թերեւս ազատամտութիւն եւ կորով կը պահանջուի մեզմէ հարցումներ հարցնելու քան թէ պատասխաններ մտիկ ընելու. փոխուող պատասխաններ պէտք է ըլլան: Բոլորս ալ, վստահ եմ, որ դէմ ենք երկու ծայրայեղութիւններուն ալ՝ պահպանողական կամ ազատական: Սակայն ծիսական բարեկարգութիւնը մեր եկեղեցւոյ կեանքին մէջ երեւոյթ մըն է, որմէ պէտք չէ խոյս տալ, այլ պէտք անոր մօտենալ խղճմտանքով, կատարեալ անկեղծութեամբ, եւ ինչու չէ, հոգեկան յանդգնութեամբ:

Հետեւաբար, ժողովուրդը իր ամբողջութեամբ թիրախն է կրօնական դաստիարակութեան: Հոս չանջատեցինք տարեցները, երիտասարդները եւ փոքրերը: Ո՛չ թէ անոր համար որ բոլորին ալ կը տրուի կամ պէտք է տրուի մէկ տեսակի դաստիարակութիւն, այլ որովհետեւ առանց ժամերգութիւններուն մասնակցելու կրօնական դաստիարակութիւնը չի կրնար սկսիլ: Հաւատքը իր պարզութեան մէջ կը զօրանայ հոգն. տեսողութեան եւ լսողութեան անգիտակից ճամբով կը բացուին մեր հոգիները յետագայ մտածուած ու ծրագրուած դաստիարակութեան:

ԿՐՕՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ՏԱՆ ՄԷՋ

Եթե եկեղեցին կրօնական դաստիարակութեան աղբիւրն է, տունն ալ հայթայթիչն է դաստիարակուելիք հոգիներու: Ընտանիքէ կու գանք մենք: Կը ծնինք հոն, կը սկսինք քալել տան մէջ, խօսիլ տան մէջ, սիրել տան մէջ, ինչ որ մեր մէջ կ'արթնցնէ կապուածութիւն մը հանդէպ ծնողին, ինչպէս նաեւ ընտանիքի միւս անդամներուն: Ընկերային բնագոյն բարիքն է այս ամբողջ մարդկութեան համար: Այս բարիքը աւելի կ'արդիւնաւորուի, երբ կը սկսի աճիլ պարարտ հողի մէջ: Տունը հարազատ միջավայրն է փոքրիկին: Հոն փոքրիկը չի գտներ միայն կենսաբանական եւ տնտեսական ապահովութիւն, այլ նաեւ այն դաստիարակութիւնը որ նկարագիր կը շինէ: Այս պարագային ծնողներու գործը եթէ զաւակ դաստիարակել է, մեր գործը՝ եկեղեցւոյ գործը, ծնողները կանչել է դէպի կրօնական գիտակցութիւն:

Երբ տան մէջ կրօնական դաստիարակութիւն կ'ըսենք, կը հասկնանք ոչ թէ միայն զաւակներու դաստիարակութիւնը, այլ նաեւ ծնողքին դաստիարակութիւնը: Վերջինը եկեղեցւոյ պարտականութիւնն է, իսկ առաջինը՝ ծնողքինը: Ծնողքը գիտնալու է, որ զաւկին հագուստ-կապուստի հոգէն դուրս եւ աւելի սնուցանելու է իր քրիստոնէական հոգեւոր եւ բարոյական դաստիարակութեամբ: Փոքրիկին համար ռեւէ տեղէ առաջ տունն է միջավայրը իր կազմաւորման: Նկարագրի գիծեր հոն ծնունդ կ'առնեն՝ շատ յաճախ անգիտակից ընդօրինակութեամբ ծնողներու վարած կեանքէն, խօսքէն եւ ժպիտէն: Չկայ ծնող որ չգուրգուրայ իր զաւկին վրայ եւ չլուսայ անոր ազնուութիւնը եւ մարդկութիւնը հետագային: Ոչ ոք քրիստոնէայ կը ծնի, սակայն մենք կը բերուինք քրիստոնէութեան, կրօնական մեր ապրումները կ'ընելու Ս. Հոգիի շնորհքով եւ Քրիստոսի անունով: Ծնողները գիտնալու են, որ Յիսուս կը սպասէ իրենց զաւակներուն, անոնց անմեղ ու բարի հոգիներուն ապրումը նկատելով նախապայման իրեն երթին ու երկինքի արքայութեան: Ծնողներ գիտնալու են, որ կրօնական դաստիարակութեան գործը իրենց գործն է՝ Կիրակնօրեայ կամ ամենօրեայ դպրոցներու գործը ըլլալէ առաջ:

ԿՐՕՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԴՊՐՈՑԷՆ ՆԵՐՍ

Դպրոցը այն վայրն է, ուր կրօնական դաստիարակութիւնը անհրաժեշտ է որ ուղիղ եւ մտածուած ձեւով տրուի աշակերտին, որովհետեւ հոն է որ փոքրիկը հետզհետէ իր ապրումներուն մասնակից պիտի դարձնէ իր միտքը եւ հաւատքը վերածէ գիտակից ապրումի:

Սակայն յստակ բաժանում մը անհրաժեշտ է կատարել ուսուցիչին եւ աշակերտին միջեւ, երբ կը խօսինք դպրոցէն ներս կրօնական դաստիարակութեան մասին:

Ուսուցիչը դաստիարակն է եւ իր ուսերուն կ'իյնայ ծանրութիւնը աշխատանքին, լրջութեամբ, հաւատքով եւ արդիւնաւոր կերպով դաստիարակելու, կերպաւորելու մատղաշ հոգին փոքրիկին, ինչպէս նաեւ տրամաբանական հիմքերու վրայ

դնելու հաւատքի արտայայտութիւնը հետզհետէ աճող պատանհին: Բնականաբար դաստիարակ մը պիտի ունենայ մանկավարժական շնորհքը յարմարագոյն ձեւով մօտենալու համար փոքրիկին, անոր մէջ արթնցնելու սէրը իրեն նկատմամբ, որ առաջին քայլն է սէր արթնցնելու նիւթին նկատմամբ եւս: Սակայն ես կը թողում մանկավարժական գիտութեան եւ ուսուցման եղանակները եւ կը շեշտեմ երկրորդ կարողութիւնը, որ ուսուցիչին քրիստոնէական եւ կրօնական գիտելիքներու բաւականաչափ ծանօթութիւնն է: Կարելի չէ վստահիլ փոքրիկ մը անոր, որ ինք կը կասկածի իր ծանօթութեան վրայ: Առանց կրօնական բաւարար գիտելիքի պարզ, հոգ չէ թէ հաւատարիմ, կրօնական դաստիարակ մը չի կրնար արդիւնաւոր դառնալ: Նոյնիսկ վտանգաւոր կը դառնայ, երբ չի կրնար նաեւ պատասխանել փոքրիկին հարցումներուն, որոնք անէնքն ալ պէտք է որ պատասխան ունենան: Թերեւս հարկաւոր է ըսել, թէ ուսուցիչ մը հաւատք պէտք է ունենայ: Ասիկա ես կը նկատեմ նախապայման եւ չեմ մանրամասներ: Երբ մէկը չի հաւատար Աստուծոյ, անոր գործին, ծրագրին եւ աշխարհի մէջ իր կենդանութեան եւ ներշնչումին, աւելորդ է եւ՝ քանդիչ անոր աշխատանքը կրօնական դաստիարակութենէն ներս: Այս մտահոգութեամբ ուսուցիչներ պէտք է ստանան անհրաժեշտ ուսում եւ ուղղութիւն՝ կարենալ դարբնելու համար հոգիները քրիստոնէական կաղապարով եւ հարըստացնելու համար միտքերը Աւերտարանի ճշմարտութիւններով: Դժբախտաբար մենք չունինք յատուկ վարժարաններ ուսուցիչներ պատրաստող: Միայն դպրեւանքներն են, որ առիթ կու տան երիտասարդներու (ոչ աղջիկներուն) բաւականաչափ ծանօթութիւններ հաւաքելու կրօնական գիտելիքներու շուրջ:

Հոս անտեսելու չենք իգական սեռը, որ մեր ներկայ իրականութեան մէջ ամենէն աւելի օգտագործուող աղբիւրն է կրօնական դաստիարակութեան մէջ: Մեր ազգային նկարագրի եւ ընտանեկան դաստիարակութեան մէջ հսկայ տեղ ունի մայրը: Կ'ըսենք « հայրը տան դուրսի պատն է, իսկ մայրը՝ ներսի. » ասիկա իրականութիւն մըն է, որ իր անդրադարձը կը գտնէ, երբ ամենէն արագ ակնարկով դատում կ'ընենք եկեղեցական արարողութիւններուն իրենց մասնակցութիւնը բերողներուն վրայ: Տակաւին, դաստիարակութեան ընկերային դաշտին մէջ, որո՞նք կը կազմեն մեր ամենօրեայ թէ Կիրակնօրեայ վարժարաններու ուսուցիչներուն մեծ տոկոսը: Իգական սեռը: Ըսել չեմ ուզեր թէ արական սեռը անտեսուելու է. իրաւ դաստիարակութեամբ անոնք ալ ժողովուրդի մը թիւին համեմատութեամբ մասնակցութիւն պէտք է բերեն կրօնական կեանքին մէջ. սակայն միւս կողմէ իգական սեռին համար եւս յատուկ լսարաններ կամ դասընթացքներ ապահովուելու են:

Իսկ ուրկէ՞ կը ստանանք մեր կրօնական դաստիարակները: Անոնք մեծ մասամբ Կիրակնօրեայ դպրոցներու շրջանաւարտներն են, որոնք հաւատարիմ կերպով (ասոր վրայ կասկած չունիմ) եւ իրենց կարողութեան սահմաններուն մէջ ստանձնած են կրօնական դաստիարակի դերը: Թերեւս շինիչ եւ օգտակար քայլ մը պիտի ըլլար հաստատել ամառնային դասընթացք մը, պատրաստելու համար անհրաժեշտ ուսուցիչներ: Սակայն ասիկա սկսելէ առաջ անհրաժեշտ է պատրաստել զանոնք բաւարարող ծրագիր մը, այլապէս պատահականութեամբ անիմաստ է ճիգը եւ աշխատանքը:

Դպրոցէն ներս կայ նաեւ դաստիարակուողը. աշակերտը: Դպրոցին մէջ է, որ փոքրիկը տունէն բերած իր նկարագիրը կը սկսի թէ՛ արտայայտել եւ թէ՛ զօրացնել: Դպրոցին մէջ է, որ փոքրիկը կը սկսի գիտութեան ամենէն պարզ ծանօթութիւններէն մինչեւ ամենէն դժուար ու խրթին նիւթերուն ծանօթանալ: Այս սորվելիքներուն մէջ պէտք է տեղ գրաւէ նաեւ կրօնական դաստիարակութիւնը: Մանկավաժութեան եւ հոգեբանութեան մէջ ներկայիս կան զանազան տեսութիւններ, որոնք կը ձգտին փոքրիկը ազատ թողուլ իր ապագային ծրագրումներուն մէջ եւ «շխաթարել» միտքը իրեն անծանօթ նիւթերով: Հոգեբաններ նոյնիսկ կը թելադրեն ազատ ելք տալ փոքրիկին խորունկ եւ անզսպելի մղումներուն բնազդներուն եւ տենչանքներուն:

Մեր առաջին տպաւորութիւնը թերեւս պիտի ըլլայ համակրական: Իրաւունք պիտի տանք «ազատութեան», որպէսզի իր ընտրած ուղղութեամբ առաջնորդէ փոքրիկը դէպի իր աշխարհը, մարդկային բնազդներէ եւ հակումներէ խթանուած ապրումներու: Սակայն անմիջապէս հարց կը ծագի, թէ այդ «ազատութիւնը» արդեօ՞ք կ'ընտրէ բարոյական ազնիւ զգացումները եւ կամ մտային ցանկալի արժէքները: Բարոյագիտութիւն եւ արժէք ճիշդ է որ յարաբերական եւ վիճելի եզրեր են մեր կեանքին մէջ, սակայն այս բոլորը պէտք է առնուազն դիտուին ընկերութեան եւ քաղաքակրթութեան չափանիշով: Որովհետեւ փոքրիկը կոչուած է կազմելու հետագայի ընկերութիւնը: Եթէ ասոր վրայ անելցնենք նաեւ կրօնական կոչումը մարդուն, կրօնական անգիտակից մղումը փոքրիկին, այն ատեն յստակ կը դառնայ, թէ կրօնական դաստիարակութիւնը ո՛չ միայն հաւատացեալներ կը պատրաստէ, այլ ընկերութեան մէջ օգտակար եւ քաղաքակրթիչ տարրեր կը մեծցնէ: Այլապէս, առանց դաստիարակութեան «ազատութիւնը» կրնայ յոռի ճամբաներու առաջնորդել մարդը, խրել զինք գէշ սովորութիւններու եւ կենցաղի մէջ, ինչ որ կը խորտակէ իր ապագան եւ կ'ապականէ ընկերութիւնը: Եթէ կը յիշէք, խօսքիս առաջին տողերուն մէջ կ'ըսէի, թէ կրօնքը ծնունդ չէ փիլիսոփայական մտքի եւ տեսութիւններու: Ճիշդ է, որ ծնունդ առնելէ ետք իմաստասիրութիւնը կը զբաղի անով, սակայն կրօնական զգացումները մարդուն մէջ կան ծնունդի առաջին վայրկեանէն: Այս պատճառով ան պէտք է զարգանայ, դաստիարակուի, որպէսզի կրօնական իր արտայայտութիւններուն մէջ բեղմնաւոր դառնայ:

†††

Ահաւասիկ մեր աշխարհը. եկեղեցի, տուն եւ դպրոց: Եթէ այս երեքը կրնան միօրինակ ձեւով կրօնական ուսում եւ դաստիարակութիւն ջամբել փոքրիկին թէ տարեցին, այն ատեն այն աշխարհը ուր կ'ապրինք կը վերածենք ուրախ աշխարհի մը:

Խօսքիս մինչեւ այս բաժինը չխօսեցայ միջոցներու, մեթոտներու եւ դաստիարակութեան շրջագիծի մասին: Խորքին մէջ առանձին դասախօսութիւններու նիւթեր են, սակայն կարելի չէ չիշել այն միջոցը առանց որուն կրօնական դաս-

տիարակութիւնը կը պարպուի իր ամբողջութիւնէն:

Քրիստոնէական դաստիարակութեան առաջին եւ մեծագոյն միջոցը ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶՆ է: Չենք կրնար եւ ճիշդ չէ դաստիարակել փոքրիկը առանց Աստուածաշունչի էջերուն, խորքին եւ ոգիին: Եթէ կրօնական դաստիարակութիւն է մեր նպատակը, Քրիստոս ինք պէտք է կազմէ առանցքը եւ նպատակը տրուելիք դաստիարակութեան, ծանօթութիւններուն: Ինք դառնայ մեր կեանքին օրինակը: Եթէ մենք զօրաւոր ենք մեր այս տեսակի դաստիարակութեան մէջ, այն ատեն կրնանք հասկնալ մեր Հայ Եկեղեցին, մեր հայրապետները, սուրբերը, տօները, ասանդութիւններն ու հոգեւոր սովորութիւնները: Այն ատեն Հայ Եկեղեցին ինք ալ իր կարգին կը դառնայ լուսաւորիչ միջոցը քրիստոնէական լրիւ դաստիարակութեան:

Մեր առջեւ ունինք լայնատարած աշխարհ մը հայ հոգիներու, որոնք պէտք ունին քրիստոնէական դաստիարակութեան: Մեթոտներ չեն պակսիր: Այլազան է տարուած աշխատանքը քրիստոնէական աշխարհէն ներս: Մեր տրամադրութեան տակ կրնանք ունենալ անհաշիւ կարելիութիւններ՝ քրիստոնէական դաստիարակութիւնը ազդու միջոցներով տալու համար: Այնքան բազմազան են անոնք (գիրքեր, ֆիլմեր, լատեսողական միջոցներ, հրատարակութիւններ, պաշտամունքի ձեւեր, եալլն), որ հայեցի քրիստոնէական դաստիարակութեան պարագային մեր պարտականութիւնն է զտել զանոնք, յարմարցնել զանոնք մեր եկեղեցւոյ կեանքին, որպէսզի կարենանք անխաթար պահել մեր եկեղեցւոյ եւ ժողովուրդի տոհմիկ նկարագիրը: Երբ սիրով կը կատարենք մեզի տրուած այս պարտականութիւնը, ուսումնասիրելով, անոնց մասին վիճաբանելով եւ սակայն լաւագոյն եւ արդիւնաւոր ձեւով կիրարկելով մեր դպրոցներէն ներս գտնուող փոքրիկներուն վրայ, ինչպէս նաեւ դպրոցներէն դուրս եղող հայորդիներու, այն ատեն ներկայ դարու Քրիստոսի առաքեալները կը դառնանք եւ այն ատեն մեր վարձքը երկնքի մէջ կը գտնենք: Դաստիարակութիւնը միայն ասպարէզ չէ, այլ սուրբ գործ է, ուր մեր ժողովուրդը կ'ազնուանայ, կը դառնայ Աստուծոյ Որդի եւ ուր Քրիստոս իր աստուածութիւնը կ'իջեցնէ մեր սրտերուն, որպէսզի մենք ունենանք մաքուր սիրտեր, սուրբ սիրտեր:

ՕՇԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԶՈՒՅԵԱՆ

Այժմ՝ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴ

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՇՐՋԱՆԻ ՈՒ ԳԱՆԱՏԱՅԻ

ԱՂՕԹՔԻ ԼԵԶՈՒՆ

Բարիքի աղբիւրին եւ արարչագործական գերութիւն իբրեւ բնորոշում տրուած է Աստուած անունը: Անոնք որոնք կը հաւատան այս աղբիւրին եւ ոյժին գոյութեան, անոնք կը կազմեն դասակարգը հաւատացեալներու, որոնց խտէալն է մաքուրը, պարզը, անկեղծը, շնորհալին, վայելուչը, պատշաճը: Ուրեմն՝ հաւատք Աստուծոյ, կը նշանակէ ձգտիլ բարիին, ստեղծագործական աշխատանքի ճամբով նուաճել խտէալը, հետեւաբար՝ չքացնել չարիքը:

Բարիքի ուժին հետ յարատեւ կապ պահելու համար հաւատքի մարդիկ կը դիմեն բարոյական ըմբռնումներով գեղեցկացած, ապականութիւններէ հեռու կեն-
ցադաճելի:

ԿԱՊԸ՝ ԲԱՐԻԻՆ ՀԵՏ

Բարիքի ուժին հետ մնալուն կապ պահելու համար կայ մէկ միջոց. կայ մէկ լեզու, զոր կը կոչեն ԱՂՕԹՔ:

Ինչպէ՞ս սորվիլ այս լեզուն, ե՞րբ գործածել զայն:

Աստուծոյ հետ խօսելու լեզուն եթէ աղօթքն է, ուրեմն պէտք է աղօթել:

Աղօթքը իր խորքով, իմաստով եւ թելադրականութեամբ, արտաքին ցուցա-
կան ձեւականութիւն չէ: Աղօթքը ապրում է, որ կը դրսեւորուի ոչ թէ լոկ բառե-
րով, այլ մանաւանդ բարի արարքով. բարեգործութիւնը աղօթք է, այս աղօթքը ազդու եւ անմիջական կ'ըլլայ, երբ զայն իրագործես լոկութեամբ, առանց պորտո
ցոյցի: Արդէն այս տրամադրութեան կ'ակնարկէ Աւետարանի մէկ պատգամը. «աջ
ձեռքիդ տուածը ձախը չ'իմանայ...»:

Աղօթքի ձեւերը ալազան են. ձգտելու համար գեղեցիկին, ճշմարիտին եւ
բարիին, ստեղծուած է նաեւ ՄԻՍԹԻՔ մշակոյթ մը, վեհաշունչ գրականութիւն մը,
զոր ընթերցողը կը մղէ ազնիւ ու վսեմ խորհրդածութեան. ողորմութիւն, մար-
դասիրութիւն, հայրենասիրութիւն, ծառայութիւն, նուիրում եւայլն, աղօթքին ար-
ձագանգներն են:

Աղօթելու պահերը մթնոլորտային պատկերի վերածելու, գեղեցկացնելու եւ
հոգին վերացումի ոլորտներու մէջ դնելու համար մեր աղօթաշունչ նախնիք
հիսաձ-յօրինած են բանաստեղծութիւններ, շարականներ, մեղեդիներ, որոնք ան-
շօշափելի գործօններ են վսեմին ու վեհին մղուելու, ու թոյլ չեն տար նայելու «վա-
րը» գործուած ճղճիմ, ստոր, սողուն, անմաքուր, կեղծ ու դաւադիր արարքներու:

Սրբազան գրականութիւնը, որ կը մեկնաբանուի եկեղեցի-ծէս խորհուրդով,
հոգեւոր մշակոյթը, որ հոգին սրբացնելու գեղեցկագոյն ընթերցումն է, իրենց
շինիչ-կերտիչ ուժով մարդը կը բարձրացնեն վեր: Սակայն, այդ «ընթերցա-
նութեան» հետեւիլն ալ անհրաժեշտ չի նկատուիր յաճախ, որովհետեւ անձէ անձ
կը տարբերի ամփոփուելու տրամադրութիւնը, խառնուածքը:

Ուրեմն ինչո՞ւ կառուցուած է Եկեղեցին, արդարօրէն հարց պիտի տրուի:
Պատասխանը պարզ է. Եկեղեցին քարացած էութիւնն է աղօթքին, Աստուծոյ
շունչով սրբացած, գերագոյն ուժին հետ կապ պահելու ոգեղէն միջնորդը՝ զոր
տեսնել կը կարծենք միամիտ ու մաքուր հաւատքով: Եկեղեցին կոթողացած փա-

ռաբանանքն է առ Աստուած...

ԻՆՉՊԷՍ, ԵՐԲ ԵՒ ՈՒՐ ԱՂՕԹԵԼ

Աղօթելը կոչս հանդարտութիւն եւ ներամփոփ կեդրոնացում կը պահանջէ: Բարկացոտ, ջղային տրամադրութեամբ կարելի չէ բարի մտածումներ փոխանցել առ որ անկ է: Աղօթելու համար պայման չէ նաեւ արտաքին ցոյցը՝ ձեւը. ասոնք նոյնիսկ կը վնասեն աղօթքի իմաստին ու ոգիին:

Ափերը իրարու միացուցած անմեղունակ դիրքաւորումը աղօթել չի նշանակեր, եթէ արարքդ ու մտադրութիւնդ չեն միացած իրարու: Ս. Հաղորդութեան խորհուրդին կամ Ս. Խորանին դիմաց գլխահակ ու ծնրադիր կեցուածքը աղօթել չի նշանակեր, եթէ հոգիդ չէ խոնարհած վերնային վերացումին դիմաց: Ծնրադրութիւն, երկրպագութիւն, խոնարհութիւն կը վերածուին ցուցական արտայայտութիւններու, եթէ խիղճդ վճիտ չէ աղբիւրի ջուրի նման: Մոմավառութիւն, որմանկարներու ջերմեռանդ համբոյր զուր պաղատանքներ են, եթէ ինքզինքդ չես իրագործած սրբանալու ներքին համոզումով եւ կենդանի գործով:

Ծօշափելի վարքը վարակիչ է միայն...:

†††

Աստուծոյ հետ հաղորդակցելու, մտերմանալու կապ-միջոցը աղօթքն է, այո, բայց ո՞ր աղօթքը. խօսք աղօթքը, ձեռն աղօթքը, ցոյց աղօթքը, ծէս աղօթքը՝ թէ ապրում-արարք աղօթքը: Ուրիշին աչքերուն աղօթքը մխելու ինքնագոհութիւնը մեծագոյն մեղքն է, զոր կը գործածեն նոյնիսկ կարծեցեալ աղօթքի պահուն: Այս մասին Աւետարանը մեզի կու տայ դասը «փարիսեցիին եւ մաքսատրին»:

Աստուած չի լսեր շեփորածայն աղօթքները...:

ԻՆՉՈՒ ԿՄԱՄՉՆԱՆ ԱՂՕԹԵԼՈՒ

Ձեռական-ցուցական, մեքենական դարձած աղօթքները պատճառ եղած են որ շատեր խրտչին աղօթք բառէն, անոր մտերմութենէն: Աղօթելու կ'ամչնան անոնք, որոնք չեն ճանչցած աղօթքին էութիւնը: Անոնք կարծած են թէ աղօթել կը նշանակէ գոց սորվուած բանաձեւերու արտասանութիւն, հետեւաբար խուսափած են նման պարտադրանքներէ:

Կան «հաւատացեալներ» որոնք կը սիրեն աղօթել հրապարակներու վրայ, զոր կը կոչուին «վկայութիւն»: Վկայութիւն ի՞նչ բանի: Անոնք անմեղներ կամ աստուածահաճոյ արարածներ չեն, այլ մարդոց զգացումները շահագործող ճարպիկ գործակալներ, յաչս մարդկանց արդար երեւնալու կեղծիք: Մինչդեռ՝ կարելի է աղօթել քալելու պահուն: Ծիշդ այս պահուն համար ըսած է Քրիստոս. «Եթէ կրնաս պահել գլուխդ առանձին երբ խուճապի մէջ է չորս դիդ ամէն մարդ»:

Կարելի է աղօթել աշխատանքի պահուն: Ծիշդ ասոր համար ըսած են «Աշխատանքը սուրբ է, այսինքն աղօթքը»...:

Պայման չէ աղօթքի ցուցանիշ բառեր արտասանել, բայց պայման է որ

սիրտդ ըլլայ պայծառ, միտքդ մաքուր, չարիք չնիւթես ընկերոջդ, բարեկամիդ, գործակիցիդ, պաշտօնակիցիդ, մէկ խօսքով չըլլաս գերին ոխին, նախանձին ու ատելութեան, եւ ներաշխարհի չթունաւորես մոլութիւններու թոյներով:

†††

Տաճարները աղօթքին շունչը փոխանցող Սրբավայրեր են, ուր գտնուողները պարտին աղօթել սրտով, մտքով, հոգիով, եւ ոչ՝ լեզուով կամ շրթունքով:

Եկեղեցւոյ ոգեղինացած խորհուրդին մէջ կարելի է վերացեալ կեդրոնացումով ունկնդրել մեր պապենական մշակոյթով նուիրականացած շարականներն ու մեղեդիները, մաղթանքներն ու աղօթքները, որոնց էութեան կը հաղորդուինք մեր հոգիներուն մրմունջով, սիրտերուն աղբերացումով, ծէսին ծնծղալով. այս անիմանալի խորհուրդին լուռ մասնակիցն է աղօթողը, ունկնդիրն է «երկնային» կոչուած երաժշտութեան, որուն եւս կ'ըսենք՝ ԱՂՕԹՔ...

Անոնք որոնք հեռու կը մնան սրբազան ապրումներու վերացնող Խորհուրդը ստեղծող մթնոլորտէն – եկեղեցիէն – անոնք կ'ամչնան ոչ միայն աղօթքին՝ ճշմարտութիւն փոխանցող իրականութենէն, այլ իրենց իսկ վարակուած վարքէն, իրենց կրծող կասկածէն:

Աղօթելու չեն ամչնար անոնք, որոնք չեն զգացներ թէ կ'աղօթեն. «Ո՛վ կարդալ սիրտը գիտէ» ըսած է Թէքէեան...:

Եթէ կարելի ըլլայ թափանցել այս նրբութեան, լուծուած կ'ըլլայ աղօթքի ուժին հաւատալու բարդ խնդիրը: Ու այդ հաւատացողները պիտի կրնան ըմբռնել աղօթքի լեզուին քաղցրութիւնը, այն լեզուն, որ բառ չէ, բարբառ չէ այլ հոգեկան խոր իմացականութիւն:

Իրենց աղօթելը ի լուր մարդկանց բարձրաձայն յայտարարողները աղօթքին խորհուրդը եւ ճշմարտութիւնը եղծող մունետիկներ են...

†††

Աղօթքը սէր է, սէրը՝ աղօթք:

Աղօթելու պահուն կարելի չէ լեզու շարժել ինչպէս կարելի չէ սէրը բառերու վերածել...: Աղօթքի խորհուրդին ու գաղտնիքին չթափանցած անձեր մեծ տգէտներ են, որովհետեւ չեն ճանչցած ու չեն տեսած ճշմարտութեան լոյսը, ինչպէս կոյրը՝ արեւը...:

Հեթանոսներ են անոնք, որոնք իրենց հոգիին մէջ աղօթելու խորան մը չունին:

Մեծ աղօթողներ են անոնք, որոնք երբեք չեն փորձած ձայնի վերածել իրենց աղօթքը: Անոնք ունկնդիր եղած են միայն կոչնակներու հոգեխաչտ կանչին...:

Տաճարներ անձանձիր ու անձայն աղօթողներ են:

Աղօթելու հարազատ ոճը տաճարի պէս լուր քարանալն է...:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ

(արտաստպուած «Յուշարձան Յիսնամեակի» գիրքէն)

20 ՏԱՐԻՆԵՐՈՒ ՏԵՂԵԿԱԳՐԵՐ

Տ. Արմեն Աւ. Քառանյա Իշխանեանը, տարուէ տարի, յետեւեալ տեղեկագրերը արձանագրած է, Կիրակնօրեայ Դպրոցին մասին:

1980

Վերջապէս, 14 Սեպտեմբեր 1980-ին Խաչվերացի օրը բացումը կատարեցինք Ս. Յակոբ եկեղեցւոյս Կիրակնօրեայ Դպրոցին, որ կոչուած է շատ կարեւոր դեր կատարելու մեր զաւակներուն կրօնական դաստիարակութեան ու Ս. եկեղեցւոյս հաւատացեալ անդամներ պատրաստելու ուղղութեամբ: Ամիսներու աշխատանք իլեց դասացուցակի պատրաստութիւնը որ պէտք էր համադրեր թէ մեր ազգային եկեղեցւոյ աւանդութիւնները, թէ Աւետարանի պատգամները, եւ թէ արդիական պահանջները: Այս առընչութեամբ օգտուեցանք Կիլիկիոյ Կաթողիկոսարանի տրամադրելի նիւթերէն, Նիւ Եորքի Ազգային Առաջնորդարանի պատրաստած գիրքերէն ու՝ տեղական հրատարակութիւններէ: Այս գործին անգնահատելի նպաստ բերաւ օր. Այտա Պաղչէճեան իր ժամանակն ու մասնագիտութիւնը ի սպաս դնելով: Անոր օժանդակեց նաեւ տիկին Վալանթին Ապտալեան որոշ չափով նաեւ ամուսինը՝ Զաւէն: Կիրակնօրեան կրնայ ըլլալ մեր հպարտանքը քոյր եկեղեցիներու մօտ, եթէ մեր ծխականները տեսնեն այս նուիրական գործին բերելիք բարիքը ոչ միայն եկեղեցւոյս այլ ամբողջ համայնքին, ու գուրգուրանքով շրջապատեն, ու քաջալերեն իրենց զաւակները յաճախելու Կիրակնօրեայ Դպրոց: Սիրելիներ, եթէ Մոնթրէալի հոգեւոր ու զանազան կարիքներու ծառայութեան լծուած եմ, անցնող տարեշրջանին մեծագոյն ծառայութիւնս կը նկատեմ Կիրակնօրեայի իրագործումը: Ասոր համար ծափահարութիւն երբեք չեմ ակնկալեր. սակայն կ'ակնկալեմ որ կենաք այս գործի կողքին ու օգնեք որ մեր մատաղ սերունդին ապահով ու մաքուր ապագային համար սկսուած այս գործը բարգաւաճի եւ ոչ թէ խամրի: Կիրակնօրեայի պատասխանատուն է Պրն. Յարութիւն Փալանճեան իրեն գործակից ունենալով Տէր եւ Տիկ. Զաւէն եւ Վալանթին Ապտալեանները, Տիկ. Պայծառ Մանուկեանը եւ Օրդ. Պէթի Քիւփէեանը, որոնք բոլորն ալ սիրալոյսով լծուած են աշխատանքի: Այժմ Կիրակնօրեայ յաճախողներու թիւն է 40-50, եւ պատճառ մը չկայ որ դիւրիւթեամբ չքառապատկուի:

1981

Ուսուցչական կազմն է Պրն. Յարութիւն Փալանճեան՝ տնօրէն, Պրն. Զաւէն Ապտալեան, Օրդ. Պէթի Քիւփէեան, Տիկ. Վալանթին Ապտալեան, Տիկ. Յասմիկ Ինճէճիկեան: Ծրջան մը պաշտօնավարեց նաեւ տիկին Պայծառ Մանուկեան:

Ինչպէս գիտեք Կիրակնօրեան սկսաւ իր երկրորդ տարեշրջանը որ թուական առումով արձանագրած հոգ չէ թէ փոքր յաւելումով մեզի կու տայ այն յոյսը թէ ժամանակի ընթացքին ծնողներու արթնութեամբ այս օրինեալ գործը առաւել եւս ընդարձակուելով պիտի կարենայ շատ աւելի մանուկներու տալ կրօնական մաքուր դաստիարակութիւն: Կը կրկնեմ ծնողներ որքան շուտ անդրադառնան կրօնական

դաստիարակութեան կարեւորութեան եւ ըստ այնմ իրենց զաւակները քաջալերեն Կիրակնօրեայի դասընթացքներուն հետեւելու որ ճշդեմ բոլորովին ձրի է, այնքան մեծ ազգասիրական ու ծնողասիրական գործ կատարած կ'ըլլան: Կիրակնօրեայի աշակերտութեան թիւը կը տարուբերի 45-55ի միջեւ: Պարտինք հոս կարեւորութեամբ շեշտել ու խոր գնահատանք յայտնել Կիրակնօրեայի ուսուցչական կազմին որ առանց նիւթական ակնկալութեան, ձրիօրէն կը կատարէ իր նուիրական պարտականութիւնը: Աստուած օրհնէ զանոնք եւ վարձահատոյց ըլլայ:

1982

Կիրակնօրեայ Դպրոցը Աստուծոյ օրհնութեամբ սկսաւ իր երրորդ տարեշրջանը: Ուսուցչական կազմը կը բաղկանայ հետեւեալներէն. Պրն. Յարութին Փալանճեան՝ տնօրէն, Պրն. Զաւէն Ապտալեան, Օրդ. Ռուֆ Քիւփէեան, տիկիներ Վալանթին Ապտալեան, Յասմիկ Ինճէճիկեան եւ Սօսի Երէցեան, որոնք սիրալոյսով կը տանին իրենց Աստուածահաճոյ եւ օգտաշատ աշխատանքը: Այս տարի միջին հաշուով 50 աշակերտներ կը յաճախեն Կիրակնօրեան: Այս թիւը կը յուսանք ժամանակի ընթացքին յաւելում կը կրէ ծնողներու աւելի հասկացողութիւն ցուցաբերելովը: Հոս կ'ուզեմ ջերմ գնահատանքս արձանագրել Կիրակնօրեայի տնօրէնին եւ ուսուցչական կազմին իրենց մեծ նուիրումին համար: Թող Աստուած իր օրհնութիւնները առատ կերպով բաշխէ անոնց վրայ:

1983

Այս տարի եւս Տէրոջ կամբով, սակայն դժուարին պայմաններու մէջ շարունակուեցաւ Կիրակնօրեան, նկատելով որ Կիրակի օրերը ամէն անկին բռնուած է զանազան գործունէութիւններով: Ուսուցչական կազմը բաղկացած է հետեւեալ նուիրեալ անձերէն, որոնք առանց նիւթական դոյզն ակնկալութեան հաճոյքով կը կատարեն իրենց նուիրական պարտականութիւնը. Պրն. Յարութին Փալանճեան՝ տնօրէն, Պրն. Զաւէն Ապտալեան, Օրդ. Ռուֆ Քիւփէեան, տիկիներ Վալանթին Ապտալեան, Յասմիկ Ինճէճիկեան, Սօսի Երէցեան եւ Աղանի Տէր Աղամեան: Կիրակնօրեան տարուէ տարի կը հասունանայ եւ աշակերտութիւնը կ'ամբարէ քրիստոնէական գիտելիքներ, նոր սերունդը հոն կը սորվի Հայ Եկեղեցւոյ պատմութիւն, շարականներ եւայլն: Այս տարի առաջին անգամ ըլլալով Կիրակնօրեան իր տարեվերջի հանդէսը ունեցաւ, որ մեծապէս գնահատուեցաւ ծնողներու եւ հասարակութեան կողմէ: Այժմ Կիրակնօրեան կը հաշուէ 55-70ի մէջ տարուբերող աշակերտութիւն: Մեծապէս կը գնահատենք ուսուցչական կազմի ամբողջական նուիրումը: Իսկ ծնողներէն կ'ակնկալենք առաւել հետաքրքրութիւն:

1984

Այս տարի եւս Տէրոջ կամբով, իր աշխատանքները շարունակեց Կիրակնօրեան: Ուսուցչական կազմը բաղկացած է հետեւեալ նուիրեալ անձերէ, որոնք

առանց նիւթական դոյզն ակնկալութեան, հաճոյքով կը կատարեն իրենց նուիրական պարտականութիւնը.- Պրն. Յարութիւն Փալանճեան՝ տնօրէն, Պրն. Զաւէն Ապտալեան, Օրդ. Ռուբ Քիւիէեան, տիկնայք Վալանթին Ապտալեան, Յասմիկ Ինճէճիկեան, Սօսի Երէցեան եւ Աղանի Տէր Ադամեան: Վերջերս ուսուցչական կազմին միացան նաեւ տէր եւ տիկին Գաբրիէլ եւ Գլարա Թահանեանները: Կիրակնօրեան տարուէ տարի կը հասուննայ եւ աշակերտութիւնը կ'ամբարէ քրիստոնէական գիտելիքներ, կը սորվի Հայ Եկեղեցւոյ պատմութիւն, շարականներ, Սաղմոսներ, եւայլն: Կիրակնօրեան իր տարեվերջի հանդէսը ունեցաւ 20 Մայիսին յաւարտ Ս. Պատարագի եկեղեցւոյ մէջ, եւ մեծապէս գնահատուեցաւ ծնողներու եւ հասարակութեան կողմէ: Այժմ Կիրակնօրեան կը հաշուէ 65-70ի մէջ տարուերորդ աշակերտութիւն: Մեծապէս կը գնահատենք ուսուցչական կազմի ամբողջական նուիրումը: Իսկ ծնողներէն եւ համայքէն կ'ակնկալենք առաւել հետաքրքրութիւն:

1985

Այս տարի եւս Տիրոջ կամքով, իր աշխատանքները շարունակեց Կիրակնօրեան: Ուսուցչական կազմը բաղկացած է հետեւեալ նուիրեալ անձերէն, որոնք առանց նիւթական դոյզն ակնկալութեան, հաճոյքով կը կատարեն իրենց նուիրական պարտականութիւնը.- Պրն. Յարութիւն Փալանճեան՝ տնօրէն, Պրն. Զաւէն Ապտալեան, Օրդ. Ռուբ Քիւիէեան, տիկնայք Վալանթին Ապտալեան եւ Գլարա Թահանեան: Կիրակնօրեան տարուէ տարի կը հասուննայ եւ աշակերտութիւնը կ'ամբարէ քրիստոնէական գիտելիքներ, կը սորվի Հայ Եկեղեցւոյ պատմութիւն, շարականներ, Սաղմոսներ, եւայլն: Կիրակնօրեան իր տարեվերջի հանդէսը ունեցաւ 26 Մայիսին յաւարտ Ս. Պատարագի եկեղեցւոյ մէջ, եւ մեծապէս գնահատուեցաւ ծնողներու եւ ներկայ հասարակութեան կողմէ: Ծնողներէն եւ համայքէն կ'ակնկալենք առաւել հետաքրքրութիւն եւ գնահատանք:

1986

Այս տարի եւս Աստուծոյ կամքով, իր աշխատանքները շարունակեց Կիրակնօրեան: Ուսուցչական կազմը բաղկացած է հետեւեալ նուիրեալ անձերէն, որոնք առանց նիւթական դոյզն ակնկալութեան հաճոյքով կը կատարեն իրենց Աստուածահաճոյ պարտականութիւնը. Պրն. Զաւէն Ապտալեան՝ տնօրէն, Օրդ. Ռուբ Քիւիէեան, Պրն. Գաբրիէլ եւ տիկին Գլարա Թահանեաններ, Տիկ. Վալանդին Ապտալեան, Օրդ. Անի Զինչիմեան եւ օգնականներ: Կիրակնօրեան տարուէ տարի կը հասուննայ եւ կ'աճի աշակերտութեան թիւը, որ այս տարի մօտ 70 է: Այստեղ աշակերտները կ'ամբարեն քրիստոնէական գիտելիքներ, կը սորվին Հայ Եկեղեցւոյ պատմութիւն, շարականներ, Սաղմոսներ, եւայլն: Կիրակնօրեան իր տարեվերջի հանդէսը ունեցաւ 8 Յունիսի Կիրակին յընթացս Ս. Պատարագի եկեղեցւոյ մէջ եւ մեծապէս գնահատուեցաւ ծնողներու եւ ներկայ հաւատացեալներու կողմէ: Կիրակնօրեայի աշակերտները ելոյթ ունեցան Ս. Յակոբի ճաշկերոյթին: Համայնքս առաւել հետաքրքրութիւն պէտք է ցուցաբերէ Կիրակնօրեային:

1987

Այս տարի եւս Աստուծոյ կամքով եւ ուսուցիչներու անցկուն կամքին շնորհիւ իր աշխատանքները շարունակեց Կիրակնօրեան: Ուսուցչական կազմը բաղկացած է հետեւեալ նուիրեալ անձերէն, որոնք առանց նիւթական դոյզն ակնկալութեան, հաճոյքով կը կատարեն իրենց Աստուածահաճոյ պարտականութիւնը. Պրն. Զաւէն Ապտալեան՝ տնօրէն, Օրդ. Ռուֆ Քիւփէեան, Պրն. Գաբրիէլ Թահանեան եւ տիկինը՝ Գլարա, Տիկ. Վալանդին Ապտալեան, Օրդ. Անի Չինչինեան, Տիկ. Արտեմիս Ճելալեան, Պրն. Գառնիկ Տիրատուրեան եւ Տիկ. Վիքի Զարգաւատնեան:

Կիրակնօրեան ամէն տուեալ ունի հասուննալու եւ թիւի աճ ունենալու, պայմանով որ անոր շնորհքով տեղ տրամադրուի. յաճախ տեղէ տեղ կը քշուին, նրբանցքներու մէջ կամ երկու դասարան մէկ սենեակի մէջ կը թխմուին: Այս տարի աշակերտութեան թիւն է մօտ 65: Այստեղ աշակերտներուն կը ջամբուի քրիստոնէական գիտելիքներ, Հայ Եկեղեցոյ պատմութիւն, շարականներ, Սաղմոսներ, եւայլն: Կիրակնօրեան իր տարեվերջի հանդէսը ունեցաւ 14 Յունիսի Կիրակին, յընթացս Պատարագի եկեղեցոյ մէջ եւ մեծապէս գնահատուեցաւ ծնողներու եւ ներկայ հաւատացեալներու կողմէ: Համայնքս առաւել հետաքրքրութիւն պէտք է ցուցաբերէ այս նուիրական աշխատանքին հանդէպ:

1988

Այս տարի եւս Աստուծոյ կամքով եւ ուսուցիչներու անցկուն կամքին շնորհիւ իր աշխատանքները շարունակեց Կիրակնօրեան: Ուսուցչական կազմը բաղկացած է հետեւեալ նուիրեալ անձերէ, որոնք առանց նիւթական դոյզն ակնկալութեան, հաճոյքով կը կատարեն իրենց Աստուածահաճոյ պարտականութիւնը. Պրն. Զաւէն Ապտալեան՝ տնօրէն, Պրն. Գաբրիէլ Թահանեան եւ տիկինը՝ Գլարա, Տիկ. Վալանդին Ապտալեան, Օրդ. Անի Չինչինեան, Տիկ. Արտեմիս Ճելալեան եւ Տիկ. Վիքի Զարգաւատնեան:

Կիրակնօրեան ամէն տուեալ ունի հասուննալու եւ թիւի աճ ունենալու, պայմանով որ անոր շնորհքով տեղ տրամադրուի. յաճախ նրբանցքէ նրբանցք կը քշուին կամ լաւագոյն պարագային երկու կարգ մէկ սենեակի մէջ կը թխմուին: Վերջերս այսքանն ալ շատ տեսնուած է, եւ ուսուցչական կազմը ճարահատ, այսօր Հոգաբարձութեան հետ հանդիպում պիտի ունենար ճշդելու համար թէ Կիրակնօրեան կարելի պիտի ըլլա՞յ պահել թէ ոչ: Այս տարի աշակերտութեան թիւն է 70: Այստեղ աշակերտներուն կը ջամբուի քրիստոնէական գիտելիքներ, Հայ Եկեղեցոյ պատմութիւն, շարականներ, Սաղմոսներ, եւայլն: Կիրակնօրեան իր տարեվերջի հանդէսը ունեցաւ 1 Մայիսի Կիրակին, յաւարտ Ս. Պատարագի Ահարոնեան սրահին մէջ եւ մեծապէս գնահատուեցաւ ծնողներու եւ ներկայ հաւատացեալներու կողմէ: Համայնքս առաւել հետաքրքրութիւն պէտք է ցուցաբերէ այս նուիրական աշխատանքին հանդէպ:

1989

Այս տարի եւս Աստուծոյ կամքով եւ ուսուցիչներու աննկնուն կամքին շնորհիւ իր աշխատանքները շարունակեց Կիրակնօրեան: Ուսուցչական կազմը բաղկացած է հետեւեալ նուիրեալ անձերէ, որոնք առանց նիւթական դոյզն ակնկալութեան, հաճոյքով կը կատարեն իրենց Աստուածահաճոյ պարտականութիւնը. Պրն. Զաւէն Ապտալեան՝ տնօրէն, Պրն. Գաբրիէլ Թահանեան եւ տիկինը՝ Գլարա, Տիկ. Վալանդին Ապտալեան, Օրդ. Անի Զինչիւնեան, Տիկ. Արտեմիս Ծելալեան եւ Տիկ. Վիքի Զարգաւատճեան:

Կիրակնօրեան ամէն տուեալ ունի հասուննալու եւ թիւի ան ունենալու, պայմանով որ անոր շնորհքով տեղ տրամադրուի: Հոս պիտի չկրկնեմ անցեալ տարուան ըսածս: Կիրակնօրեայի մէջ փոքրերուն կը ջամբուի քրիստոնէական գիտելիքներ, Հայ Եկեղեցւոյ պատմութիւն, շարականներ, Սաղմոսներ, եւայլն: Կիրակնօրեան իր տարեվերջի հանդէսը ունեցաւ 21 Մայիսի Կիրակին, յաւարտ Ս. Պատարագի Ահարոնեան սրահին մէջ եւ մեծապէս գնահատուեցաւ ծնողներու եւ ներկայ հաւատացեալներու կողմէ: Աշակերտութեան թիւը շուրջ 70 է: Համայնքս առաւել հետաքրքրութիւն պէտք է ցուցաբերէ այս նուիրական գործին հանդէպ:

1990

Այս տարի եւս Աստուծով եւ ուսուցիչներու աննկնուն կամքին շնորհիւ իր աշխատանքները շարունակեց Կիրակնօրեան: Ուսուցչական կազմը բաղկացած է հետեւեալներէն. Պրն. Զաւէն Ապտալեան՝ տնօրէն, Տ. եւ Տ. Գաբրիէլ եւ Գլարա Թահանեան, Տիկ. Վալանդին Ապտալեան, Օրդ. Անի Զինչիւնեան, Տիկ. Արտեմիս Ծելալեան եւ Տիկ. Վիքի Զարգաւատճեան: Տարեվերջի հանդէսը տեղի ունեցաւ 6 Մայիսին եւ ներկաներուն կողմէ մեծապէս գնահատուեցաւ: Աշակերտութեան թիւը շուրջ 70 է: Առաւել հետաքրքրութիւն պէտք է ցուցաբերել այս նուիրական գործին հանդէպ:

1991

Այս տարի եւս, Աստուծոյ եւ ուսուցիչներու աննկնուն կամքին գնով, իր աշխատանքները շարունակեց Կիրակնօրեան անտանելի պայմաններու մէջ: Ուսուցչական կազմը բաղկացած է հետեւեալներէն. Պրն. Զաւէն Ապտալեան՝ տնօրէն, Տ. եւ Տ. Գաբրիէլ եւ Գլարա Թահանեան, Տիկ. Վալանդին Ապտալեան, Տիկ. Արտեմիս Ծելալեան, Տիկ. Վիքի Զարգաւատճեան եւ Օրդ. Մարօ Տէմիրճեան: Տարեվերջի հանդէսը տեղի ունեցաւ 27 Մայիսին ու մեծապէս գնահատուեցաւ ներկաներուն կողմէ: Աշակերտութեան թիւը շուրջ 90 է: Առաւել հետաքրքրութիւն պէտք է ցուցաբերել այս նուիրական գործին հանդէպ: Կրօնական դաստիարակութեան գլուխին տակ կ'իյնայ նաեւ գործադրուած ճիշդ մեր աշակերտութիւնը վարժեցնելու Ս. Եկեղեցի յաճախել Կիրակի օրերը. այս ուղղութեամբ, Ամենօրեայի տնօրէն Պրն. Յակոբ Պուկարեանի հետ ծրագրի մը շուրջ խորհրդակցած ենք: Յաջողութեան մէջ մեծ դեր վերապահուած է ծնողներուն:

1992

Այս տարի եւս, Աստուծոյ եւ ուսուցիչներու աննկնուն կամքին գնով, իր աշխատանքները շարունակեց Կիրակնօրեան միշտ պիտի ըսեմ, անտանելի պայմաններու մէջ: Ուսուցչական կազմը բաղկացած է հետեւեալներէ. Պրն. Զաւէն Ապտալեան՝ տնօրէն, Տ. եւ Տ. Գաբրիէլ եւ Գլարա Թահանեան, Տիկ. Վալանդին Ապտալեան, Տիկ. Արտեմիս Ճելալեան եւ Տիկ. Վիքի Զարգաւատճեան: Այս կազմին կ'օժանդակեն Կիրակնօրեայէն շրջանաւարտ 6 պատանիներ, տալով մեզի այն գոհունակութիւնը, թէ ցանուած սերմերը, թափուած ճիգերը ի զուր չեն անցնիր: Տարեվերջի հանդէսը տեղի ունեցաւ 3 Մայիսին ու մեծապէս գնահատուեցաւ ներկաներուն կողմէ: Աշակերտութեան թիւը 70ի շուրջ է: Առաւել հետաքրքրութիւն պէտք է ցուցաբերել այս նուիրական գործին հանդէպ: Կրօնական դաստիարակութեան գծով մեծապէս օգտակար էր նաեւ Առաջնորդարանի Կրօնական Դաստիարակութեան պատասխանատու Բարեշ. Շանթ Սրկ. Գազանճեանի այցելութիւնը համայնքին: Ան 4 օրեր մնալով հոս, տուաւ դասախօսութիւններ, ունեցաւ հանդիպումներ ու ժողովներ պատասխանատուներու հետ: Այս առթիւ յայտնենք նաեւ թէ շրջանէս 8 հոգիներ մասնակցեցան Առաջնորդարանի հաստատած Գրիգոր Տաթեւացի լսարանին: Սիրելիներ, անցեալ տարուան տեղեկագրիս մէջ կը խօսէի ծրագրի մը մասին, որ կը հետապնդէր մեր աշակերտութիւնը վարժեցնել Կիրակի օրերը եկեղեցի յաճախելու: Դժբախտաբար ծրագիրը չսկսած ձախողեցաւ: Քիչ վերը կ'ըսէի թէ պէտք է այսօրուրնէ մտահոգուինք եկեղեցի յաճախողներու թիւը չպակսեցնելու համար: Արդարեւ դժուարին աշխատանքի մըն է վերածուած այդ. եւ այս իրողութեան լոյսին տակ է որ չափազանց գնահատելի կը դառնայ Եկեղեցասիրացի եւ Կիրակնօրեայի աշխատանքը: Կը մաղթեմ որ անոնց գործունէութեան շրջագիծը աւելի ընդարձակուի եւ ընդգրկէ ամբողջ համայնքս:

1993

Այս տարի եւս, Խաչվերացի օրը, Աստուծոյ շնորհիւ եւ ուսուցիչներու աննկնուն կամքին գնով, իր աշխատանքները սկսաւ Կիրակնօրեան դարձեալ պիտի ըսեմ, անտանելի ամօթալի պայմաններու մէջ: Ուսուցչական կազմը բաղկացած է հետեւեալ կամաւորներէն. Պրն. Զաւէն Ապտալեան՝ տնօրէն, Տ. եւ Տ. Գաբրիէլ եւ Գլարա Թահանեան, Տիկ. Վալանդին Ապտալեան, Տիկ. Արտեմիս Ճելալեան եւ Տիկ. Վիքի Զարգաւատճեան: Այս կազմին կ'օժանդակեն Կիրակնօրեայէն շրջանաւարտ 6 պատանիներ, տալով մեզի այն գոհունակութիւնը, թէ ցանուած սերմերը, թափուած ճիգերը ի զուր չեն անցնիր, այլ օրհնաբեր արդիւնք կու տան: Մեր այս պատանիները կը հրատարակեն նաեւ խմորատիպ «Մաշտոցի Արձագանգ» թերթիկը հոգեւոր բովանդակութեամբ. ցարդ 6 թիւ հրատարակած են: Տարեվերջի հանդէսը տեղի ունեցաւ 16 Մայիսին ու մեծապէս գնահատուեցաւ ներկաներուն կողմէ: Աշակերտութեան թիւը 70ի շուրջ է: Շատ շատ աւելի խիղճ ու գուրգուրանք պէտք է ցուցաբերուի այս նուիրական գործին հանդէպ: Այս

առթիւ յայտնենք նաեւ թէ 8 հոգիներ մասնակցեցան առաջնորդարանի հաստատած Գրիգոր Տաթեւացի լսարանին:

1994

Այս տարի եւս, Խաչվերացի օրը, Աստուծոյ շնորհիւ եւ ուսուցիչներու աննկնուն կամքին գնով, իր աշխատանքները սկսաւ Կիրակնօրեան դարձեալ պիտի ըսեմ ու կրկնեմ, անտանելի, ամօթալի պայմաններու մէջ: Ուսուցչական կազմը բաղկացած է հետեւեալ կամաւորներէ. Պրն. Զաւէն Ապտալեան՝ տնօրէն, Տ. եւ Տ. Գաբրիէլ Թահանեան, Տիկ. Արտեմիս Ճելալեան եւ Տիկ. Վիքի Զարգաւատճեան, Պրն. Թորոս Պապիկեան եւ Տիկ. Վալանթին Ապտալեան՝ աջ բազուկը տնօրէն ամուսնոյն, որ քառասուն օրեր առաջ մահացաւ, մեծ բաց ստեղծելով մեր Կիրակնօրեայի եւ հոգեւոր աշխատանքներուն մէջ: Ան առաջիններէն էր որոնցմով կազմեցինք Կիրակնօրեան: Յարգանք իր գործին եւ յիշատակին: Կիրակնօրեայի ուսուցչական կազմին կ'օժանդակեն շրջանաւարտ 6 պատանիներ: Մեր այս պատանիները կը հրատարակեն նաեւ խմորատիպ «Մաշտոցի Արձագանգ» թերթիկը հոգեգոր բովանդակութեամբ. ցարդ հրատարակած են 12 թիւ: Աշակերտութեան թիւը 70ի շուրջ է: Շատ աւելի գուրգուրանք պէտք է ցուցաբերուի այս նուիրական գործին հանդէպ: Այս առթիւ յայտնենք նաեւ թէ 8 հոգիներ մասնակցեցան Առաջնորդարանի հաստատած Գրիգոր Տաթեւացի լսարանին:

1995

Հոգաբարձութիւնս աչքի առջեւ ունենալով Կիրակնօրեայ վարժարանի դերն ու նշանակութիւնը, նշանակեց յատուկ յանձնախումբ մը Կիրակնօրեայով զբաղուելու համար: Յանձնախումբի անդամներն են Տիկ. Տիրուկ Մաննիկեան՝ Հոգաբարձութեան ներկայացուցիչ, Տիարք Լեւոն Եաղճեան՝ ատենապետ, Հայկ Գազանճեան՝ ատենադպիր, Տիկ. Վիգի Զարգաւատճեան եւ Օր. Մարօ Տէմիրճեան: Քանի մը ժողովներով կազմեցինք նոր ծրագիր, Առաջնորդարանէն ու Կաթողիկոսարանէն գնեցինք անհրաժեշտ գրականութիւն, կազմեցինք ուսուցչական կազմ, տնօրէնուհի նշանակելով Օրդ. Մարօ Տէմիրճեանը: Ուսուցչական կազմը կը բաղկանայ Վիգի Զարգաւատճեանէ, Անի Եաղճեանէ, Աւետիս Բանոյեանէ, Արտեմիս Ճելալեանէ, Շողիկ Նաճարեանէ, Հուրի Զարգաւատճեանէ, Սիլվա Արթինեանէ եւ օգնականներէ: Իսկ կանոնաւորութեան համար որոշուեցաւ օգտագործել ամենօրեայ վարժարանի կարգ մը դասարանները: Լիպոյս ենք որ այս նոր կարգադրութեամբ աւելի յաջող արդիւնքներ ձեռք կը բերենք ի Փառս Աստուծոյ եւ ի պայծառութիւն Հայց. Առաք. Եկեղեցւոյ:

Կիրակնօրեայի Լաւալցի աշակերտներուն համար յատուկ օթօպիս յատկացուցած ենք: Կրօնական դաստիարակութեան գծով 12 պատանիներ դրկեցինք Տաթեւացի Լսարանի համախումբին: Իսկ Հոկտ. 20 եւ 21ին Համա-Գանատական Երիտասարդական Սէմինար-Համախումբի մը մասնակիցները հիւրընկալեցինք: Զեւոնարկը կազմակերպուած էր Ազգ. Առաջնորդարանի Կրօնա-

կան Դաստիարակության Խորհուրդին կողմէ եւ բնականաբար պատուարժան Հոգաբարձության ամբողջական օժանդակութեամբ իրագործուեցաւ:

1996

Կիրակնօրեայ յանձնախումբի հոգաբարձութեան ներկայացուցիչն է Տիկ. Տիրուկ Մանճիկեան: Անդամներ. Լեւոն Եաղճեան՝ ատենապետ, Հայկ Գազանճեան՝ ատենադպիր, եւ Տիկ. Վիգի Զարգաւաթեան: Տնօրէնուհի Օրդ. Մարօ Տէմիրճեան: Ուսուցչական կազմ Յասմիկ Գանայեան, Աւետիս Բանոյեան, Շողիկ Նաճարեան, Հուրի Տէյիրմէնճեան, Անի Գլընճեան, Յասմիկ Նաճարեան եւ Երան Լոշխանեան: Այս տարի եւս կը գործածուին Ամենօրեայ վարժարանի յարմարութիւնները: Կիրակնօրեայի մէջ մեր զաւակները կը ստանան Առաքելական եկեղեցւոյ հաւատամքն ու շարականները, հայ սուրբերու կենսագրականները եւ Սուրբ գրքի ընտիր պատգամները: Գաղութիս թիւին համեմատ աշակերտութեան թիւը քիչ է, սակայն նախորդ տարիներու բաղդատմամբ յաւելում արձանագրեց: Այժմ արձանագրուած ունինք 90է աւելի աշակերտներ: Կիրակնօրեան նաեւ հրատարակեց «Մաշտոցի Արձագանգ» պարբերաթերթը, մէկ թիւ սակայն ճոխ բովանդակութեամբ: Լաւալի աշակերտներուն համար հաստատած ենք օթօպիսի սպասարկութիւն: Կրօնական դաստիարակութեան գծով 8 պատանիներ ղրկեցինք առաջնորդարանի կազմակերպած սեմինարին Կիրակնօրեայի շրջանաւարտներէն եւ դպրաց դասի պատանիներէն:

Հոս պարտք կը զգամ խորին շնորհակալութիւնս յայտնել թէ՛ յանձնախումբին իրենց անխոնջ ուշադրութեան համար եւ թէ՛ տնօրէնուհիին եւ ուսուցչական կազմին, որոնք սիրալոյսով նուիրուած են այս Աստուածահաճոյ աշխատանքին:

1997

Կիրակնօրեայ վարժարանի հոգաբարձութեան ներկայացուցիչն է Տիկ. Տիրուկ Մանճիկեան: Յանձնախումբի անդամներ. Լեւոն Եաղճեան՝ ատենապետ, Հայկ Գազանճեան՝ ատենադպիր եւ Տիկ. Վիգի Զարգաւաթեան: Տնօրէնուհի Օրդ. Մարօ Տէմիրճեան: Ուսուցչական կազմ Յասմիկ Գանայեան, Աւետիս Բանոյեան, Շողիկ Նաճարեան, Հուրի Տէյիրմէնճեան, Անի Գլընճեան, Յասմիկ Նաճարեան եւ Երան Լոշխանեան: Այս տարի եւս կը գործածուին Ամենօրեայ վարժարանի յարմարութիւնները: Կիրակնօրեայի մէջ մեր զաւակները կը ստանան Առաքելական եկեղեցւոյ հաւատամքն ու շարականները, հայ սուրբերու կենսագրականները եւ Սուրբ գրքի ընտիր պատգամները: Գաղութիս թիւին համեմատ աշակերտութեան թիւը քիչ է, սակայն նախորդ տարիներու բաղդատմամբ յաւելում արձանագրեց: Այժմ արձանագրուած ունինք 90է աւելի աշակերտներ: Կիրակնօրեան նաեւ հրատարակեց «Մաշտոցի Արձագանգ» պարբերաթերթը, մէկ թիւ սակայն ճոխ բովանդակութեամբ: Լաւալի աշակերտներուն համար հաստատած ենք օթօպիսի սպասարկութիւն:

Հոս պարտք կը զգամ խորին շնորհակալութիւնս յայտնել թէ՛ յանձ-

նախումբին իրենց անխոնջ ուշադրության համար եւ թէ՛ տնօրէնութիւնն եւ ուսուցչական կազմին, որոնք սիրալոյսով նուիրուած են այս Աստուածահաճոյ աշխատանքին: Տնօրէնութիւնն, անձնական պատճառներով 1996-97 տարեշրջանի աւարտին հրաժարեցաւ: Նոր տնօրէն նշանակուեցաւ Տիար Թորոս Պապիկեան: Կատարեալ յաջողութիւն կը մաղթենք նոր տնօրէնին:

1998

Կիրակնօրեայ վարժարանի հոգաբարձութեան ներկայացուցիչն է Պրն. Զաւէն Ինճէճիկեան: Յանձնախումբի անդամներ Լեւոն Եաղճեան եւ Տիկ. Վիգի Զարգաւատճեան: Այս տարի եւս տնօրէնի պաշտօնը վստահուեցաւ Պրն. Թորոս Պապիկեանի որ ձեռնհասօրէն կը տանի իր ստանձնած պարտականութիւնը: Ուսուցչական կազմը բաղկացած է հետեւեալներէ. Անի Գլընճեան, Անի Խաշխաշեան, Անի Նիլեան, Արտեմիս Ճելալեան, Կարօ Նոխստեան, Յասմիկ Նաճարեան, Գէորգ Լոշխաճեան, Գօգօ մարտիրոսեան, Մարիա Քէօսէեան, Ներսէս Հատիտեան, Սալբի Մարտիրոսեան, Շողիկ Նաճարեան, Դաւար Յակոբեան, Երան Լօշխաճեան եւ Զարմինէ Թաշճեան:

Այս տարի եւս գործածուեցան Ամենօրեայ վարժարանի յարմարութիւնները: Կիրակնօրեայի մէջ մեր զաւակները կը ստանան Առաքելական եկեղեցւոյ հաւատամքն ու շարականները, հայ սուրբերու կենսագրութիւնները եւ Սուրբ գրքի ընտիր պատգամները: Գաղութիւն թիւին համեմատ աշակերտութեան թիւը քիչ է, սակայն նախորդ տարիներու բաղդատմամբ յաւելում արձանագրեց: Այժմ ունինք 74 եւ աւելի աշակերտներ: Կիրակնօրեան նաեւ հրատարակեց «Մաշտոցի Արձագանգ» տարեգիրքը, ճոխ բովանդակութեամբ: Լաւալի աշակերտներուն համար հաստատած ենք օթօպիսի սպասարկութիւն:

Հոս պարտք կը զգամ խորին շնորհակալութիւնս յայտնել թէ՛ Հոգաբարձութեան, թէ՛ Կիրակնօրեայի յանձնախումբին իրենց մնայուն ուշադրութեան համար, տնօրէնին՝ իր անխոնջ նուիրումին համար, նաեւ ուսուցչական կազմին, որ սիրալոյսով լծուած է այս Աստուածահաճոյ աշխատանքին:

1999

Կիրակնօրեայ վարժարանի հոգաբարձութեան ներկայացուցիչն է Տիար Զաւէն Ինճէճիկեան: Յանձնախումբի անդամներ Լեւոն Եաղճեան եւ Տիկ. Վիգի Զարգաւատճեան: Այս տարի եւս տնօրէնի պաշտօնը վստահուեցաւ Պրն. Թորոս Պապիկեանի որ ձեռնհասօրէն կը տանի իր ստանձնած պարտականութիւնը: Իսկ ուսուցչական կազմը բաղկացած է հետեւեալ կամաւորներէ. Դաւար Յակոբեան, Անի Գլընճեան, Նանօր Նիլեան, Յասմիկ Նաճարեան, Գէորգ Լոշխաճեան, Գօգօ մարտիրոսեան, Մարիա Քէօսէեան, Ներսէս Հատիտեան, Սալբի Մարտիրոսեան, Շողիկ Նաճարեան, Երան Լօշխաճեան, Զարմինէ Թաշճեան, Վարուժ Իշխանեան, Մարի Գըրգանճեան եւ Գարօլ Գըրգանճեան:


Այս տարի եւս գործածուեցան Ամենօրեայ վարժարանի յարմարութիւնները:

Կիրակնօրեայի մէջ մեր զաւակները կը ստանան Առաքելական եկեղեցւոյ հաւատամքն ու շարականները, հայ սուրբերու կենսագրութիւնները եւ Սուրբ գրքի Սաղմոսները եւ ընտիր պատգամները: Գաղութիս թիւին համեմատ աշակերտութեան թիւը բաւարար չէ: Այժմ ունինք 77 աշակերտներ: Անցնող տարեշրջանին եւս Կիրակնօրեան հրատարակեց «Մաշտոցի Արձագանգ» պարբերաթերթը ճոխ ու հետաքրքիր բովանդակութեամբ: Կը շարունակուի օթօպիւսի սպասարկութիւն:

Հոս պարտք կը զգամ խորին շնորհակալութիւնս յայտնել թէ՛ Հոգաբարձութեան, թէ՛ Կիրակնօրեայի յանձնախումբին իրենց մնայուն ուշադրութեան համար: Շնորհակալութիւն՝ տնօրէնին, իր անխոնջ նուիրումին համար, նաեւ ուսուցչական կազմին, որ սիրալոյսով լծուած է այս Աստուածահաճոյ աշխատանքին: Ժողովուրդէն ալ կ'ակնալենք առաւել գորգուրանք այս նուիրական գործին հանդէպ: Այս տարի քսանամեակն է Կիրակնօրեային: Կը ծրագրենք հանդիսաւոր կերպով նշել այս կարեւոր թուականը:



20 Տարիներու Ներկայութեան Պատկեր



1981- 1997 տարիներուն աղբիւրը, Տէր Հօր Տեղեկագիրն է:

1998- 2000 տարիներուն աղբիւրը, Կիրակնօրեայ Դպրոցին տոմարն է:

20 Տարիների Ուսուցչական Կազմ

[illegible]



ՔԱՆԱ ՏԱՐԻՆԵՐՈՒ ՁԻՅԱՏԱԿՆԵՐ





ՃԳՐԻՈՏՈՎԱԾ ՎԱՍԳՆԱԿԱՆՈՒՆԵՐ



ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԷՆՆԵՐՈՒ ԽՕՍՔԵՐԸ

9 Ապրիլ 2000ի թվաստղանի միջոցին արտասանուած

Պրն. Յարութին Փալանճեան՝ Առաջին տնօրէն Կիրակնօրեայ Դպրոցի

Բարի եկած էք բոլորդ, շնորհակալութիւն կը յայտնեմ որ եկած էք հակա-
ռակ կլիմայի վատ կացութեան:

Հոս իրաւունք չունիմ բացասական երեւոյթներու մասին խօսելու, իսկ դրա-
կան ոչ մէկ բան ունիմ ըսելու: Միայն երեք թելադրութիւններ ունիմ ընելիք.

Ա.- Ձեր ուշադրութեան կ'ուզեմ հրաւիրել թէ դուրսը շատ գալլեր կան
որոնք ոչխարի մորթով կը փորձեն մեզի մօտենալ: Ուշադրութիւն ըրէք:

Բ.- Կիրակնօրեայ Դպրոցէն ներս ձեր յիշողութիւններն ու ապրումները եթէ
կարելի է մեզի գրի փոխանցեցէք:

Գ.- Դուք Վաղուան հայրերն ու մայրերն էք, ձեր զաւակները Կիրակնօրեայ
ղրկեցէք:

Պրն. Զաւէն Ապտալեան

Նախկին աշակերտներէն բաւական ծանօթ դէմքեր կը տեսնեմ, որոնք
մեծցած են արդէն: Տարիներու ընթացքին չեմ գիտեր ինչո՞ւ այս աշակերտները
Կիրակնօրեայ Դպրոցը սիրեցին: Ես ինծի կը հարցնեմ թէ անոնք ինչո՞ւ վկայական
ստանալէ ետք, յաջորդ տարին ալ եկան եւ փափաքեցան շարունակել Կիրակ-
նօրեան: Ստիպուած, իրենց համար յատուկ դասարաններ բացինք, եւ իբրեւ հայր,
օգնական, ընկեր, խորհրդատու սկսանք մօտէն հետաքրքրուիլ իրենցմով, տունե-
րու այցելութիւններ ընելով: Անոնք իրենց սրտերը բացին ընկալելու մեր խորհուրդ-
ները:

Տարի մը ետք անոնք դարձեալ եկան եւ իրենց մասնակցութիւնը բերին
որպէս օգնականներ, շատեր արդէն մաս կը կազմէին դպրաց դասին: Մեր տնային
հանդիպումները շարունակուեցան տարիներու ընթացքին: Ծատ ուրախ եմ որ անոնք
տիպար, մաքուր քրիստոնեաներ դարձած են, կապուած մնացած են հայ ազգին
ու եկեղեցիին, եւ պատրաստ՝ իրենց մասնակցութիւնը բերելու եկեղեցիին եւ
Կիրակնօրեայի ծառայութեան:

Ծատ կարելոր է քրիստոնէական դաստիարակութիւնը որ ոչ միայն եկեղեցւոյ
եւ Կիրակնօրեայ դպրոցներու պարտականութիւնն է այլ նաեւ ծնողներու: Ծնողները
պէտք է իրենց զաւակները քաջալերեն եկեղեցի յաճախելու:

Երիտասարդները յաճախ կ'ազդուին ընկերներէ, եւ վատ ուղղութիւններու կը
մօտենան: Ընտանիքը պատասխանատու է իր զաւկին դաստիարակութեան:
Յաճախ ծնողներ կը տարապիւն իրենց զաւակներու վատ վարք ու բարքին համար
որ Գանատական հոսանքի ազդեցութիւն է: Ծնողները պէտք է իրենց զաւակները
սիրաջօժար ուղղարկեն Կիրակնօրեայ Դպրոց որպէսզի անոնք քրիստոնէական
դաստիարակութիւն ստանան:

Օրդ. Մարտ Տեմիրճեան

Ուրախ եմ որ առիթն ունեցած եմ ծառայելու Հայաստանեաց Եկեղեցւոյ:

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս կ'ըսէ «Իմ ճամբաս քարոտ է եւ՝ փշոտ»: Ինչպէս տեսաք սահիկներուն մէջ, այս ճամբան դժուարութիւններով լեցուն է, ճիշդ է որ տարիէ տարի կը փոխուին անոնք, սակայն դժուարութիւնները միշտ ներկայ են: Տարիներ ետք մեր տարած աշխատանքին արդիւնքին հասնելու համար պէտք է հիմա պայքարինք, հաւատքով պայքարինք:

Ինձի համար նշանաբան եղած է. «գորութեամբ եւ ուժով չէ, Իմ Հոգիովս՝ կ'ըսէ զօրաց Տէրը»: Աստուծոյ Սուրբ Հոգին է որ մեզ կ'առաջնորդէ:

Մեր քրիստոնէական հաւատքը պահելու համար պէտք է պայքարինք, եւ ինչպէս մեր նախահայրերը ջանք չեն խնայած մեր կրօնքը պահելու եւ զայն մեզի փոխանցած են, մենք ալ մեր կարգին պէտք է շարունակենք անոնց ճամբան մեր հաւատքը փոխանցելով գալիք սերունդին:

Պրն. Թորոս Պապիկեան

Ես Կիրակնօրեայ Դպրոցի կնիքը ունիմ որուն վրայ գրուած է 1980 թըւականը՝ որպէս Կիրակնօրեայ Դպրոցի հիմնադրութեան տարի: Նկատի առնելով որ 2000 թուականը Կիրակնօրեայ Դպրոցի հիմնադրութեան քսանամեակն է, փափաքեցանք հաւաքել նախկին աշակերտները եւ ուսուցիչները: Ասոր համար յանձնախումբ մը յառաջացուցինք կազմուած Կիրակնօրեայ Դպրոցի նախկին բոլոր տնօրէններէն, նախկին եւ ներկայ ուսուցիչներէ եւ ծնողներէ: Այս թէյասեղանը կազմակերպեցինք ի մի խմբելու համար Կիրակնօրեայ Դպրոցի նախկին աշակերտներն ու ուսուցիչները:

Վեց տարի չէ անցած Մոնթրէալ հաստատութիւն: Ասկէ առաջ գործի հրամայականով մօտաւորապէս վեց տարուայ համար Տուպայ մնացի, ուր առաջին տարին հազիւ տասը վայրկեան անձրեւ տեղացած էր:

Առաջին տարուան ընթացքին նկատեցի թէ տեղացիները անապատի մէջ ծառեր կը տնկէին, եւ խողովակներով կաթիլ-կաթիլ ջուր կու տային այդ ծառերուն: Երբ հարցուցի թէ ինչո՞ւ այդ ծառերը կը տնկեն եւ տարին 365 օր կը փորձեն ջուր հասցնել անոնց, պատասխանեցին թէ եթէ ծառերը շատնան ամպեր կը հաւաքուին եւ անձրեւ կը տեղայ: Երբ անձրեւ տեղայ ծառերը կը զօրանան եւ կը շատնան: Իրապէս վեցերորդ տարիս օր եղաւ որ 10 ժամ անձրեւ տեղաց: Այսօր եթէ մէկը ըսէ թէ անապատի մէջ անձրեւ կը տեղայ ես կը հաւատամ, որովհետեւ տեսած եմ:

Կիրակնօրեայի կեանքն ալ կը նմանի անապատի ծառերուն:

Սուրբ Յակոբ Մայր եկեղեցւոյ հիմնադրութիւնէն քսան տարի ետք հիմնուած է Կիրակնօրեայ Դպրոցը շատ դժուարին պայմաններու մէջ: Խողովակներով ջուր հասցուցին որովհետեւ անձրեւ չկար: Տարիներու ընթացքին Եկեղեցւոյ հովին ու

հոգաբարձությունը մեծ աշխատանք տարած են Կիրակնօրեայ Դպրոցին համար:

Տարիները կ'անցնին, եւ օր մը չէ օր մը անձրեւ կու գայ եւ կը դիւրանայ ծառերուն հոգ տանիլը:

Շնորհակալութեան խօսք ունիմ Կիրակնօրեայ Դպրոց հիմնելու որոշումն առնող անհատներուն որոնք սկսած են այս դժուարին գործը: Բոլորը երանի կու տան ինծի որ Կիրակնօրեան ունի դասարաններ: Իսկապէս, միայն երկու շաբաթ առաջ երբ սենեակի մը բանալին տուին որպէս Կիրակնօրեայ դպրոցի գրասենեակ, շատ ուրախացայ, որովհետեւ սենեակ չունենալը պատճառ դարձած էր որ տնօրէններ եւ ուսուցիչներ իրենց մօտ պահեն Կիրակնօրեայ Դպրոցի տոմարներն ու պիտոյքները: Այդ պատճառաւ հաստատ տեղեկութիւններ չունինք Կիրակնօրեայ Դպրոցի նախորդ տարիներու մասին:

Դժուարութիւններէն մէկն ալ այն է որ «Հունձքը շատ է, մշակները քիչ»: Երջանկայիշատակ Սահակ Կաթողիկոս Կիրակնօրեայ Դպրոցի նկատմամբ իր կոնդակին մէջ յիշած է թէ Կիրակնօրեայ Դպրոցի աշակերտ կրնան ըլլալ 4-17 տարեկանները: Մեր Կիրակնօրեայ Դպրոցի շրջանաւարտ տարին Տրդ դասարանն է: Բարձր դասարաններ չունինք որովհետեւ ուսուցիչներ չունինք:

Եկեղեցին ընդհանրապէս պատասխանատու է իր սեմէն ներս մկրտուած մանուկներուն եւ պատասխանատու՝ անոնց մկրտութիւնէն մինչեւ մահ: Այդ պատճառաւ պարտաւոր է հետաքրքրուիլ անոնցմով եւ չորս տարեկանին զանոնք Կիրակնօրեայ Դպրոցի մաս կազմելու հրաւիրել: Ո՞վ այսօր լման անուանացանկ մը ունի մկրտուած զաւակներուն եւ անոնցմով կը հետաքրքրուի: Սա գործ մըն է որ մարդուծի եւ ժամանակի կը կարօտի:

Եկեղեցին պատասխանատու է Կիրակնօրեայ Դպրոցը աւարտող 14-15 տարեկան պատանիներուն, զանոնք հաւաքելու եւ պատրաստելու մինչեւ 18 տարեկան որպէսզի ասուկէ ետք անդամագրուին եկեղեցւոյ եւ աշխատանքներ տանին:

Կը գանգատինք թէ երիտասարդութեան թիւը քիչ է եկեղեցւոյ մէջ: Ինչո՞ւ չենք մտածեր միջոցներու մասին եղածներն ալ չկորսնցնելու համար: Երբէք ուշ չէ: Յոյսով ենք, որ անոնք որոնք Կիրակնօրեայ Դպրոցի հետ կապ ունեցած են նախորդ տարիներու ընթացքին, ըլլան ամպեր եւ օգնեն անձրեւի տեղալուն, եւ ներկայ սերունդը զօրանալով օգնէ ապագայ սերունդին:

Լիբանանի մէջ Կիրակնօրեայ Դպրոցներու քսանամեակին կազմուեցաւ ՀԵԿԴՈՄը: Ես յոյսով եմ որ նման բան մը հոս ալ կրկնուի եւ օգնէ Կիրակնօրեայ Դպրոցին:

Մշակներու պատրաստութեան համար աշխատանքներ տանի՛նք: Բոլորիս պարտականութիւնն է մտածել միջոցներու մասին, երիտասարդները եկեղեցւոյ սեմէն ներս պահելու համար:



ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ

ԴԵԿՏԵՄԲԵՐ 20, 1992

ԹԻՒ՝ 1




Վասն զի մեզի մտնուց մը ծնաւ,
 մեզի որոհ մը տրուեցաւ,
 եւ իշխանութիւնը անոր ուսին վրայ պիտի
 ըլլայ:
 Ո՛ր անոր անունը արեւի կոչուի
 Արեւելէի, Խորհրդանից, Հզօր Աստուած
 Բաւոյննականութեան Վայր, Խաղաղութեան
 Կոչանք:



ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ

ՔԵՆՈՅԱՐ 7, 1993

ԹԻՒ՝ 2



ԸՆ ԵՐԱՅ ԵՐԿԻՆԱԶԵՆ ԺԱՅՆ
 ՄԸ ԵԿԱՆ ՈՐ Կ՛ՈՍԿՐ,
 ԱՍԻԿԱ Է ԻՎ ՍԻՐԵԼԻ
 ՈՐՈՒՄ, ՈՐՈՒ ԲԱՆՆԵՐ
 ԵՎ:


Մատթեոս Գ:17



ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ

ՄԱՐՏ 21, 1993

ԹԻՒ՝ 3



Մահը խափանեց, և ի լոյս հանեց կեանքը ու
 անմահութիւնը աւետարանի միջոցաւ:
ՏԻՄՈԹԵՈՍ 2 1:10



ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ

25 Ապրիլ, 1993

ԹԻՒ՝ 4



Տեսաւ Երկու հրեշտակներ ճերմակ
 հանդերձներով, որ նստեր էին, ուր
 Յիսուսի մարմինը դրուած էր...

ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ

Յաջորդ քանի մը էջերով ձեր ուշադրութեան կը յանձնենք «ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆՔ»-ին (նախ լոյս տեսած որպէս ամսաթերթ) առաջին քանի մը թիւերէն արտատպուած հատաւածներ, որպէս յարգանք բոլոր անոնց, որոնք այս գաղափարի գործադրութեան ձեռնարկեցին եւ օժանդակեցին:

ՈՂՋՈՅՆԻ ԽՕՍՔ

Ջերմ սիրով եւ սրտի անհուն գոհունակութեամբ կ'ողջունեմ մեր Կիրակնօրեայ Դպրոցի շրջանաւարտներու այս գեղեցիկ նախաձեռնութիւնը:

Բնական է որ իբրեւ սկզբնաւորութիւն համեստ է ու ամփոփ, սակայն նպատակն է որ Աւետարանի լոյսէն նշույ մը հասցնէ մեր պատանիներուն, ինչու չէ նաեւ՝ ժողովուրդին. ծափահարելի է ու քաջալերելի:

Այս օրերուն, երբ երիտասարդ թէ տարեց, Աստուծոյ ու Քրիստոնէական սկզբունքներու դէմ խօսիլը նորոյթ կը նկատուի, ահա քանի մը պատանիներ կու գան յիշելու թէ երկնի եւ երկրի Արարիչին դէմ որեւէ խօսք դատապարտուած է ձախորդութեան, Շշմարտութեան ձայնը միշտ պիտի հնչէ, Խաչին լոյսը պիտի ճարագայթէ ընդմիշտ:

Իբրեւ հովիւ Հայաստանեայց Առաքելական Ս. Յակոբ եկեղեցւոյ, «Մաշտոցի Արցագանգ»-ին հրատարակութիւնը կը նկատեմ տօնական օրերու առթիւ քաղցրագոյն նուէրը որ կրնայի ակնկալել մեր Կիրակնօրեայէն:

Թող Աստուած օրհնէ մտածողներն ու աշխատողները եւ զօրացնէ կամքերնին, որպէսզի մեզի համար ծնած այս փոքրիկ մանուկը առողջութեամբ հասակ առնէ, բարգաւաճի եւ օրհնութիւն դառնայ լայն շրջանակներու:

Ահա այս ակնկալութեամբ ու հաւատքով է որ կ'ողջունեմ ձեզ:

Աղօթարար՝

Տ. Արմէն քհնյ. Իշխանեան

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅԻ ՍԿԻԶԲ

(Հարց - Պատասխան)

Հ- Կիրակնօրեայ դպրոցը ե՞րբ սկսաւ:

Պ- Ս.Յակոբ եկեղեցւոյ Կիրակնօրեան հիմնուեցաւ 14 Սեպտեմբեր 1980ին, Խաչվերացի օրը:

Հ- Կիրակնօրեայ դպրոց մը սկսելու գաղափարը ուրկէ՞ էր:

Պ- Մեր հովիւը Քահանայ ձեռնադրուած օրէն ունէր այդ գաղափարը, մինչեւ հանդիպեցաւ «volunteer» աշխատողներու որ այս իր երազը իրականանայ:

Հ- Ի՞նչ բանը ձեզի մղեց այսպիսի աշխատանքի մը ձեռնարկելու:

Պ- Նոր սերունդին Քրիստոնէական մաքուր դաստիարակութիւն տալու անհրաժեշտութիւնը:

Հ- Անհատակա՞ն որոշում էր թէ ոչ խմբային:

Պ- Հովիւի առաջարկով՝ հոգաբարձութեան որոշումն էր:

Հ- Կիրակնօրեայ դպրոցը սկսիլը շատ ջանք եւ յոգնութիւն պահանջե՞ց եւ եթէ այո, ինչպէ՞ս:

Պ- Հոգաբարձութեան արտօնութենէն ետք Տեր Հայրը Կիրակնօրեան կազմակերպելու աշխատանքները յանձնեց կամաւորներու: Ամիսներու աշխատանք խլեց դասացուցակի պատրաստութիւնը որ պէտք էր համադրէր թէ՛ մեր ազգային եկեղեցւոյ աւանդութիւնները, թէ՛ Աւետարանի պատգամները, եւ թէ՛ արդիական պահանջները:

Հ- Դասագրքերու պատրաստութիւնը ի՞նչպէս կատարուեցաւ եւ ուրկէ՞ առիք առաջին օրինակները:

Պ- Այս առընչութեամբ օգտուեցանք Կիլիկիոյ Կաթողիկոսարանի տրամադրելի նիւթերէն, Նիւ Եորքի ազգային Առաջնորդարանի պատրաստած գրքերէն

ու տեղական հրատարակություններէն:

Հ- Ուսուչցական կազմին մաս կազմելու համար որոշ զարգացում անհր-
րաժեշտ է՞ր, թէ ոչ որեւէ կամաւոր օգնական կ'ընդունէիք:

Պ- Այո, ուսուցիչ մը պէտք է ունենայ Աստուծոյ գիտութեան հմտութիւնը եւ
զայն մատակարարելու կարողութիւնը:

Հ- Եկեղեցիէն կամ ժողովուրդէն օժանդակութիւն ստացա՞ք նիւթական եւ
քաջալերանքի տեսակետէն:

Պ- Եկեղեցին միշտ կ'օժանդակէ Կիրակնօրեային ամէն պահանջի դիմաց:

Հ- Իրագործելէն ետք ձեր այս բաղձանքը, քանի՞ աշակերտներով սկսաք:

Պ- Մօտ 15 մանուկներով սկսանք:

Հ- Որքա՞ն աշակերտութիւն ներկայացաւ դասընթացքներուն եւ այս թիւը
ո՞րչափով աւելցաւ տարիներու ընթացքին:

Պ- Այս թիւը տարուէ տարի աճեցաւ եւ հիմա կը հասնի մօտ 70 աշա-
կերտներու:

Հ- Վերին նախախնամութեան օգնութիւնը կ'ընդունի՞ք ձեր այս յաջո-
ղութեան մէջ:

Պ- Աստուած պատրաստ է օգնելու այն անձին որ պատրաստ է Իրեն
ծառայելու: Անշուշտ թէ առաջ Աստուծոյ կը պարտինք այս նպատակին յաջո-
ղութիւնը: Նաեւ մեր Տէր Հօր եւ Եկեղեցւոյ, հակառակ կարգ մը անպատեհու-
թիւններու գործը կը շարունակուի:



ՄԱՇՏՈՅԻ ԱՐՁԱԳԱՆԳ

16 Մայիս, 1993

Թիւ՝ 5




Աստուծոյ հանդէպ մեր սիրոյն չափը ցոյց կու տանք մեր նմաներուն օգնելով:



ՄԱՇՏՈՅԻ ԱՐՁԱԳԱՆԳ

12 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 1993

Թիւ՝ 6



«Եթէ մէկը կ'ուզէ իմ ետեւէս գալ,
թող իր անձը ուրանայ և ամէն օր
իր խաչը վերցնէ ու իմ ետեւէս գայ»
Ղուկաս 9:23



ՄԱՇՏՈՅԻ ԱՐՁԱԳԱՆԳ

Հոկտեմբեր 31, 1993

Թիւ՝ 7



Ուրիշներ անէ՛կ հովի մէջ ինկան
ու բուսնելով՝ հարիւրապատիկ
պտուղ տուին:

Ղուկաս 8:8



ՄԱՇՏՈՅԻ ԱՐՁԱԳԱՆԳ

28 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 1993

Թիւ՝ 8



Քանզի ով որ Տէրոջը անունը
կանչէ պիտի փրկուի:
ՀՈՒՆՍԵՐԵՐԻ ԺԱՅ

ԻՆՁ Է ԾՈՄԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ

Ծոմապահութիւնը համեղ ուտելիքներէ ինքնագրկում է, որ կը կատարուի զանազան նպատակներով. այդ կ'ըլլայ յանգանքի մը ներում ստանալու մտքով: Ս. Հաղորդութեան պատրաստուելու ատեն, Աստուծոյ գութը հայցելու մտքով, եւայլն: Բայց եթէ անձ մը առանց աղօթքի կատարէ ճաշերէ ինքնագրկումը, ոչինչ կը նշանակէ:

ՈՂՋՈՅՆԻ ՁԵԻՆՐ

Ողջոյն Ս. Զատկի

Ողջոյն տուողը կ'ըսէ. «Քրիստոս յարեալ ի մեռելոց»: Ողջոյն ստացողը կը պատասխանէ. «Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի»:

Ողջոյն Ս. Պատարագի

Սարկաւագը կ'ըսէ. «Ողջոյն տուէք միմեանց»: Ողջոյն տուողը կ'ըսէ. «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ»: Ողջոյն ստացողը կը պատասխանէ. «Օրհնեալ է յայտնութիւնն Քրիստոսի»:

Հաղորդութիւն ստանալու ժամանակ


Հաւատացեալը կ'ըսէ. «Մեղայ Աստուծոյ»: Քահանան կը պատասխանէ. «Սա եղիցի քեզ քաւութիւն մեղաց քոց»:



ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ

Յունուար 9, 1994

Թիւ՝ 9



Ահա ձեզի կու տամ տւեախը մեծ ուրախութեան մը՝ որ
ամբողջ ժողովրդեանը պիտի ըլլայ: Այսօր ծնաւ ձեզի
Փրկիչ, որ օծեալ Տէր է:

ՂՈՒԿԱՍ Բ. 10 11



ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ

Փետրուար 7, 1994

Թիւ՝ 10



«Ըի՛ր՝ յաբ: Անոնք որ Աստուծոյ
կը սիրին ու հաւատան
դրախտ պիտի երթան»:




ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ

Մայիսներ 18, 1994

Թիւ՝ 11



«Ասով պիտի յաղթես»:



ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ

Սուրբ Յակոբ Կիրակոսեայ Վարձառնի

Նոյեմբեր 27, 1994

Թիւ՝ 12



Եթէ մարդոց վկայութիւնը կ'ընդունինք,
Աստուծոյ վկայութիւնը աւելի մեծ է.
վասն փի ահկա է Աստուծոյ
վկայութիւնը, որ իր Որդւոյն համար
վկայեց:

Ա. Յովհաննու Ե.Թ

ԻՄԱՍՏՈՒՆ ԵՒ ԳՈՀԱՐ ԽՕՍՔԵՐ

Մտատանջութիւնը օրօրուող աթոռի մը նման է, մեզի գործ մը կու տայ ընելու, սակայն մեզ որեւէ տեղ չի հասցներ:

Հարկ չէ ուրիշին լոյսը մարել որ քուկինդ աւելի լաւ փայլի:

Վտակը իր երգը կը կորսնցնէ, եթէ անոր մէջէն քարերը վերցնենք:

Միայն մութին մէջ քալած ժամանակ կրնանք աստղերը պայծառ տեսնել:

Բարեկամի մը դրամ փոխ տալէ առաջ, որոշէ թէ անոնցմէ ո՞րը պահել կը նախընտրես:

Թող ամէն մարդ իր դրան առջեւ մաքրէ, եւ ամբողջ աշխարհ պիտի մաքրուի:

Ամենալաւ օրինակը զոր հայր մը իր զաւակներուն կրնայ տալ, անոնց մայրը սիրելն է:

Խրատը բան մըն է որուն կարիքը չունին իմաստունները եւ ստանալու փափաքը չունին յիմարները:

Իմաստուն է այն մարդը՝ որ բաց միտք եւ գոց բերան ունի:

Ուր որ սէրը բարակ է՝ սխալները հաստ կ'երեւին:

Կրակը կրակով չեն մարեր:

Աստուած յաճախ մեզ կ'այցելէ, շատ անգամ մենք տունը չենք:

Շոգեկառքին սուլիչն չէ որ զինքը իր տեղէն կը շարժէ:

Աւելի լաւ է բան մը ընել փորձել եւ ձախողիլ, քան թէ ոչինչ ընել եւ յաջողիլ:

Կարելոր է ապաշխարհութեան պատգամ լսելով հրապուրուիլ, սակայն կարելորագոյնն է անառակի պէս դարձի գալով ապաշխարհել:

Կարելոր է աղօթքի նիւթ տալ եւ աղօթք խնդրել, սակայն կարելորագոյնն է անձամբ աղօթել:

Կարելոր է Աստուծոյ ծառայել, սակայն կարելորագոյնն է սրբութիւն հետապնդել:

Կարելոր է հետեւիլ Յիսուս Քրիստոսի, սակայն կարելորագոյնն է ամէն օր խաչը առնելով հետեւիլ Անոր:

Կարելոր է համբերել տառապանքներու եւ չընկրկիլ, սակայն կարելորագոյնն է մինչեւ վերջը համբերել եւ Կենաց պսակին տիրանալ:

Ամենէն արժէքաւոր հնութիւնները՝ հին բարեկամներն են:

Լաւագոյն թմրեցուցիչը՝ մաքուր խղճմտանքն է:

Աղօթքի գաղտնիքը՝ աղօթքն է:

ԱՂՕԹՔԻ ՄԱՍԻՆ

Աղօթքը մեզ կը բաժնէ նիւթական աշխարհէն, ան մեզ կը բարձրացնէ նման գնդակը ուռեցնող կրակին: Աղօթքէն հաճելի բոյր մը կ'ելլէ... որքան աղօթենք, այնքան աւելի աղօթել կ'ուզենք: Աղօթքը կը նմանի ձուկի մը որ նախ կը լողայ ջուրի մակերեսին վրայ, ապա կը սուզուի եւ միշտ աւելի խորը կը դիմէ: Հոգին ալ կը սուզուի, կ'ընկղմի ու կը կորսուի Աստուծոյ հետ խօսակցութեան քաղցրութեան մէջ: Ով որ չ'աղօթեր, կը նմանի հաւու կամ հնդկահաւի մը, որ չի կրնար օդը բարձրանալ. եթէ քիչ մը թռչի, շուտով գետին կ'իյնայ եւ հողը գըրգռելով անոր մէջ կը թաղուի եւ գլուխը փոշիին մէջ թաղելով հաճոյք կը զգայ: Մինչդեռ աղօթողը, հուժկու արծիւ մըն է, որ կ'ուզէ միշտ աւելի մօտենալ արեւին...:

Ահա ասիկա է պատկերը աղօթքի թելերով թռչող բարի քրիստոնեային:

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ ՄԾԲՆԱՅ ՀԱՅՐԱՊԵՏԸ

Սուրբ Յակոբ սքանչելագործ հայրապետը Մծբնի Պարթեական տոհմէն էր եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչի՝ հօրաքրոջ որդին: Յակոբ Գրիգորի հետ միասին փախստական Կեսարիա տարուեցաւ իրենց դայեակին ձեռքով: Հոն մեծցաւ քրիստոնէական հաւատքին մէջ:

Ժամանակ մը վերջ, քոյրը զինք Պարսկաստան տարաւ ուր ապրեցաւ արքունիքին մէջ: Սակայն, խելահաս դառնալէն յետոյ չուզեց հոն մնալ եւ ընտրեց ճգնաւորական կեանքը:

Հեռու մարդոց աչքերէն, քարայրի մը մէջ ապրեցաւ, ճգնութեամբ եւ աղօթքներով: Բնաւ եփած կերակուր չէր ուտեր, կը սնանէր պտուղներով եւ բոյսերով: Գրաստի վրայ չէր նստեր, այլ ամենուրեք բոկոտն կ'երթար:

Ս. Հոգիին առաջնորդութեամբ՝ եկաւ վանք մը Մծբնի մօտ, ուր կ'ապրէր Մարուգէ ճգնաւոր վանահայրը: Անոնց սրբութեան համբաւը տարածուեցաւ, կրապաշտներէն ոմանք լսելով իրենց՝ դարձի կու գային:

Օր մը Ս. Յակոբ լեռնէն իջաւ եւ հասաւ Սաթիթմա գետը, եւ հոն գտնուող Ասորիներուն ըսաւ. «ո՛ր է այս գետին ծանծաղ տեղը»: Անոնք ալ զինք ծաղրելով ըսին. «Դուն Աստուծոյ մարդ ես. քալէ՛ ջուրերուն վրայէն»: Ս. Յակոբ վերարկուն հանելով, փռեց ջուրին վրայ եւ քալելով անցաւ գետը: Ասիկա սուրբին առաջին գործած հրաշքը եղաւ: Ան հրեշտակներու առաջնորդութեամբ հասաւ Արարատ գաւառ: Բայց Աստուծոյ կարգադրութեամբ՝ չկրցաւ բարձրանալ մինչեւ Մասիսի կատարը: Ճամբան քնացաւ եւ Աստուծոյ հրեշտակը տապանէն մաս մը բերաւ իրեն:

Այն ժամանակները վախճանեցաւ Մծբնի եպիսկոպոսը: Քահանաները կը մտածէին թէ ո՞վ պիտի ըլլայ յաջորդը: Աստուած տեսիլքի մը մէջ յայտնեց Մարուգէին, թէ միակ արժանի յաջորդը Ս. Յակոբն է:

Մեծն Կոստանդիանոս կ'ըսէր. «Երեք սիւներ կան երկնքի եւ երկրի միջեւ. Անտոն՝ Եգիպտոսի մէջ, Սեղբեստրոս՝ մեր քով, եւ Ս. Յակոբ՝ Մծբնի մէջ»:

Եւ ուրիշ շատ հրաշքներ եղան իր ձեռքով. երբ իրեն դիմէին բժշկուելու համար, ան կ'ըսէր. «մենք կը հաւատանք թէ ԻՆՁ ՈՐ ՀԱԻԱՏՔՈՎ ԽՆԴՐԵՆՔ ՏԻՐՈՋՄԷՆ՝ ՊԻՏԻ ՏԱՅ ՄԵԶԻ»:

ՎԱԼԱՆԹԻՆ ԱՊՏԱԼԵԱՆ

Ահաւասիկ մեր սիրելի օրիորդը: Կար ու չկայ: Իր կեանքը նման-
ցուցինք հրեշտակի մը որ եկաւ ծառայեց Ս. Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցէն
ներս: Իր լաւագոյնը տալով, սորվեցուց երգեր, շարականներ եւ Ս. Գրային
պատմութիւններ: Պատրաստեց աշակերտներ որոնք կարենան պատաս-
խանատուութիւն վերցնել Կիրակնօրեայէն ներս եւ ծառայել Քրիստոսի ու
Եկեղեցիին: Ծարունակաբար ամէն Կիրակի իր անձնական հաճոյքներէն
զրկուեցաւ եւ ուրախութեամբ սորվեցուց մեզի ըլլալ Յիսուսի զինուորները,
սպարազինուիլ Աստուծով, զգուշանալ սատանային թակարդներէն եւ
ամրացնել մեր մէջքերը շիտակ ուղին ընտրելով: Այսինքն՝ սորվեցուց ըլլալ
ողնահար ունեցող քրիստոնեաներ՝ արդարութիւն եւ խաղաղութիւն գործելով
եւ ուրիշներուն Քրիստոսի մասին խօսելով:

Մանաւանդ սորվեցանք որ Աստուծոյ հաւատալով է որ կրնանք չարին
հարուածներուն դէմ դնել եւ յաղթել: Մեր օրիորդը իր կեանքը մեր եւ մեր
Կիրակնօրեայ Դպրոցին ծառայութեան տուաւ: Մենք ալ որոշած ենք իր
ճամբուն հետեւիլ եւ նուիրուիլ Աստուծոյ ու Եկեղեցիին: Հանգի՛ստ քնացիր
օրիորդ. մենք քու գործդ կը շարունակե՛նք:

Վարձքդ՝ կատար,

Աստուծմէ՝ վարձատրութիւն

եւ մեզմէ՝ խորին շնորհակալութիւն:

ՅՈՒԾԵՐ

Աստուծոյ խօսքը կ'ըսէ. «Ամէն բարի տուրք եւ կատարեալ պարգեւ վերէն է եւ լուսոյ հօրմէն կ'իջնէ, որու մէջ բնաւ փոփոխութիւն կամ դառնալու շուք չկայ» Ա. Յակոբոս 1.17:

«Բայց մեզմէ իւրաքանչիւրին շնորհք մը տրուած է, Քրիստոսի պարգեւած չափով: Ահա թէ ինչու Սուրբ Գիրքը կ'ըսէ. - Բարձունքները ելաւ՝ բազմաթիւ գերիներ տանելով իր հետը, եւ պարգեւներ բաշխեց մարդոց» Եփեսացիս 4.7-8:

Տարիներ առաջ, ուսուցչուհին փոքր աղջկայ մը կը հարցնէ թէ երբ մեծնայ ի՞նչ կ'ուզէ ըլլալ: Աղջիկը առանց վարանելու կ'ըսէ. «կ'ուզեմ միսիօնար ըլլալ»: Նոյն աղջիկը, մօտ 14 տարեկանին, իր կեանքը Տիրոջ կը նուիրէ եւ Աստուած իր շնորհքովը կը պատուիրէ անոր ծառայել իր ազգի նոր սերունդին: Տեսիլքի մը ընթացքին ինքզինքը երախաներով շրջապատուած կը տեսնէ: Ուստի կը սկսի իր ծնողքին տան մէջ հաւաքել իրենց թաղի եւ շրջակայքի տղաքը, անոնց Սուրբ Գրային համարներ, Սաղմոսներ, աղօթքներ եւ երգեր սորվեցնելով: Տեսնելով որ երախաները շատ կը սիրեն զինք ան կը սկսի գործել զանազան Կիրակնօրեայ դպրոցներէ ներս, Լիբանանի մէջ:

Աստուծոյ սրբազան առաջնորդութեամբ, երբ Գանատա հաստատուելու կու գայ, արդէն ամուսնացած՝ եւ երկու զաւակներու մայր ըլլալով, դարձեալ իր համեստ տան մէջ կը սկսի հաւաքել շրջակայքի հայ փոքրերը, խօսելով անոնց Աստուծոյ մասին: Ապա քանի մը տարիներ ետք, Աստուած դուռը կը բանայ Կիրակնօրեայ դպրոց սկսելու Ս. Յակոբ Եկեղեցւոյ սեմէն ներս Տէր Արմէն աւագ Քահանայ Իշխանեանի եւ այդ օրուայ սարկաւազ Մանուկ Զօքաբլեանի միջոցաւ:

Աստուծոյ շնորհքովը, ան իր բաժինը կը բերէ իր ամուսնոյն հետ կողք կողքի, Կիրակնօրեայ դպրոցին ծառայելով, սիրով, նուիրումով եւ շատ անգամ մեծ զոհողութիւններով: Անոնք, միասին, 14 տարի կը ծառայեն, ջանալով իրենց լաւագոյնը տալ, Աստուծոյ այս սրբազան գործին համար: Անոնք կ'ունենան իրենց կողքին նուիրուած օգնականներ որոնք նոյնքան նուիրումով իրենց բաժինը կը կատարեն Կիրակնօրեայ դպրոցէն ներս:

Փառք ըլլայ Աստուծոյ բոլոր բարիքներուն, բարի տուրքերու Տուիչին եւ Բաժնողին: Կ'աղօթենք որ բարին Աստուած հաւատարիմ անձերու միջոցաւ շարունակէ սրբազան այս գործը երախաներու մէջ, որոնք ապագայ սերունդն են: Առակաց 22.6 համարը կ'ըսէ «Կրթէ մանուկը իր ճամբան սկսած ատենը որպէսզի իր ծերութեան ատենն ալ անկէ չխոտորի»: Առակաց 1.7 համարը կ'ըսէ. «Իմաստութեան սկիզբը Տիրոջը վախն է»:

Այժմ Կիրակնօրեայ դպրոցի ծառայողներուն կը կրկենք Պօղոս առաքելի խօսքը, Ա. Կոր. 15.58, որ կ'ըսէ. - «Ուստի իմ սիրելի եղբայրներս, հաստա՛տ եղէք, անշա՛րժ կեցէք, եւ ամէն ատեն ատեն ատելցէ՛ք Տէրոջը գործին մէջ, գիտնալով որ ձեր աշխատութիւնը պարապ չէ Տէրոջմով»:

Ալիս Մ. Քիւփէեան

ՄԱՐՄՆԱՅԻՆ ԱՐՏԱՅԱՑՈՒԹԵԱՆ ՏՈՒՆԱԼՆԵՐ

Շատեր երբեմն նկատած են որ մեզմէ իւրաքանչիւրը որոշ պայմաններու տակ, որոշ կացութիւններու մէջ, որոշ տարիքի եւ որոշ տեղեր մենք զմեզ յաճախ ակամայ եւ երբեմն ալ ուզելով մեր մարմնական նիստ ու կացը այլեւայլ պատճառներով սովորականէն տարբեր կ'արտայայտենք կամ արտայայտելու ջանք մը կամ փորձ մը կ'ընենք: Որպէսզի վերի նախադասութիւնը օդին մէջ չմնայ կարելի է օրինակ մը կամ օրինակներու շարք մը մէջբերել. իւրաքանչիւր անձ կը փորձէ որոշ ձեւով մը իր մազերուն (եթէ մազ ունի) հոգ տանիլ եւ կամ հոգ չտանելու արտայայտութեան նմոյշ մը ներկայացնել, մազերը այս կամ այն ձեւով սանտրելը, մազերը կարճ կտրելը եւ կամ երկար ձգելը, առջեւի մասը այսպէս վեր հանելը, վար իջեցնելը, կողմ տանիլը, մազերուն ետեւի մասը հաւաքելը, կապելը, դարձնելը, հիւսելը, վեր հանելը եւայլն մասն են այդ մազերու հոգածութեան: Կայ նաեւ մազերը այս կամ այն գոյն ներկելը, սեւ, խարտեաշ, կարմիր ինչու չէ նաեւ նոյն մազերը մի քանի գոյն ներկելը, այս կամ այն արուեստական իւղերով օծելը, զանազան տեսակի ծամակալներու գործածութիւնը: Այս բոլորը գործնական ըլլալէ աւելին ուրիշներու վրայ տպաւորութիւն ձգելու մարմաջէն ալ կը բխի, եւ կամ ընկերութեան համատարած անգիր օրէնքներուն մաս կը կազմէ:

Այս միայն մազերուն մասն է, կայ երեսը շպարելը, ածիլելը, պէխ կամ մօրուք ունենալը, չունենալը, օղեր գործածելը եւ չգործածելը, այս կամ այն հագուստ հագնիլը, այսինչ պարագային կարճ կամ երկար հագուստ հագնիլը, երկար կամ կարճ փէշ կամ տափատ հագնելու տեղերն ու առիթները, կայ առանձին ըլլալու կամ անձի մը հանդիպելու պարագաները, ուր իւրաքանչիւր անձ ըստ պատշաճի ունի իր մարմնային արտայայտութեան որոշ ձեւերն ու մօտեցումները: Նոյն ձեւով չեն հանդիպիր, տեսնուիր, այցելութեան երթար, հիւրիւնկալեր, մանկութենէն իսկ յարաբերութեան մէջ եղող կամ շատ ծանօթ բարեկամի մը, ընկերոջ կամ ընկերուհիի մը, դրացիի մը: Նոյն օրինաչափութիւնները չեն օգտագործուիր երբ մարդիկ առաջին անգամ իրարու կը հանդիպին, ըլլան անոնք սիրահարներ, նշանուածներ, ամուսիններ: Մարդոց նիստ ու կացը միշտ տարբեր է եւ կախեալ հանդիպելիք անձէն կամ անձնաւորութենէն, պարագայէն, տեղէն, եւ պայմաններէն: Ըստ պատշաճի իւրաքանչիւր անձ մազերը շտկելու փորձ մը կ'ընէ, բաճկոնը կը կոճկէ, փողկապը կամ փէշը կը կանոնաւորէ, հագուստի ուսերը աջ կամ ձախ կը քաշէ եւայլն եւայլն: Այս կամ այն անձի հետ տեսնուած ատեն ձիւթը կամ ծամոնը բերանին մէջ ծամելով չի ներկայանար, այսպէս կամ այնպէս չի նստիր կամ ոտքի չի կենար: Այս բոլորը միմիայն մեզի նման մարդոց հանդիպելու, տեսնուելու, ծանօթանալու համար կ'օգտագործենք եւ ասոնք մեր մարմնի արտայայտութեան միջոցներէն միմիայն մէկ մասն են, տակաւին չիօսեցանք աչքերու, դէմքի ժպիտի, ձեռքերու եւ այլ արտայայտութեան ձեւերուն մասին, որոնք նոյնպէս մաս կը կազմեն մարմնական արտայայտութեան:

Եթէ այսչափ կարեւորութիւն կու տանք եւ զանազան ձեւեր ու միջոցառումներ կ'ընենք պարզ անձի մը հետ տեսնուելու, հանդիպելու, տեսակցելու, որը կրնայ

երբեմն կարելորությունը, տարիքով, պաշտոնով, յարաբերությամբ եւայլնով տարբեր ըլլալ:

Իմ հարցումս հետեւեալն է.

Մեզմէ իւրաքանչիւրը ինչպէ՞ս կը ներկայանայ եւ պիտի ներկայանայ Աստուծոյ առջեւ երբ կ'աղօթենք, աղօթելու համար եկեղեցի կ'երթանք, Աստուծոյ ներկայութեան գտնուելու առիթը կ'ունենանք:

Երբ մեր մարմնի արտայայտութեան (body language) ձեւն ու միջոցառումները բարելաւելու տեսակներ կ'որոնենք պարզ, մեզի նման, անձերու հետ հանդիպելու, տեսակցելու, խօսելու համար, որչափ աւելի զգոյշ եւ գիտակից պէտք է ըլլանք մեր մարմնական արտայայտութեան մէջ, երբ հարցը Աստուծոյ հետ յարաբերութեան, կապի, հանդիպումի, տեսակցութեան, խօսելու, խնդրելու մասին է: Երբ ձիւթ կամ ծամոն ծամելով կը փորձենք մեր նման անձի հետ չխօսիլ, ինչո՞ւ նոյն ձեւով եկեղեցի չմտնել եւ Աստուծոյ չաղօթել: Եթէ ծովափին գիշերային երկար ու նեղ հագուստով կամ փողկապով ու կոճկուած բաճկոնով ընդհանրապէս չեն պտտիր եւ պաշտօնական ընդունելութեան ծովեզերքի հագուստով չեն ներկայանար, այս կամ այն առթիւ այսպէս կամ այնպէս չեն նստիր կամ կենար, մարմնի կեցուածքը այս ձեւով չեն պահեր, ինչո՞ւ այս բոլորը ընել եկեղեցոյ մէջ: Ինչո՞ւ ոտքի չելլել երբ պէտք է կամ հարկ է, ինչո՞ւ երեսը չխաչակնքել կանոնաւոր ձեւով երբ պէտք է եւ տեղին է, եւ մանաւանդ ինչո՞ւ չսորվիլ կամ չհարցնել սորվելու նպատակով: Բացառութիւնները միշտ կան եւ պիտի ըլլան, ծերութիւն, հիւանդութիւն, անկարողութիւն, քնացած մանուկը չարթցնելու համար, մօր մը կամ հօր մը զաւակը գրկին երկար ժամանակ ոտքի չկենալը եւ կամ չկարենալ կենալը, կամ խաչ չկարենալ հանելը այնքան ալ մեծ հարց մը չէ, նոյնպէս ծերուկ հայրիկի մը կամ մայրիկի մը կամ հիւանդ անձի մը այս կամ այն ընել կամ չընել հարց չէ այլ մեծամասնութեան մարմնական պատշաճ արտայայտութեան ձեւն ու կեցուածքն է որ այստեղ գրութեանս նիւթ է դարձած. կայ բաժին մը որու մասին չենք գիտեր կամ չենք սորված եւ կամ մեզի չեն բացատրած, որ պէտք է հարցնելով սորվիլ. իսկ անոնք որոնք գիտնալով անփոյթ կերպով կը վարուին. ահա անոնց համար է ուզեցի եւ փորձեցի այս մի քանի տողերով եւ օրինակներով ցոյց տալ որ ինչպէս այլ պարագաներու նոյնպէս ալ Աստուծոյ ներկայութեան եկեղեցոյ մէջ. աղօթքի ժամանակ, մեր մարմնական արտայայտութիւնները նոյնքան կարեւոր են որչափ այն բառերու շարանը որ մեր բերաններէն դուրս կու գայ եւ կամ երբ մենք մեր մտքերուն մէջ աղօթքի բառերը կը կրկնենք:

Ահաւասիկ շնորհաւորելով Սուրբ Յակոբ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցոյ Կիրակնօրեայ Դպրոցի քսանամեակը պիտի առաջարկէի որ այս մի քանի պարզ մատնանշումները, որ միայն մեր արտասանած աղօթքի բառերու առընթեր գոյութիւն եւ կարելորութիւն ունեցող մարմնական արտայայտութեան ձեւերու մասին կամ «լեզուին» (body language) մաս կը կազմեն, առիթ հանդիսանան ձեր խորհրդածութիւններուն մաս դառնալու որով դուք իսկ անձնապէս կը հասնիք նոյնիսկ ձեզի համար պիտանի որոշ եւ ընդունելի պատշաճութեան:

Յարութիւն Փալանճեան

ՄԱՂԹԱՆՔՍ

Տարիներ առաջ՝ Պէյրուֆի ծննդավայրիս մէջ Առաքելական եկեղեցւոյ պատկանող Կիրակնօրեայ վարժարան գոյութիւն չունէր: Մայրս՝ ճանչնալով Աստուածաշունչը, որ կ'ըսէր. - «Կրթէ՛ մանուկը իր ճամբան սկսած ատենը որ ծերութեան ատեն անկէ չի խտորի», կը ստիպուի զիս դրկել Պէյրուֆի Հայ Աւետարանական Երկրորդական Վարժարանի Կիրակնօրեան: Հաւատարմաբար կը յաճախէի դպրոցը, բայց իմ Առաքելական արմատներս խորթ կը թուէին դասընկերներուս; ու յաճախակի ծաղրական ակնարկներու կ'ենթարկուէի: Հակառակ այս բոլորին, ուրախութեամբ կը շարունակէի Կիրակնօրեայ դասընթացքներս այդ դպրոցէն ներս:

Ուսուցիչներէս մէկը, քսաներկու տարեկան երիտասարդ մը, տեսնելով հաւատարմութիւնս ու ջանքս, ըսաւ. «Զաւէ՛ն, կը գնահատեմ կեցուածքդ: Հակառակ ամէն յանդիմանութեան, յարատեւութեամբ կը շարունակես գալ Կիրակնօրեայ ամէն Կիրակի: Ես Ամերիկա կը մեկնիմ, բայց կ'ուզեմ քեզ քաջալերել որ շարունակես յաճախել Կիրակնօրեան եւ դուն Աստուծոյ ձեռքերուն մէջ գործածուող երիտասարդ մը պիտի ըլլաս»: Այս ուսուցիչիս սէրն ու գնահատանքն էր որ զիս ստիպեց ծառայել Լիբանանի մեր Առաքելական զաւակներուն եւ Արաբ-Ասորի փոքրիկներուն, Էշրէֆիէ:

Աստուած ինծի շնորհալի կողակից մըն ալ պարգեւեց, որ նոյն փափաքն ունէր եւ արդէն զանազան Կիրակնօրեաներ կ'ընէր Առաքելական մեր տարբեր շրջաններու զաւակներուն: Երբ Մոնթրէալ հաստատուեցանք, մեր առջեւ բացեցաւ Ս. Յակոբ Եկեղեցւոյ Կիրակնօրեայի գործը: Տէր եւ Տիկին՝ նուիրուած ծառայեցինք, գործածելով գծագրութեան եւ երաժշտութեան մեր տաղանդները: Մեզի ընկերացան բազմաթիւ օգնականներ, որոնք առանց աշառութեան մէկ սիրտով եւ մէկ հոգիով ծառայեցին, նուիրուած Քրիստոսի սիրոյն ու հոգիին:

Դիւրին չէ Կիրակնօրեայի գործը: Կոնակ կ'ուզէ դիմանալու: Ծառ անգամ հարց կու տայի թէ քահանան մեզմէ ի՞նչ կը պահանջէ, կամ ծնողներուն ակըն-

կալութիւնները ի՞նչ են իրենց զաւակներու դաստիարակութեան վերաբերմամբ: Մենք ու մեր ուսուցչական կազմը աշխատեցանք Քրիստոսը եւ Իր Եկեղեցին դրոշմել մեր ազգի զաւակներու սրտերուն մէջ, որ ըլլան անոնք Աստուածաւախ, եկեղեցասէր, ծնողներու հնազանդ եւ ազգին օգտակար: Դժուարութիւնները անշուշտ անպակաս էին ու մենք մեր հարցերը կը լուծէինք առանց Տէր Հօր եւ Հոգաբարձրութեան գլուխը ցաւցնելու: Երբ տեղի դժուարութիւն ըլլար, նեղ անցքներուն կամ աստիճաններուն վրան էր որ Կիրակնօրեան կ'ընէինք կամ ճաշարանի ճաշերու կաշուն հոտերուն մէջ:

Կիրակնօրեան ծնաւ 20 տարիներ առաջ Ս. Յակոբ Եկեղեցւոյ հովանաւորութեան տակ: Տեղէ տեղ փոխադրուեցաւ, բայց եկեղեցւոյ կողքին ամուր մնաց: Այսօր, Կիրակնօրեան ունի իր տեղը, բայց եկեղեցիէն հեռու, եւ՝ առատ ուսուցիչներ տարբեր գաղափարներով վարակուած: Կիրակնօրեայի գործը Աստուծոյ գործն է: Կարելորագոյն անհրաժեշտութիւնը այն է որ դասաւանդութիւնները կատարուին Աստուծոյ զաւակներու կողմէ, այլապէս Կիրակնօրեան կը դառնայ պզտիկներու սպասման կեդրոն:

Խորապէս շնորհակալութիւն կը յայտնեմ պատուարժան աւագ Քահանայ Իշխանեանին շարունակ երկար տարիներ մեզի նեցուկ կանգնելուն, եւ յաճախ նոյնիսկ իր գրասենեակը մեզ տրամադրելուն իբր դասարան: Կիրակնօրեայի 20րդ տարեդարձին առթիւ, շնորհաւորութիւններս նաեւ եկեղեցւոյ Հոգաբարձութեան, Տնօրէնութեան եւ բոլոր անոնց որոնք իրենց մասնակցութիւնը բերին Աստուծոյ գործին բարգաւաճման: Իմ մաղթանքս այն է որ յաջորդ 20 տարիներուն ընթացքին Կիրակնօրեան ունենայ տեղ մը եկեղեցիով եւ բազմաթիւ նորանոր ուսուցիչներ՝ Քրիստոսով:

Զաւէն Ապտալեան

ՀՈՒՆՁՔՆ ՈՒ ՄՇԱԿԸ

«Հունձքը առատ է, բայց մշակները՝ քիչ. ինտելաբար խնդրեցէք հունձքի Տիրոջմէն, որ իր հունձքին համար մշակներ պատրաստէ եւ ղրկէ:» **Ղուկաս 10:2**

Մշակը... ո՞վ է մշակը: Եթէ ակնարկ մը նետենք Ղուկասու աւետարանի 10րդ գլխու առաջին բաժնին, պիտի հասկնանք թէ մշակը Աստուծմէ՝ «հունձքի Տիրոջմէն» պատրաստուած ու առաքուած այն անհատն է, որ կոչուած է քարոզելու եւ բժշկելու իր նմանները:

Կիրակնօրեայ Դպրոցի ուսուցիչը ասոր մէկ օրինակն է: Հունձքը առատ է, բայց մշակները քիչ: Խնդրեցէ՛ք հունձքի Տիրոջմէն...:

Հունձքը հասած է, հնձուելու պատրաստ բայց մշակները...:

12 առաքեալներու կողքին 72 եւս՝ պատրաստուած եւ ղրկուած, բայց մշակները քիչ՝ մինչեւ այսօր...:

Հոս ինքնաբերաբար հարց մը կը ծագի. եթէ Աստուած է մշակը պատրաստողն ու ղրկողը, ինչո՞ւ է ուրեմն մշակներու պակասը:

1700 տարիներ առաջ, մենք հայերս՝ ազգովին ընդունեցինք քրիստոնէ-ուծութիւնը սակայն եկեղեցին... տակաւին ունի մշակներու պակաս:

1929 թուականէն ի վեր Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը Սփիւռքի մէջ հիմնած է Կիրակնօրեայ Դպրոցներ եւ տակաւին՝ մշակներու պակաս...:

20 տարիներէ ի վեր հաստատուած է Մոնթրէալի Ս. Յակոբ Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցը, տակաւին ու տակաւին՝ մշակներու պակաս:

Հաւանաբար հարցումը այստեղ փոխելու է. ինչպէ՞ս բազմացնել մշակներու թիւը:

Մշակը զանազան պատասխանատուութիւններ ունի հունձքին՝ իր շրջապա-տին նկատմամբ.

ա.-- Ի՛ր հունձքին համար. ըմբռնել եւ գիտակցիլ թէ հունձքը Աստուծոյ կը պատկանի,

բ.-- Հունձքը առա՛տ է. հունձքին առատութիւնը հասկնալ եւ տեսնել,

գ.-- Խնդրեցէ՛ք. խնդրել Աստուծմէ որ իր հունձքին համար մշակներ պատրաստէ եւ ղրկէ:

Յստակ է թէ այս խօսքը աշակերտներուն ուղղուած է: Ուրեմն հոս կարելի է հասկնալ թէ Աստուած անուղղակիօրէն իր հունձքին առատութիւնը իր մշակնե-րուն յանձնած՝ եւ զանոնք Իրեն գործակից դարձուցած է, սակայն մշակներուն պատրաստութիւնն ու առաքումը Ինք Իրեն վերապահած է:

Ի վերջոյ մշակը ինչպէ՞ս պէտք է մօտենայ այս խորհուրդին:

Մշակը պէտք ունի երկու հիմնական յատկութիւններու. առաքելութեան գիտակցութիւն եւ հաւատք՝ որ Աստուած օգնութեան միակ աղբիւրն է, հետեւաբար գործնական ընկալում թէ հաւատքը մշակի կեանքին հիմն է: Գիտակցութիւն եւ հաւատք, 2 սիւներ որոնց վրայ պէտք է կանգնի եւ յառաջդիմէ մշակը: Ուստի ան ինքնաբերաբար կը դառնայ իր իսկ անձին առաջին պատասխանատուն:

Ինքնազարգացում, ինքնաճանաչում եւ ինքնակերտում...:

Մշակը ամբողջացնելու է այս երեք տուեալները որպէսզի Աստուած պատրաստէ զայն իր առաքելութեան: Այլ խօսքով մշակին պատասխանատուութիւնն է ինք իր անձին նկատմամբ իր հողը մշակել:

Պօղոս առաքեալ Բ Կորնթացիս 4:7ի մէջ շատ գեղեցիկ ձեւով կը բացատրէ թէ մեր մարմինները հողէ ամաններ են: Իսկ Ա Կորնթացիս 6:19-20ի մէջ կ'ըսէ. - «Զէ՞ք գիտեր որ ձեր մարմինները տաճարն են Սուրբ Հոգիին որ Աստուծմէ առիք եւ որ ձեր մէջ կը բնակի: Գիտցէք որ դուք չէ՞ք ձեր անձերուն տէրը, այլ Աստուած՝ որ փրկագինով ձեզ գնեց: Հետեւաբար այնպէս ապրեցէք՝ որ Աստուած փառաւորուի ձեր մարմիններով»:

Մշակին պատրաստութիւնը.

Δ Աստուծոյ խօսքը սերտելով մշակին միտքը կը զարգանայ:

Δ Աստուծոյ խօսքին լոյսին տակ մշակը ինքզինք կը ճանչնայ:

Δ Աստուծոյ խօսքը ի գործ դնելով մշակին հոգին կը կերտուի:

Այսպիսով, այլ խօսքով՝ Աստուծոյ խօսքով, շատ բան կը փրկուի. մշակներուն թիւը կը բազմանայ եւ հունձքը կ'արդիւնատուրուի եթէ մենք՝ մշակներս բացինք Աստուծոյ, լեցուինք իր ճշմարտութեան լոյսի խօսքերով որոնք մեր ուղին ամբողջութեամբ կը լուսաւորեն եւ անոնց գործադրութիւնը հաւատքով ու սիրով մեր նկարագիրը կը թարթնէ:

Վերջապէս, այս ձեւով մշակին պատասխանատուութեան գիտակցութիւնը իր անձին հանդէպ կը գործնականանայ.

Ինքնազարգացում,

Ինքնաճանաչում,

Ինքնակերտում...:

Մարո Տէմիրճիան



Ու ըսին. «Ո՛ր տեղ է ան՝ որ Հրեաներուն
թագաւոր ծնաւ. վասն զի մենք արեւելքի
մէջ անոր աստղը տեսանք ու եկանք անոր
երկրապագութիւն ընելու:

Մատթէոս Բ, 2

ՄՈՆԹՐԵԱԼԻ

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ՄԱՅՐ
ԵԿԵՂԵՑԻՈՑ ԿԻՐԱԿՈՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ
ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹ 1996-97



Ձգեցէ՛ք որ մանուկները ինծի գան, արգելք մի
ըլլաք անոնց, որովհետեւ այդպիսիներուն է
Աստուծոյ արքայութիւնը: Դուկաս 18.16:

ՄՈՆԹՐԵԱԼԻ

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ՄԱՅՐ
ԵԿԵՂԵՑԻՈՑ ԿԻՐԱԿՈՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ
ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹ 1997-98



Ձգեցէ՛ք որ մանուկները ինծի գան, արգելք մի
ըլլաք անոնց, որովհետեւ այդպիսիներուն է
Աստուծոյ արքայութիւնը: Դուկաս 18.16:

**Ա
Ր
Ձ
ՄԱՇՏՈՅԻ
ՄՂԱԳԱՆԳ**

ՄՈՆԹՐԵԱԼԻ

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ՄԱՅՐ
ԵԿԵՂԵՑԻՈՑ ԿԻՐԱԿՈՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ
ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹ 1998-99



ՀԱՐՑՈՒՄՆԵՐ ՈՒ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

Ո՛վքեր ենք մենք, ո՞վ եմ ես, ո՞վ ես դու. . . :

Մեղանշող քրիստոնեա՞ն, թե տիպար հաւատացեալը. . . :

«Քրիստոնեայ ու Հաւատացեալ»,

«Հաւատացեալ ու Քրիստոնեայ»:

Ահաւասիկ երկու բառեր, որոնք 21րդ դարու վերջաւորութեան փնտռուած յատկութիւններ են: Ահաւասիկ երկու յատկութիւններ, որոնց միացումով շրջապատ մը, հասարակութիւն մը, կամ եկեղեցի մը կը փայլի ու լուսաճաճանչ հաւատքի շողեր կը տարածէ ամենուրեք:

Գուցէ հարց տաք, թէ ի՞նչի մասին է խօսքս, այժմու մեղանշող քրիստոնեային թէ՞ քարոզող արդար քրիստոնեային. . . :

Պատասխանս պիտի ըլլայ երկուքը:

Ներկայիս, թէեւ կ'ապրինք "In God we trust" ըսող պետութիւններու հովանիին տակ, սակայն մարդիկ «Քրիստոնեայ եմ» խօսքը որպէս պատկանելիութեան վեղար հագած, հաւատքէն մղոններ հեռու փախչելով, մէկ կողմ կը շարունակեն քրիստոնէութեան հրամցուցած անմահական նեկտարի կենաց թասն ու սափորը:

Քա՛ջ գիտենք, թէ այս դարաշրջանը հեզասահ ընթացող շրջան մը չէ. ամէն քայլափոխի փորձութիւն մը կը սպառնայ ու կը փնտռէ իր որսը: Մեղքը, լուսաւոր հրեշտակի կերպարանք հագած, մարդիկը կը հրապուրէ իր շուրջպարով: Քանի մարդ արարած ենք, ենթակայ ենք փորձութեան, որովհետեւ հոգին յօժար է ու մարմինը տկար:

Ո՛վքեր ենք մենք. . .

Մեղանշող քրիստոնեա՞ն. . .

Տիպար հաւատացեալը. . . :

Ի՞նչ պէտք է ընենք. . . :

Հարցումներ ու մտորումներ. . . :

Այս պարագային, երկուքին ընելիքը միեւնոյնն է. հաւատալով ու աղօթքը որպէս վահան գործածելով, պայքարիլ աներեւոյթ սանդարամետին դէմ ու գոյատեւել որպէս քրիստոնեայ հաւատացեալ ազգ:

Թո՛ղ տուէք որ մեղանշող քրիստոնեային ու ճշմարիտ հաւատացեալին մասին՝ «Հարցումներ ու Մտորումներ» գրութիւնս, ըլլայ սրտիս խորերէն աղա-ղակուած կոչ հրաւեր մը, ըլլայ անլռելի զանգակներու դողանջի եթերային երաժշտութիւն մը:

Չարի շոգէն թօշնած մեր հաւատքի ծիւերը, թող կազդուրուի՛ն արեւածագի ցօղերով եւ վերանորոգուին 1700 տարիներ առաջ սերմանուած ճշմարիտ հաւատքով:

Ս. Գրիգոր Լուսաւորչի բալասան ձեռքերը թող բուծե՛ն մեր ազգի պալարած վերքերը: Թող մեզ դարձեա՛լ վերակոչեն «Հաւատացեալ ժողովուրդ, Հաւատացեալ քրիստոնեայ հա՛յ ժողովուրդ, քա՛ջ ժողովուրդ, անմա՛հ ժողովուրդ...»:

Ի՞նչ է ճշմարիտ հաւատացեալին դերը:

Եթէ ճշմարիտ հաւատացեալ ընթերցողի մը հարց տանք թէ ի՞նչ է դերը քրիստոնեայ հաւատացեալին, ամենայն պարզութեամբ ու հեշտութեամբ կրնայ պատասխանել.

ա.- Ըլլալ տիպար քրիստոնեայ,

բ.- Սիրել մեր Տէր Աստուածը մեր ամբողջ սրտով, մտքով՝ ու հոգիով,

գ.- Չգողնալ, չստել...: Եւ այսպէս շարքը կը շարունակուի... ու կը դառնայ տասը պատուիրաններու տախտակ:

Ծառ բարի: Սակայն արդեօք հաւատացեալը կրնա՞յ իր հոգեկան հաւատքի հարստութիւնը բաշխել իր շրջապատին, ընտանիքին ու բարեկամներուն: Եթէ ոչ այդ գործը կղերականներուն եւ հոգեւորականներուն վերապահուած մենաշնորհի է: Հաւանաբար այս հարցումը շատերու մտքէն անցնող վիճելի հարց մըն է: Սակայն եթէ պահ մը մտաբերենք ընդհանուր քրիստոնէութեան եւ Հայաստանեաց Առաքելական Եկեղեցւոյ պատմութիւնը, ինչպէս նաեւ առաքեալներու, սուրբերու եւ մարտիրոսներու կեանքն ու գործունէութիւնը, մեր հոգեկան աչքերուն առջեւ կը ցոլայ յիշողութեան հսկայ պաստառ մը ու մենք հեշտութեամբ կ'իմանանք թէ իրօք հաւատացեալ մը կրնայ եւ իրաւասութիւնն ունի խօսելու, քարոզելու եւ դասախօսելու Աստուծոյ, հաւատքի եւ աստուածաբանական հարցերու մասին:

Հաւատացեալ մը ի՞նչ կրնայ խօսիլ կամ ըսել:

Եթէ հաւատացեալ մը Քրիստոսի մասին խօսելու ըլլայ, չի մտածեր թէ ի՞նչ պիտի խօսի կամ ի՞նչ բառ պիտի գործածէ, որովհետեւ Ս. Հոգին է որ կը լուսաւորէ իր միտքն ու հոգին: Ուստի հաւատքի խօսքերը բնականաբար ամենայն հարազատութեամբ ու անկեղծութեամբ, քաղցրահամ մեղրի նման հեշտութեամբ կը ծորին, կ'արտասանուին, կը բացատրուին, եւ ունկընդիրներու ծառաւ հոգիները կը յագեցնան քրիստոսային զուլալ աղբիւրի՝ սիրտ զովացնող խօսքերով:

Երբ մեր հայեացքները ուղղենք դէպի Առաքեալներն ու Սուրբերը կը տեսնենք թէ անոնք նախքան այդ տիտղոսներուն հասնիլը եղան ունկընդիրներ, հետետրոյներ, հաւատացեալներ, ապա՝ քարոզիչներ եւ վերջապէս սուրբ հաւատ-

քի դափնեպսակին արժանանալով, աւանդեցին իրենց հոգիները եւ լուսեղէն պատմունքներով զգեստաւորուած, այս անցողական աշխարհէն հեռանալով, մեկնեցան դէպի...:

Կը տեսնենք որ Առաքեալներէն ու Սուրբերէն շատեր կղերականներ չէին: Յիսուս իբր աշակերտ չընտրեց սինակոկի մէջ ծառայող ու վարդապետող ռաբբի մը, ռաբբունապետ մը, կամ քահանայ մը. այլ՝ պարզ ու համեստ նուիրեալ անձեր, որպէսզի երթան ու վարդապետեն իրենց լսածներն ու տեսածները, ապա նահատակուին ի սէր Աստուծոյ ու Խաչեալին: Նոյնն էր պարագան նաեւ սուրբերուն. այդ դժնդակ ու անապահով դարաշրջանին, անոնք ո՛չ միայն Քրիստոսը կը դաւանէին, այլ՝ անվեհերօրէն ու քաջաբար կը քարոզէին Քրիստոնէութեան՝ ճշմարիտ կրօնքի մասին եւ շատերու փրկութեան պատճառ կ'ըլլային: Իսկ երբ մահը սպառնար, զայն արհամարհելով, յամառօրէն կը շարունակէին իրենց տարած գործունէութիւնը եւ կը մարտիրոսուէին յանուն արդարութեան ու ճշմարտութեան:

Միթէ Սուրբ Սարգիսն ու իր Մարտիրոս որդին, Սուրբ Գեորգը, Ս. Գայանէն, Մանէն ու Նունէն, Քրիստոսի արդար լոյսը տարածող համեստ անձեր չէ՞ին, հիւանդներ խնամող ու տկարներուն դատը պաշտպանող հաւատացեալներ չէ՞ին:

Քրիստոս ըսաւ. «ի՞նձի՛ հետեւեցէք» ու անոնք գացին:

Քրիստոս ըսաւ. «գացէ՛ք, սորվեցուցէ՛ք...» ու անոնք լսեցին:

Քրիստոս ըսաւ. «երանի՛ անոնց որ առանց տեսնելու կը հաւատան...» ու մենք կը հաւատա՛նք:

Այս խօսքերէն կը հետեւցնենք թէ 21րդ դարու տիպար հաւատացեալներուն գործ մը յանձնուած է, պարտականութիւն մը, աւելի ճիշդ՝ առաքելութիւն մը որ օրհնուած է ու՝ պատուական...:

Թող հազա՛ր ապրին անցեալի ու ներկայի «Հաւատացեալ» հաւատացեալները: Թող անոնք լիաշող փայլի՛ն ու հաւատքի նոր շողեր տարածելով օրհնե՛ն... օրհնուի՛ն:

«Հաւատացեալ քրիստոնեայ», ահաւատիկ երկու յատկութիւններ, որոնց միացումով մեր եկեղեցիներն ու Կիրակնօրեայ դպրոցները պիտի արմատանան ու ծաղկին:

Պայծառ-Կանթեղ

ՀԱՅ ԿԻՆՆ

21րդ դարու սեմին երբ յետադարձ ակնարկով մը կը փորձենք արժեւորել անցնող Դարը, կ'անդրադառնանք գիտական այնպիսի նուաճումներու որոնք արձանագրուեցան եւ յեղաշրջեցին մարդկային կեանքը, ստեղծելով մտածելա-կերպի նոր չափանիշեր: Գիտական զարգացման արագութիւնը փլեց ժամանակի պատը, իր ճամբուն վրայ ոչնչացնելով մարդ արարածի առօրեան կազմակերպող բարոյական արժէքները: Մարդը այսօր կը գտնուի դէմ յանդիման գիտութիւն կոշտող հսկային, ապազինուած, խեղճացած ու գրեթէ մերկացած իր բարոյական ըմբռումներէն եւ արժէքներէն:

Գիտական նուաճումները ներկայ են մեր կեանքին մէջ, մեր կեանքի ամբողջ հոլովոյթի ընթացքին, իրենց ընծայած նիւթական բարիքներով, դիւրացնելով մեր կեանքը, մեր փոխարէնը կատարելով այն բոլոր գործերը որ պարտաւոր էինք ընել մեր ձեռքերով: Սակայն ձեռքերով եւ բազուկներով գործած մեր օրերուն, մեր միտքն ու հոգին ժամանակ ունէին մտածելու, դատելու, արժեւորելու՝ բնականաբար ազնուացնելու մեր բազուկներու աշխատանքը: Այսօր բազուկ ու ձեռք փոխա-րինուած են գործիքներով, իսկ մտքերն ու հոգիները գրաւուած ու զբաղած՝ նոր մեքենաներու գործածութեամբ: Ե՞րբ, ո՞ր եւ ինչպէ՞ս պէտք է դարձեալ թռիչք առնեն մեր մտքերն ու հոգիները, որպէսզի մարդկութիւնը դուրս բերեն գիտական մեքենացած աշխարհէն ու վերադարձնեն մարդուն այն արժէքները եւ ըմբռումները որոնք կը վարէին իր երբեմնի կեանքը, միախառնելով եւ համադրելով գիտականն ու բարոյականը, հաւասարակշռելու համար արդի մարդուն յորձանուտ կեանքը:

Ընտանիքը, մարդու կեանքին մէջ բնական այն միջավայրն է, ուր ստեղծուած մթնոլորտով եւ տրուած դաստիարակութեամբ կարելի է խօսիլ ամէն բանի մասին անխտիր եւ ազատօրէն: Ընտանիքը՝ հայր, մայր ու զաւակներ, իսկական կառոյց մըն է որ իր առողջ դաստիարակութեամբ կրնայ դիմանալ բոլոր ալեկոծումներուն եւ չարիքներուն, դիմադրել եւ յաղթական դուրս գալ: Ամէն մէկ ընտանիք եկեղեցի մըն է, եւ եկեղեցին ընտանիքներու ամբողջութիւն մըն է ուրկէ փխող մարդկային եւ Քրիստոնէական սկզբունքները հիմնաքարերն են առողջ ընկե-րութեան մը: Ընտանիքին մէջ մայրը որպէս ծնող՝ բնական եւ յաւելեալ պարտա-տրութիւնն ունի զբաղելու իր զաւակներու դաստիարակութեան ու կերտման գոր-ծով, փոխանցելով անոնց, իր իսկ տիպարով այն բոլորը, ինչ որ պիտի օգնէ զաւ-կին առողջ եւ հաւասարակշռուած կեանքի կերտման:

Մարդիկ հետզհետէ կը հեռանան եկեղեցիէն, քրիստոնէական բարձր սկզբունքներէն, զանոնք դատելով հնամենի եւ խոտոր համեմատող արդի գիտական զարգացման, այդ մտայնութիւնը փոխանցելով նաեւ նոր սերունդներուն:

Նոր սերունդը արդեն իր մանուկ հասակէն այնքան բան գիտէ եւ կը սորվի գիտութեան մասին, մինչդեռ շատ քիչ բան՝ կամ գրեթէ ոչինչ Եկեղեցւոյ եւ Քրիստոնէութեան մասին: Ծնողներ յաճախ կը պարծենան իրենց զաւակներու գիտութեամբ, առանց հարցականի առնելու թէ ինչ գիտեն անոնք Եկեղեցւոյ, Հաւատքի եւ Քրիստոնէութեան մասին:

Այս մասին եւս զարգացնելու համար երախան, հայ կիներ ունի իր որոշ դերը մտածելով որ այսօրուան երախան վաղուան ընկերութիւնն է, եւ առողջ ընկերութեան մը հիմնաքարը առողջ եւ ամբողջական դաստիարակութիւնն է: Քրիստոնէական դաստիարակութիւնը կը սկսի շատ կանուխ եւ կը զարգանայ շատ պարզ եւ բնականօրէն, երբ մայրը կ'ուզէ զբաղիլ այդ մէկով: Մանկական գրականութեան ճոխ հաւաքածոներու մէջ տեղ գտած են անտարանական դրուագներով պարզեցւած պատմութիւններ, զորս կարելի է օգտագործել որպէս դաստիարակչական գործիք, զանոնք մանուկներուն պատմելով այլ պատմութիւններու կողքին:

Կիրակնօրեայ թէ աւանդական տօնական առիթներով, երախան եկեղեցի առաջնորդելով եւ օրուան խորհուրդին մասին խօսելով, երախան կը վարժուի եկեղեցի երթալու գաղափարին ու իր աճող տարիքին հետ կը սկսի աւելի ու աւելի հաղորդուիլ Եկեղեցիով, ու Անկէ բխող Խորհուրդներով:

Կիրակնօրեայ դպրոցները, նոյնիսկ իրենց սահմանափակ ժամերով մեծ ներդրում կը բերեն երախայի քրիստոնէական դաստիարակութեան մէջ, որուն համար պայման է որ ծնողքը եւ յատկապէս մայրը հաւատայ անոր արժէքին ու կարեւորութեան, եւ ուղղէ իր զակին քայլերը դէպի հոն:

Այս բոլորէն դուրս, երբ տարբեր պատճառներով կարելիութիւնը չկայ այս միջոցները օգտագործելու, կը մնայ տակաւին մայրը ինքը որ ամէն ինչ է իր զակին համար: Մայրը իր պատմութիւններով, խօսքով եւ իր գործով կրնայ դաստիարակել իր զաւակը, որ ան տեղեակ ըլլայ քրիստոնէութեան մասին եւ փորձէ զայն սեփականացնել, իրացնել ու աճիլ քրիստոնէական ըմբռնումներով:

Գիտութեան ստեղծած թոհուփոհին մէջ, երախան հաւասարակշռելու եւ իբր մարդ կերտելու կարեւորագոյն ազդակն է քրիստոնէական դաստիարակութիւնը, որու գլխաւոր դերակատարը կը մնայ մայրը: Իսկ հայութեան համար, երբ հայ ըլլալն ու մնալը կեանքի մէջ յաւելեալ պայքար մըն է, աւելի կը շեշտուի եւ կ'ազնուանայ հայ մօր դերակատարութիւնը քրիստոնէական դաստիարակութեան մարզին մէջ, նկատի առնելով որ մեր պատմութեան մէջ մեր եկեղեցին եղած է եւ է հայու գոյատեւման կարեւորագոյն կոտանը:

S.Թ.

ԳՈՎԵՐԳ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Այս ի՞նչ հրաշք Աստուած իմ, տասնեւեօթ երկար դարեր,
Գմբէթաւոր՝ սրբատաշ վեհաշուք վեմին վերել,
Յաւերժապէս բոցկլտաց կանթեղը մեր հաւատքին,
Հայ սերունդներն օծելով Հոգւովը Սուրբ Միածնին:

Այս քանի՞ դար, ով Աստուած, քանի՞ հարիւրամեակներ,
Լուսաւորչի մեզ ձօնած եկեղեցին հայակերտ
Կեանք պարգեւեց յաւիտեան՝ հրաշունչ կենդանութիւն
Երիտասարդին ու մանկան, ծերին նաեւ պատանւոյն:

Եւ ո՞վ գիտէ դեռ քանի, քանի՞ հարիւրամեակներ,
Ներքել այս կամարներուն սրբաճաճանչ, լուսակեզ
Ճառագայթէ ու ցոլայ, ցնցէ պիտի, սասանէ
Հայ մարդուն ու ծոռներուն աղօթող հոգին անեղծ:

Ահա այսօ՛ր տակաւին երդւեալներն այս սուրբ տան
Կու գան հլու, գլխահակ հաղորդուելու ջինջ արեամբն
Աստուածառաք Միածնին ու սրբոց մեր Հայազարմ,
Եւ մենք՝ եւս ո՞վ Աստուած ծոռները մեր սուրբ նախնեաց:

Ներսէս Հատիտեան